Նվիրում եմ հորս՝
Հարություն Միհրանի
Հարությունյանի
պայծառ հիշատակին

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՀԱՅ - ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

/մ.թ.ա. VII-VI դ.դ./

«Հայագիտակ»
ԵՐԵՎԱՆ 1998

ԳՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)2
Հ 422

Հարությունյան Բ.Հ.
Հ 422 Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (*մ.թ.ա. VII-VI դ.դ.*): -Եր.: Հայագիտակ, 1998, 90 էջ:

Աշխատությունը նվիրված է Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի պատմության մ.թ.ա. VII – VI դարերի մի քանի հիմնախնդիրների քննությանը:

Հեղինակն, օգտագործելով առկա աղբյուրագիտական նյութը, լուսաբանում է Հայաստանի պատմությունը Առաջավոր Ասիայի քաղաքական պատմության լայն հենքի վրա, ինչպես նաև հայ-սկյութական, հայ-մարական, հայ-պարսկական հարաբերությունները:

Աշխատությունը նախատեսված է հայագետների, արևելագետների, ուսանողության և հայագիտությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

Հ $\frac{0503020913}{786(01)-98}$ 98 ԳՄԴ 63.3(2Հ)2

ISBN 5-8079-1151-9

© ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի մ.թ.ա. VII-VI դդ. պատմությունն իր մի շարք կողմերով շարունակում է առեղծված մնալ պատմագիտության համար: Քաղաքական լուրջ տեղաշարժերը, որոնք հանգեցրին Ասորեստանի աշխարհակալ տերության և Վանի հզոր թագավորության կործանմանը և Առաջավոր Ասիայում հաստատեցին երկու նոր ռազմատենչ պետությունների՝ Մարական թագավորության ու Քաղդեական Բաբելոնիայի գերիշխանությունը, միաժամանակ քաղաքական թատերաբեմ դուրս բերեցին Վանի թագավորության փլատակների վրա ծնունդ առած մի նոր պետություն, որին բախտ էր վիճակված դարեր շարունակ կարևոր դեր խաղալու Առաջավոր Ասիայի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքում: Պետության բնակիչներն այն կոչում էին Հայաստան կամ Հայք, իսկ հարևանները՝ Արմինա կամ Արմենիա: Հայքի կամ Հայոց թագավորությունը ստիպված էր ծանր պայքար մղելու իր հարևանների դեմ հանուն քաղաքական անկախության, որի առաջին փուլում պետության համար առանձնակի կարևորություն էին ներկայացնում հայ-մարական քաղաքական հարաբերությունները:

Հայ-մարական հարաբերություններն ունեն հինավուրց պատմություն: Ամեն ինչից դատելով, հայ-մարական հարաբերությունների վաղնջագույն շրջանը բարեկամական էր, սակայն Հին Մարաստանի աշխարհակալ տերության վե-

ռածվելու հետևանքով, որը տեղի ունեցավ վերջինիս և Քաղդեական Բաբելոնիայի կողմից Ասորեստանյան տերությունը կործանելուց հետո, հայ-մարական հարաբերությունների բնույթը արմատապես փոխվեց: Եթե հայ-մարական քաղաքական առնչությունների առաջին փուլում Մարաստանը որոշակի շահագրգռություններ ուներ Հայաստանի հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու և դաշնակցելու հարցում, ապա հզորացման ուղին բռնելուց հետո Հայոց թագավորությանը սկսեց վերաբերվել որպես իր ծավալապաշտական քաղաքականությանը խոչընդոտող ուժի, որը փաստորեն պատնեշում էր մարերի առաջխաղացումը դեպի Փոքր Ասիա: Մեզ հասած կցկտուր տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ մարա-լյուդիական պատերազմի շրջանում, մ.թ.ա. 585 թ., երբ տեղի ունեցավ Հալիսի ճակատամարտը, որն անակնկալ ավարտվեց արևի խավարման պատճառով, Հայաստանն արդեն փաստորեն գտնվում էր մարական գերիշխանության ներքո:

Հայոց Պատմահայրը, անդրադառնալով հայ-մարական հարաբերություններին, նշում է, որ հայոց Տիգրան Երվանդյան թագավորը, «Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն , և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ: Որ և Կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան, և ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի և զկնեացս ըղձալի ինքն և ժամանակն իւր»[1]: Դժվար չէ տեսնել, որ Մովսես Խորենացին մարական լուծը թոթափելու պատիվը վերագրում է հայոց թագավոր Տիգրանին և պարսից թագավոր Կյուրոսին, ակնհայտորեն, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքից, առաջավոր դերը հատկացնելով առաջինին: Անշուշտ կարելի է վիճել որոշ դժվար ընկալելի խնդիրների շուրջը, թե, ինչպես ասենք, հայոց թագավորը դեռևս մ.թ.ա. VI դարում իշխել է հույներին[2], սակայն իր ամբողջության մեջ պատմիչի հաղորդումը, ինչպես շուտով կհամոզվենք, միանգամայն արժանահավատ է: Պատմահոր երկն այնուհետև հավաստում է, որ Տիգրան Երվանդյանի և մարերի թագավոր Աժդահակի միջև սկզբում հաստատվում են դաշնակցային հարաբերություններ և հայոց թագավորն իր քրոջը՝ Տիգրանուհուն կնության է տալիս Մարաց Աժդահակ թագավորին, սակայն վերջինիս կողմից դաշնակցային հարաբերություններ ու խնամիական կապեր հաստատելը լոկ նպատակ է ունեցել բթացնելու հայոց թագավորի զգոնությունը և հնարավորություն ստանալ նրան սպանելու համար[3]: Մարաց թագավորին խորապես անհանգստացնում է Կյուրոսի դեպի Տիգրանն ունեցած բարեկամությունը[4] և Խորենացու հաղորդմամբ «էր, ... յաւուրսն յայնոսիկ ոչ սակաւ ինչ վտանգ՝ որ ի Մարացն Աժդահակայ ի միաբա-

[1] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս , 1913, Գիրք Ա, գլ. ԻԴ /ԻԵ/:

[2] Առաջին տպավորությունն այն է, որ այս տեղեկությունը վերաբերում է, ըստ երևույթին, Տիգրան Մեծին, որը Սելևկյանների պետությանը տիրելուց հետո իշխանություն ձեռք բերեց հույների վրա: Սակայն, մեր կարծիքով, Պատմահայրը այդ տեղեկությունը վերագրում է ոչ թե Տիգրան Երվանդյանին, այլ Կյուրոս Մեծին և միայն հետագայում գրիչները սխալ ընկալելով այս հաղորդումը, այն աղավաղել են: Սկզբնապես բնագրում եղել է ոչ թե «Որ և Կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր», այլ «Որ և Կիւրոսի աջակցեալ, /որ/ զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր»: Այս խմբագրությունը միանգամայն հավանական է, որովհետև համապատասխանում է պատմական իրականությանը, քանի որ Կյուրոսն իրոք տապալել է մարական տիրապետությունը և իր իշխանությունն է հաստատել փոքրասիական հույների վրա:

[3] Անդ:

[4] Անդ, Գիրք Ա, ԻԵ /ԻԶ/. «Բայց էր նիւթ այսպիսւոյ խոհականութեան դաշնաւորութիւն մտերմութեանն՝ որ ի Կիւրոսէ առ Տիգրան, յորմէ բազում անգամ և ախտ քնոյ ի բաց փախուցեալ լինէր յԱժդահակայ յիշատակաւս այսոքիկ»:

հետո երկար սպասված ճակատամարտը կայանում է և կռվի ժամանակ, ժողովրդական վեպի հաղորդմամբ, Աժդահակը սպանվում է. «Եւ զի՞ երկայնեմ զբանս. քանզի ի լինել մարտին նիզակաւ օրինակ իմն որպէս զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն՝ շամփրէ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին և յամփոփել միւսանգամ զձեռնն՝ արտաքս զկէս մասն թոքոյն հանդերձ զինուն ի դուրս բերէ: Բայց մարտն էր սքանչելի, զի քաջք դիպեալ քաջաց՝ ոչ - վաղվաղակի թիկունս ի միմեանց դարձուցանէին. վասն որոյ յերկարեալ քարշէր գործ պատերազմին մինչև ի ժամս ձիգս: Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աժդահակայ. և այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ՝ փառս յաճախէր Տիգրանայ»[8]:

Պատերազմից հետո Տիգրան Երվանդյանն իր քույր Տիգրանուհուն մեծ բազմությամբ արքայավայել ուղարկում է Հայաստան, նրան բնակության վայր տալով իր կառուցած Տիգրանակերտ ավանը և շրջակա գավառները: Եթե հավատանք պատմիչին, հայոց թագավորը մեծ գաղթականություն է բերում Հայաստան, ավելի քան տասը հազար մարդ, որոնց թվում էին Աժդահակի առաջին կին Անուշը, Աժդահակի սերնդից բազմաթիվ աղջիկներ և պատանիներ, որոնք բնակեցվում են Գողթնի սահմանից սկսած մինչև մեծ լեռան սպառվածը, այսինքն Մեծ Մասիս լեռը. «Իսկ զԱնոյշ, զառաջին կինն Աժդահակայ, և զբազումս ի սերմանէն Աժդահակայ աղջկունս, հանդերձ պատանեկօք և բազմութեամբ գերեացն, որչափ թէ աւելի քան զբիւր մի, բնակեցուցանէ յարեւելեայ ուսոյ մեծի լերինն մինչև ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժգոյնք, և որ այլք առ եզերբ գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախճաւանու. և զերիս աւանսն, զԽրամ և զՋուղայ և զԽորշակունիս իսկ ի միւս կողմանէ գետոյն, զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդանական

[8] Անդ:

մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանու: Բայց զնախասացեալ կինն Անոյշ բնակեցուցանէ որդւովք իւրովք յանդորրութեան սպառուածի փլածին մեծի լերինն: /Զորմէ լեալ ասեն յահագին իմն շարժմանէ, զոր պատմեն՝ որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ասպարիսօք զբնակութիւնս մարդկան չափեցին, այլ և մասն ինչ զծով և զանբնակ յայրեցածէն մինչև զՔիմիւռոն/: Իսկ պաշտօնեայս տայ Անուշայ ի նոյն Մարաց, որ առ ոտամբ լերինն բնակեցան»[9]:

Խորենացին, հենվելով թուելյաց երգերի վրա, որոնք հիշատակում էին Աժդահակի սերունդներին վիշապազուն անունով, փորձում է հիմնավորել մարական գաղթականության Հայաստան բերելը և միաժամանակ հայտնում է, որ «Այսպէս և բազումք անուանեալք Տիգրան. մի է և միայնակ սա ի Հայկազանցս, որ զԱժդահակ սպան և զտուն նորա ի գերութիւն վարեաց և զԱնոյշ մայրն վիշապաց. օժանդակ՝ կամօք և յօժարութեամբ զԿիւրոս ունելով՝ զիշխանութիւն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց»[10]:

Ի՞նչ եզրակացությունների կարելի է գալ Պատմահոր վերջին հաղորդումներից: Ամենայն հավանականությամբ, Տիգրան Երվանդյանի քույրն ամուսնացած է եղել Աժդահակի հետ, այլապես ժողովրդական վեպը այդ իրողությունը չէր նշի: Սակայն որչափ էլ պատվավոր տեղ զբաղեցներ արքունիքում, նա այնուամենայնիվ տիկնանց տիկին չի եղել: Ըստ երևույթին, այդպիսին նրան դարձրել է ժողովրդական վեպը: Համենայն դեպս, այլ աղբյուրներում այդ փաստի կատարյալ բացակայությունը չի խոսում հօգուտ Տիգրանուհու տիկնության: Պատահական չէ, որ ընդամենը մի քանի էջ անց Խորենացին նշում է, որ Աժդահակի առաջին կինը Անույշն էր: Ըստ որում արքունիքում առաջին կինը հենց բամբիշն էր կամ տիկնանց տիկինը և ոչ թե Աժդահակի մինչև Տիգրանուհին ունեցած կինը, ինչպես փորձում է

[9] Անդ, Գիրք Ա, գլ. Լ /ԼԱ/:
[10] Անդ, Գիրք Ա, գլ. ԼԱ /ԼԲ/:

ներկայացնել պատմիչը: Անույշի տիկնանց տիկին լինելու մասին է խոսում մասնավորապես նրա և նրա ընտանիքի հավանական գերեվարությունը Հայաստան, որի նպատակն էր թագավորական իշխանության հնարավոր հավակնորդներին զրկել հարազատ մարական միջավայրից և բացառել պարսկական տիրապետության դեմ մարական արքայատոհմի անդամների ելույթները:

Հետաքրքիր իրողություն է Տիգրանուհու Տիգրանակերտ ավանում բնակեցնելու խնդիրը: Անդրադառնալով այս փաստին, Ստ. Մալխասյանը գրել է. «Տիգրանակերտ քաղաքը շինել է Տիգրան Մեծը և ոչ Տիգրան Երվանդյանը, ինչպես ասում է Խորենացին: Սակայն սա սխալ չէ. ինչպես վերը տեսանք՝ Տիգրան Երվանդյանին վերագրված է շատ բան, որ սկզբնապես վերաբերվելիս է եղել Տիգրան Մեծին: Տիգրանակերտի շինությունն էլ պետք է համարել այդպիսի շփոթություններից մեկը»[11]: Ակնբախ է, որ Պատմահայրն իրոք Տիգրան Երվանդյանին է վերագրել Տիգրան Մեծին առնչվող մի շարք իրողություններ, սակայն, մեր կարծիքով, այս տեղեկությունը հազիվ թե կապ ունենա Տիգրան Մեծի հետ: Ուսումնասիրողներն աչքաթող են արել մի հասարակ ճշմարտություն, որ Տիգրան Երվանդյանի կառուցածը քաղաք չէ, այլ ավան[12], այսինքն հիշյալ տեղեկությունը ոչ մի կերպ չի կարող վերաբերվել Տիգրանակերտ մեծ մայրաքաղաքին: Հետևաբար այս հաղորդումը վերաբերում է մեկ այլ բնակավայրի, որը, հավանաբար, պետք է փնտրել Հայոց Արևելից կողմերի տարածքում: Հայտնի է, որ Ուտիքը հայոց թագավորների ծմեռոցն էր ոչ միայն Արշակունիների,

[11] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 473-474, ծան. 84: Տե՛ս նաև ծան. 79:

[12] Չնայած բնագրում որոշակիորեն «աւան» է նշված, Ստ. Մալխասյանն այն թարգմանել է «քաղաք» բառով, թերևս ազդվելով Մ. Աբեղյանից և այլ ուսումնասիրողներից /Անդ, էջ 98-99/:

այլև Երվանդյանների ժամանակաշրջանում[13]: Չնայած Խորենացին մասնավորապես չի նշում Ուտիքի ծմեռոց լինելը, սակայն այլ աղբյուրների համադրությունը ցույց է տալիս, որ Երվանդ վերջին թագավորը Արտաշես Ա-ի հետ վճռական կռիվներ տալուց առաջ գտնվել է Ուտիքի ծմեռոց վայրերում: Սեբեոսը Հերակլի արշավանքների հետ կապված հիշատակում է Տիգրանակերտ ավանը[14], որի ավերակները հայերի կողմից կոչվում են Թնգրնակերտ, իսկ եկվոր մահմեդականները անվանում են Թառնագյուտ: Հիշյալ ավանի ավերակների մերձակայքում գտնվում է մի հորդառատ աղբյուր, որն ուշ ժամանակներում մահմեդական բնակչությունը կոչում էր Շահ-բուլաղ, այսինքն Արքայի կամ Թագավորի աղբյուր: Ամենայն հավանականությամբ, անունս սոսկ թարգմանություն է հայերենից, որովհետև Երվանդյաններից սկսած հայոց թագավորների ծմեռոց-բնակատեղերից մեկը գտնվել է հենց այս ջրառատ վայրում և ի պատիվ արքայի կոչվել է *Արքայակն*: Մեր կարծիքով, Տիգրան Երվանդյանը հենց այս ծմեռոց վայրում կառուցել է իր անունը կրող ավանը, որտեղ և բնակեցրել է քրոջը:

Մտորումների տեղիք են տալիս Պատմահոր ներքոհիշյալ տողերը. «Այսպէս և բազումք անուանեալք Տիգրան, մի է և միայնակ սա ի Հայկազանցս, որ զԱժդահակ սպան, և զտուն նորա ի գերութիւն վարեաց և զԱնոյշ մայրն վիշապաց. օժանդակ՝ կամօք և յօժարութեամբ զԿիւրոս ունելով՝ զիշխանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց»: Տալիս ենք Ստ. Մալխասյանի թարգմանությունը, համաձայն որի Տիգրան Երվանդյանը՝ Կյուրոսին օժանդակ ունենալով, հափշտակել է Մարաց և Պարսից իշխանությունը. «Այսպես նաև շատերը կան Տիգրան անունով, բայց սա մեկ

[13] Մովսես Խորենացի, Գիրք Բ, գլ. ԽԴ: Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Գ.Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, § 28:

[14] Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ.Վ. Աբգարեանի, Երևան, 1979, էջ 125. «ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ աւանի»:

և միակն է Հայկազուններից, որ Աժդահակին սպանեց և գերի տարավ նրա տունը և Անուշշին, վիշապների մորը, Կյուրոսին, նրա բարի կամքով և հոժարությամբ, օժանդակ ունենալով՝ Մարաց և Պարսից իշխանությունը հափշտակեց»[15]: Մեր համոզմամբ, որքան մեզ հնարավորություն է տալիս ենթադրել բնագիրը, վերջինս Խորենացուց հետո ենթարկվել է որոշ սրբագրության: Հավանաբար այնտեղ նախապես եղել է ոչ թե «զԿիւրոս», այլ «Կիւրոս», իսկ Տիգրան Երվանդյանի գործունեության նկարագրությունն ավարտվել է «... զԱնոյշ մայրն վիշապաց» բառերով: Հետևաբար հաջորդող «Օժանդակ՝ կամօք և յօժարութեամբ Կիւրոս ունելով՝ զիշխանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց» նախադասությունը պետք է թարգմանել «/Տիգրանին/ Կյուրոսը, նրա կամքով և հոժարությամբ, օժանդակ ունենալով, հափշտակեց Մարաց և Պարսից իշխանությունը»: Այս փաստը այլ ձևով մեկնաբանելը հակասում է պատմական ճշմարտությանը, առավել ևս որևէ ձևով չի աղերսվում Տիգրան Մեծի պատմության հետ:

Պատմահոր և Քսենոփոնի «Կյուրոպեդիա» կամ «Կյուրոսի վարքը» աշխատության[16] տեղեկությունների համեմատական և համադրական քննությունը՝ կապված հիշյալ խնդրի ուսումնասիրության հետ, ի հայտ է բերում լուրջ տարբերություններ: Հարկ է նշել, որ պատմագիտության մեջ հույն պատմիչի հիշյալ բարոյախոսական երկը սովորաբար դիտվում է որպես վեպ և ոչ թե պատմություն, իսկ նրանում տեղ գտած պատմական փաստերի առկայության հարցը անտիկ աղբյուրագիտության առավել դժվար խնդիրներից մեկը[17]: Ըստ որում, նման մոտեցումը և մեկնաբանությունը բոլորովին էլ նոր չէ: Դեռևս անտիկ ժամանակներում «Կիւրոպեդիա»-ի շարադրանքը համարվում էր ազատ և ոչ պատմական բնույթի: Դրա առավել ցցուն արտահայտություններից մեկը պետք է համարել Կիկերոնի իր եղբորը՝ Կվինտոսին ուղղած նամակում արտահայտված այն միտքը, որ Քսենոփոնն իր հիանալի «Կյուրոպեդիան» գրել է ոչ թե պատմականորեն ճիշտ, այլ նպատակ ունենալով տալ արդար իշխանության պատկերը, որի չափազանց խստությունն իմաստասերի մոտ զուգակցվում է հազվագյուտ բարությամբ[18]: Այսուհանդերձ, այս համգամանքը չի խանգարել, որ ժամանակ առ ժամանակ որոշ ուսումնասիրողներ «Կյուրոպեդիա»-ի գրական շարադրանքի մեջ պատմական փաստեր փնտրեն և դրանցով հիմնավորեն հին Արևելքի պատմության այս կամ այն դրվագը, չնայած, տեղին է խոստովանել, որ հետազոտողների մեծ մասը «Կյուրոպեդիան» համարում է կեղծ պատմական երանգավորում ունեցող գործ[19]: Ակադ. Հ.Մանանդյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմաբաններից ոմանք ոչ մի արժեք չեն տալիս այս վեպին իբրև պատմության աղբյուրի, այնուհանդերձ, գրել է, որ նրանում արմենների վերաբերող տեղեկությունները չեն կարող լինել մտածածին ու հնարովի և իրենց մեջ որոշ չափով արտացոլում են պատմական իրականությունը: Ըստ հարգարժան հետազոտողի Քսենոփոնի հիշյալ երկում արմենների մասին տեղեկությունները վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Մեդական թագավորությունը հարկադրված էր զիջել իր գերիշխանությունը Անշանի թագավոր Կյուրոսին /558-550 թթ. նախքան մեր թվ./, որն առաջ մեդացիների վասսալն

[15] Սովսեպ Խորենացի, Հայոց պատմություն, աշխ. թարգմ., էջ 103:

[16] Xenophontis Cyropaedia, reconsuit Arnoldus Hug, Lipsiae, 1878. Xenophontis Institutio Cyri, Edidit W. Gemoll, Editionem correctiorem curavit J. Peters, Lipsiae, 1968.

[17] И. М. Дьяконов, История Мидии, От древнейших времен до конца IV века до н.э., М.-Л., 1956, էջ 28:

[18] Э.Д.Фролов, Ксенофонт и его "Киропедия", см. Ксенофонт, Киропедия, издание подготовили В.П. Боруховичи Э.Д. Фролов, Москва, 1977, էջ 257:

[19] F.K.Hertlein – W.Nitsche, Einleitung, -In: Xenophons Cyropädie, Bd. I, 4. Aufl.B., 1886, S.VI. H. R. Breitenbach, Xenophon – RE, 2. Reihe, Bd. IX, Hbbd. 18, 1967, սյունյակ 1709 և այլն:

էր[20]: Միանգամայն կիսելով Հ.Մանանդյանի հիշյալ տեսակետը, որ «Կյուրոպեդիա»-ի արմենիներին վերաբերող տեղեկություններն արտացոլում են պատմական իրականությունը, մեր կարծիքով, դրանք ցայսօր չեն ստացել իրենց ճիշտ լուսաբանությունը, որի հետևանքով հայոց պատմության հետվանյան թագավորության շրջանը էապես աղավաղվել է:

Արդ, որո՞նք են «Կյուրոպեդիա»-ի՝ Հայաստանին և հայերին վերաբերող տեղեկությունները: Համաձայն Քսենոփոնի մարական Աժդահակ թագավորի մահից հետո հաջորդում է նրա որդին՝ Կիաքսար Բ-ն, որից էլ Մարական թագավորությունը խաղաղ կերպով անցնում է Աքեմենյան Կյուրոս Բ Մեծ թագավորին[21]: Հանրահայտ փաստ է, որ Անշանի թագավոր Կյուրոսը պատերազմել է Աժդահակի դեմ, որը մարական զորքի ապստամբության պատճառով պարտվել է և գերի ընկել պարսից թագավորի ձեռքը: Դրանով Մարական պետությունը կործանվում է, իսկ մարերը կամավոր մտնում են պարսկա-մարական նոր դաշնակցության մեջ: Հասկանալի է, որ Աժդահակից հետո ոչ մի Կիաքսար Բ թագավորել չէր կարող, ուստի պատահական չէ , որ գիտական գրականության մեջ ընդհանուր ճանաչում է գտել այն միտքը, որ Կյուրոսի քեռի Կիաքսար Բ-ին Քսենոփոնը պարզապես հորինել է, նպատակ ունենալով անբարյացակամ և նախանձոտ մարական թագավորի կերպարին հակադրել Կյուրոսի՝ երանելի մարտիկի անձը[22]: Սակայն հետազոտողները, դժբախտաբար, իրենց հարց չեն տվել, թե ի՞նչ անհրաժեշտություն ուներ Քսենոփոնը ստեղծելու Կիաքսար Բ-ի կերպարը, երբ կարող էր պարզապես վերը նշված հատկանիշներով օժտել Աժդահակին: Ավելին, փոխանակ

[20] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Ա, Երևան, 1944, էջ 37-38:

[21] Xenophontis Cyropaedia, I, V, VIII, v.

[22] F. K. Hertlein – W. Nitsche. Einleitung. In: "Xenophons Cyropädie", Bd. I, S.X., H. R. Breitenbach. Xenophon.- RE, 2. Reihe, Bd. IX. Hbbd, սյունյակ 1709 ձախից:

խորանալու խնդրիս մեջ, ուսումնասիրողներն աչքաթող են արել այնպիսի մի կարևոր իրողություն, ինչպիսին Ասորեստանի բազմաթիվ հիշատակումներն են՝ կապված Կիաքսարի և Կյուրոսի գործունեության հետ: Հ. Բրայտենբախը, անդրադառնալով Քսենոփոնի «որոշ ժամանակ անց Մարաստանում մահացավ Աստիագեսը և թագավորական գահ բարձրացավ Աստիագեսի որդի, Կյուրոսի մորեղբայր Կիաքսարը: Ասորեստանի թագավորը, ենթարկելով բոլոր ասորիներին /սիրիացիներին/ [անսովոր մեծաքանակ ժողովուրդ] և հպատակեցնելով արաբների թագավորին, հնազանդեցնելով վրկաններին ու պաշարելով բակտրիացիներին, որոշեց այդ ժամանակ, որ եթե ինքը թուլացնի մարական թագավորությունը, ապա նրան կհաջողվի իր տիրապետությունը հաստատել հարևան /շրջակա/ բոլոր ժողովուրդների վրա» հաղորդմանը, կարծում է, որ ասորեստանյան թագավորի անվամբ Քսենոփոնը պատկերել է Նոր Բաբելոնի կամ Քաղդեական Բաբելոնիայի վերջին տիրակալին, քանի որ Ասորեստանը որպես պետություն դադարել է գոյություն ունենալուց մ.թ.ա. VII դարի վերջին[23]:

Առաջին հայացքից ամեն ինչ հարթ է ստացվում, սակայն այնուամենայնիվ պատասխան չեն ստանում այն հարցերը, թե ի՞նչ կարիք ուներ հույն պատմիչը նոր Բաբելոնի թագավորին ներկայացնելու որպես Ասորեստանի արքա և ի՞նչ անհրաժեշտություն կար, երբ այլևս գոյություն չուներ Ասորեստանը որպես պետություն, Կիաքսարին ու Կյուրոսին համարել վերջինիս կործանողներ: Վերջապես, Նոր Բաբելոնի թագավորը ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է իրեն ենթարկեր վրկաններին ու պաշարեր բակտրացիներին, որոնք գտնվում էին նրա դաշնակից մարական թագավորի

[23] H.R. Breitenbach, Xenophon. – RE, 2. Reihe, Bd. IX, Hbbd. , սյունյակ 1710: Է.Դ. Ֆրոլովը Ասորեստանի պատերազմը մարերի դեմ, որ տեղի է ունեցել իբրև թե Կյուրոսի մանկության շրջանում, համարում է Քսենոփոնի մաքուր հորինվածքը /Э.Д. Фролов, Ксенофонт и его "Киропедия", примечания, էջ 292/:

իշխանության ներքո: Ինչպես դժվար չէ տեսնել, հարցն ավելի բարդ է և պահանջում է լուրջ քննություն և ամեն ինչ չէ, որ կարելի է բացատրել Քսենոփոնի գրական հնարանքներով կամ սովորական հորինմամբ:

Քսենոփոնի հավաստմամբ, «Երբ Հնդիկները[24] դուրս գնացին՝ Կյուրոսն ասաց Կիաքսարին հետևյալը ... Ես հիշում եմ, որ մի փոքր առաջ քեզանից լսել էի, որ Արմենների թագավորը քեզ այժմ արհամարհում է, որովհետև նա իմացել է, որ թշնամիները հարձակվելու են մեզ վրա. և նա ոչ զորք է ուղարկում, ոչ էլ տուրք է վճարում, որ պարտավորվել էր տալ»: Նա իրոք այսպես է վարվում, ով Կյուրոս,- ասաց Կիաքսարը,- ուստի և ես տատանվում եմ և չգիտեմ՝ թե ինչն է լավ՝ պատերազմել ու փորձ անել հարկադրելու նրան, թե ավելի ձեռնտու է՝ հանդուրժել ներկա դրությունը, որպեսզի մյուս թշնամիների վրա չավելացնենք և այս թշնամուն»: Եվ Կյուրոսը նորից հարցրեց.«Իսկ նրա բնակավայրերը արդյո՞ք ամուր տեղերում են, թե գուցե նաև մատչելի տեղերում»: «Բնակավայրերը,- ասաց Կիաքսարը,- շատ ամուր տեղերում չեն և ինձ այդ չի անհանգստացնում. կան սակայն լեռներ, ուր նա իսկույն կարող է գնալ ու վտանգից ազատվել. եթե մեկը մոտ նստած չպաշարի նրանց, ինչպես այդ արել էր իմ հայրը[25]»: Կյուրոսը, որ ըստ հույն պատմիչի վկայության Աքեմենյան պետության հիմնադիր Կյուրոս Մեծն է, խնդրում է, Կիաքսարից բավական թվով հեծելազոր և խոստանում հայոց թագավորին ստիպել ենթարկվելու մարական պետությանը և նախկինի պես վճարելու հարկ ու տրամադրելու զինված ուժեր: Թե իրականում ինչպես է հաջողվում Կյուրոսին հաղթել հայոց թագավորին, ցավոք, պատմությունը մեզ չի պահպանել: Քսենոփոնի ավանդախառն պատմությունից լոկ կարելի է եզրակացնել, որ Կյուրոսը դիմում է ռազմական խորամանկության և որսի պատրվակով մուտք է գործում Հայաստան ու՝ օգնական մեծաթիվ զորք ստանալով Կիաքսարից, հարձակվում է հայերի վրա[26]: Հայոց թագավորը, որ հրաժարվել էր մարական թագավորին հարկ ու զորք տալուց և ապստամբության նպատակով ամրացրել էր իր աթոռանիստի ամրությունները, փորձում է դիմադրություն կազմակերպել: Նա ուշացումով սկսում է իր ուժերը հավաքել, կրտսեր որդուն Սաբարիսին /գուցե՞ Շավարշ/ իր և որդու կանանց հետ և աղջիկներին ուղարկում է լեռները, կազմում է մարտակարգ: Սակայն նախապատրաստությունները բավարար չէին, ուստի Կյուրոսին հաջողվում է հաղթել հայերին, գերի վերցնել թագավորի որդուն, արքունի կանանց և աղջիկներին: Հայոց թագավորը ամրանում է մի բլրի վրա և շուտով ստիպված է լինում հանձնվել թշնամու ողորմածությանը[27]: Բանակցությունների ժամանակ հայոց թագավորը Կյուրոսի այն հարցին. «Ասա ինձ ... կռվե՞լ ես դու երբևիցե իմ մորհոր, Աստիագեսի, և այլ մարերի դեմ», դրական պատասխան է տալիս, իսկ մյուս հարցին՝ «Հաղթված լինելով նրանից՝ համաձայնե՞լ էիր, որ տուրք կվճարես, պատերազմի կգնաս միասին, ուր նա ասի, և ամրություններ չես ունենա» հետևում է «Այդպես է» պատասխանը[28]: Կյուրոսի նոր հարցին, թե «Արդ՝ ինչո՞ւ այժմ ոչ տուրք ես վճարում, ոչ զորք ես ուղարկում և սկսել ես ամրություններ շինել» հետևում է հայոց թագավորի «Ես ... ազատության էի ձգտում, որովհետև լավ էի համարում, որպեսզի թե ինքս ազատ լինեմ և թե որդիներիս ազատություն թողնեմ»[29] հիասքանչ պատասխանը, որը հավաստում է հայերի ազատասեր ոգու մասին այդ վաղնջական ժամանակներում:

[24] Հնդիկներն ըստ «Կյուրոպեդիա»-ի հնդկաց թագավորի դասպաններն էին, որոնք կամենում էին պարզել, թե ինչ պատճառով է պատերազմ սկսվել մարերի և ասորեստանցիների միջև /Xenophontis Cyropaedia, II, IV, 6-8/:

[25] Xenophontis Cyropaedia, II, IV, 12-13:

[26] Անդ, II, IV, 14-32:

[27] Անդ, III, I, 1-6:

[28] Անդ, III, I, 10:

[29] Անդ, III, I, 10:

Շուտով բանակցություններին միանում է հայոց թագավորի Տիգրան անունով որդին, որը ժամանակին Կյուրոսի որսընկերն էր[30] եղել, և նրա միջնորդությամբ կնքվում է հաշտություն՝ ներքոհիշյալ պայմաններով: Հույն պատմիչի հաղորդմամբ, Կյուրոսն իմանալով Հայաստանի ռազմուժի մեծության մասին, որը բաղկացած էր 8000 հեծյալ և 40000 հետևակ զինվորներից, և արքունի հարստությունների վերաբերյալ, որոնք կազմում էին արծաթ դրամով 3000 տաղանդից ավելի, պահանջում է, որ նա զորքի կեսը ուղարկի Մարաց թագավորին օգնություն, Կիաքսարին վճարի նախկին 50 տաղանդի փոխարեն կրկնակի հարկ և իրեն էլ պարտք տա 100 տաղանդ. «Որովհետև քո դեմ պատերազմում են հարևան Խալդայները՝ զորքից ինձ հետ կուղարկես կեսը, իսկ փողից, որովհետև չես վճարել Կիաքսարին տուրքը՝ հիսուն տաղանդի փոխարեն, որ նրան վճարում էիր՝ կտաս կրկնակին: Ինձ ևս, ասաց, կտաս իբրև պարտք հարյուր տաղանդ»[31]:

Կյուրոսի գործունեությունը Հայաստանում դրանով չավարտվեց: Նա իր զինված ուժերով օգնում է հայոց թագավորին հաղթելու հարևան խալդայներին, որոնք՝ համաձայն «Կյուրոպեդիա»-ի, վայրենի բարբարոս ցեղեր էին և մշտապես հարձակվում էին հայկական բնակավայրերի վրա, որի հետևանքով Հայաստանի մի խոշոր մասը դարձել էր անմշակ ու անմարդաբնակ[32]: Կյուրոսի միջնորդությամբ հաշտություն է կնքվում հայերի և խալդայների միջև, պայմանով, որ հայերը կարող են օգտվել խալդայների լեռնային արոտավայրերից, իսկ վերջինները՝ հայերի դաշտերից, փոխադարձաբար վճարելով դրա համար: Կյուրոսը, եթե հավատանք Քսենոփոնի ավանդախառն պատմությանը, որպեսզի կողմերը միմյանց նկատմամբ որևէ ձևով գերակայություն չստանան, իր վերահսկողության տակ պահեց լեռնագագաթները, այլ խոսքով, Հայաստանի, ինչպես նաև խալդայների որոշ բերդեր ու ամրոցներ զբաղեցվել են մարական կայազորների կողմից: Միաժամանակ հայերի օգնությամբ նա ամրոց կառուցեց հայերի ու խալդայների սահմանակցության վրա: Հայերի և խալդայների միջև ձեռք բերվեց մի կարևոր համաձայնություն ևս, որով թույլատրվում էր ամուսնությունը նրանց միջև, սահմանվում էր հողերի ու արոտավայրերի փոխադարձ օգտագործման կարգը և կնքվում էր պաշտպանական դաշինք այն դեպքի համար, եթե կողմերից որևէ մեկը ենթարկվեր արտաքին հարձակման[33]: Հույն պատմիչի հավաստմամբ, մ.թ.ա. V դարի վերջին Հայաստանի տիրակալի և խալդայների միջև կնքված համաձայնությունները դեռևս շարունակում էին ուժի մեջ մնալ[34]:

«Կյուրոպեդիա»-ի հետագա շարադրանքից պարզվում է, որ հայոց թագավորը Կյուրոսին հանձնեց մի մեծ բանակ, որը նրա հետ ուղևորվում է Մարաստան[35]: Դրանից հետո Կիաքսարը և Կյուրոսը արշավանք են ձեռնարկում ասորեստանցիների և նրանց դաշնակիցների դեմ[36]: Մարա-պարսկական բանակը ծանր ճակատամարտից հետո հաղթում է ասորեստանցիներին և որոշում պատերազմը տեղափոխել թշնամու տարածքը[37]: Ահա այդ ժամանակ Կյուրոսին են ներկայանում վրկանների կամ հյուրկանների դեսպանները: Ըստ պատմիչի վրկանները փոքրաթիվ ժողովուրդ էին, ասորեստանցիներին սահմանակից և ենթակա: Նրանց զորամասը, որ գտնվում էր ասորեստանցիների բանակում, որոշում է, եթե Կյուրոսը համաձայն է, անցնի մարերի կողմը և հարձակվի վերջիններիս հետ մեկտեղ իրենց նախկին

[30] Անդ, III, I, 7:
[31] Անդ, III, I, 33-34:
[32] Անդ, III, II, 1-10:

[33] Անդ, III, II, 11-23:
[34] Անդ, III, II, 24:
[35] Անդ, III, III, 4-5:
[36] Անդ, III, III, 20-70:
[37] Անդ, IV, I, 1-11:

գերիշխողների վրա: Կյուրոսը մարա-պարսկական և Տիգրանի հայկական զորքերով ու նրանց միացած վրկանների զորամասով հարձակվում է նահանջող ասորեստանցիների վրա և նրանց ծանր պարտության է մատնում[38]: Հետագա մարտական գործողությունների ժամանակ Արտաբազը առաջնորդում է պարսից պելտաստներին և նետաձիգներին, մար Անդամմյուասը՝ մարական հետևակը, Էմբասը՝ հայկական հետևակը, Արտաքսոսը՝ վրկաններին, Թամբրադասը՝ սակերի հետևակը և Դատամասը՝ կադուսիներին /կատիշներին –Հ.Բ./[39]: Նախորդ իրադարձություններից բխում էր, որ հավաքված զորքերը պետք է հարձակվեն Նինվեի կամ նրան մերձակա քաղաքներից մեկի վրա, սակայն ըստ հույն պատմիչի պաշարվում է Բաբելոնը: Դրան հետևում է մի զարմանահրաշ իրողություն ևս: Պարզվում է, որ ասորեստանցիների ու նրանց դաշնակիցների զորքերի գլխավոր հրամանատարն է դառնում Կրեսոսը՝ Լյուդիայի թագավորը, որը վարձում է մեծ թվով թրակացիների, նրան են միանում բոլոր կիլիկեցիները, երկու Փռյուգիաների զորամասերը, լիկաոնցիները, պափլագոնցիները, կապադովկացիները, արաբները, փյունիկեցիները և «Բաբելոնի տիրակալի հետ մեկտեղ ասորեստանցիները»[40], պատրաստվում են օգնության գալ կիպրացիները և եգիպտացիների 120000-ոց բանակը: Կրեսոսը փորձ է անում բանակցելու Լակեդեմոնի հետ և դաշինք կնքել: Դաշնակիցների զորքը հավաքվում է Պակտոլ /ներկայումս՝ Սարաբատ/ գետի մոտ,նպատակ ունենալով շարժվել Ասիայի Թիմբրարք քաղաքը[41], իսկ Կյուրոսը մարա-պարսկական և դաշնակիցների զորքով նրանց պարտության է մատնում Փոքր Ասիայում: Գերի ընկած եգիպտացիները, որոնք ճակատամարտում աչքի էին ընկել իրենց խիզախությամբ,Կյուրոսը բնակեցնում է Լարիսա և Կիլլենա քաղաքներում, որոնք գտնվում էին Փոքր Ասիայում, ծովափին, Կիմեի մերձակայքում[42]: Կրեսոսը ստիպված իր զորքերով փախչում է Սարդես քաղաքը, որին մոտենում է Կյուրոսի բանակը և կարճ կռվից հետո տիրում է քաղաքին: Վերջինիս գրավմանը մասնակցում են խալդայները: Հարձակվողների ձեռքը գերի է ընկնում Լյուդիայի թագավոր Կրեսոսը[43]: Մարա-պարսկական զորքերն իրենց են ենթարկում Հելլեսպոնտական Փռյուգիան և այնուհետև Սարդեսից շարժվում են Բաբելոն, որը շուտով գրավվում է նրանց կողմից: Բաբելոնում հարցերը կարգավորելուց հետո Կյուրոսը վերադառնում է Մարաստան, ներկայանում է Կիաքսարին և հայտնում, որ նրա համար նվաճված քաղաքում պալատ է հատկացված բոլոր ծառայություններով, ուր նա կարող է հարկավոր դեպքում կանգ առնել: Կիաքսարը ստանում է Կյուրոսից բազմաթիվ նվերներ և իր հերթին կնության է տալիս Կյուրոսին իր դստերը, ասելով, որ Կյուրոսի հայրը իր ժամանակին ամուսնացել է իր հոր դստեր հետ[44]: Կյուրոսը, հայտնելով իր շնորհակալությունը խնամիանալու առաջարկի համար, կամենում է այդ ընդունել իր ծնողների համաձայնությունն ստանալուց հետո, իսկ Կիաքսարն էլ իր դստերը որպես օժիտ տալիս է Մարաստանը, քանի որ արական գծով օրինական ժառանգներ չունի[45]: Ծնողները տալիս են իրենց համաձայնությունը, իսկ հայրը՝ Կամբյուսեսը նրան է կտակում իր թագավորությունը իր մահվանից հետո[46]: Այս ամենից հետո Կյուրոսը ուղևորվում է Բաբելոն և նվաճված երկրներում սատրապներ է նշանակում: Կիլիկիայում, Կիպրոսում և Պափլագոնիայում սատրապներ չեն նշանակվում,

[38] Անդ, IV, ii, 1-33:
[39] Անդ, V, iii, 38:
[40] Անդ, V, iii, 5, 8, 45; iv, 15, 24, 34; vi, I, 25: ii, 10:
[41] Անդ, VI, ii, 10-11:

[42] Անդ, VII, i, 41-45:
[43] Անդ, VII, ii, 1-5:
[44] Անդ, VII, iv, 8-11; v, 1, 20-36; viii, v, 17-19::
[45] Անդ, viii, v, 19-20:
[46] Անդ,V III, v, 22-27:

որովհետև վերջինները կամավոր մասնակցել էին դեպի Բաբելոն կատարված արշավանքին, սակայն նրանց վրա տուրքեր են դրվում[47]: Կյուրոսը իր ծմեռային աթոռանիստն է դարձնում Բաբելոնը, որտեղ անցկացնում է տարվա յոթ ամիսը, գարնան երեք ամիսներին բնակվում է Սուզայում կամ Շոշում, իսկ ամառվա շոգ երկու ամիսները՝ Եկբատանայում[48]: Մահվանից առաջ նա թագավորությունը թողնում է Կամբյուսեսին՝ ավագ որդուն, իսկ Տանառքսարը նշանակվում է մարերի, հայերի և կատիշների սատրապ[49]:

Մենք ստիպված եղանք բավականին հանգամանալից անդրադառնալ Կյուրոսի ողջ գործունեությանը, ինչպես մեզ հավաստում է «Կյուրոպեդիան»: Այժմ փորձենք վերլուծել ու լուսաբանել նշված տեղեկությունները: Ամենից առաջ հարկ է նշել, ինչպես կհամոզվենք հետագա շարադրանքից, ի դեմս «Կյուրոպեդիա»-ի գործ ունենք մի բարդ և բազմաշերտ փաստաթղթի հետ, ըստ որում վերջինս որքան էլ ներկայանում է որպես գրական երկ, այնուամենայնիվ խարսխված է որոշակի պատմական հենքի վրա: Այն ամենը, ինչ առաջին հայացքից արտառոց է այլ սկզբնաղբյուրների լույսով, ոչ այլ ինչ է, եթե ոչ հեղինակի կողմից իրեն հասած ավանդությունների տեղեկությունները հաշտեցնելու արդյունք:

Համաձայն «Կյուրոպեդիա»-ի, հայերի ելույթը ճնշելուց հետո Կյուրոսը շարժվել է Բաբելոն, ըստ որում մինչև Բաբելոնին տիրելը ստիպված է եղել պատերազմել Փոքր Ասիայում Կրեսոսի զորքերի դեմ: Այս վերին աստիճանի հակասական տեղեկությունները ստիպում են մտածել, որ հիշատակության Կյուրոսը ամենայն հավանականությամբ չի նույնանում Կյուրոս Բ Մեծին, որն ապրել և գործել է Աժդահակի ժամանակներում: Խնդիրն այն է, որ հույն պատմիչի

[47] Անդ, VIII, vi, 1-10:
[48] Անդ, VIII, vi, 22:
[49] Անդ, VIII, vii, 12:

Կիաքսար Բ-ն, ոչ թե սոսկ հորինված կերպար է, այլ նույնանում է Աժդահակի հորը՝ Կիաքսարին, որի օրոք գործել է Կյուրոս Մեծի պապը՝ Կյուրոսը: Քսենոփոնն, անշուշտ, այդ չի իմացել, ուստի հենց սկզբից նույնացնելով պարսից Չիշպիշ թագավորի որդի Կյուրոս Ա-ին վերջինիս թոռ, Կամբյուսես Ա թագավորի որդի Կյուրոս Բ-ի հետ, սակայն փորձելով հարազատ մնալ զրույցին, որտեղ Կյուրոսը գործում է Կիաքսար թագավորի օրոք և քաջ իմանալով, որ Կյուրոս Բ Մեծը Կիաքսարի ժամանակակիցը լինել չի կարող, ստիպված է եղել ստեղծել Կիաքսար Բ-ի անձը: Հավանաբար նման ստեղծագործության համար առիթ է ծառայել մի կարևոր տեղեկություն այն մասին, որ մարական գահին նստել են Կիաքսար անունով երկու թագավոր: Այս իրողությունը, որի մասին ավելի ուշ մենք դեռ կխոսենք, նրան հայտնի է դարձել ըստ երևույթին Պարսկաստանում՝ հունական բյուրի նահանջի ժամանակ:

Այս, առաջին հայացքից, աննշան իրողությունը, ինչպես կհամոզվենք, հեղաշրջիչ նշանակություն ունի հայոց և ոչ պակաս կարևոր նշանակություն պարսից պատմության համար: Ուսումնասիրողների կարծիքով Կյուրոս Ա-ն իշխել է մոտավորապես մ.թ.ա. 640-600 թթ., իսկ Կիաքսարը մ.թ.ա. 625-585 թթ.[50], հետևաբար հայերի հակամարական ապստամբությունը կարող էր տեղի ունենալ մ.թ.ա. 600 թվականից առաջ և 625 թվականից հետո: Սակայն, եթե նկատի ունենանք, որ հայերի ապստամբության ժամանակ դեռևս Ասորեստանյան տերությունը գոյություն ուներ, ապա նշված ժամանակահատվածը էլ ավելի է կրճատվում՝ ամփոփվելով 625-612 թթ. միջոցին, կամ էլ, որը բնավ չի բացառվում, 625-605 թթ. ժամանակահատվածում, այսինքն մինչև Կարքեմիշի նվաճումը և Ասորեստանյան տերության վերջնական կործանումը: Այս հանգամանքը, որքան էլ անսպասելի

[50] Э. Бикерман, Хронология древнего мира, Ближний Восток и Античность, Москва, 1975, перевод с английского И.М. Стеблин-Коменского, էջ 193:

և անընկալելի է մեզ համար, հարուցում է մեկ այլ խնդիր ևս: Եթե 612 կամ 605 թվից առաջ կար Հայոց թագավորություն, ապա գոյություն ունեցել է արդյո՞ք նշված ժամանակներում Վանի թագավորությունը: Անշուշտ հարցը խիստ խրթին է, ուստի փորձենք կցկտուր նյութի ընձեռած հնարավորությունների շրջանակներում բացել հանգույցը:

Հայոց ապստամբության հետ կապված աչքի է զարնում մի էական հանգամանք ևս: Քսենոփոնը, որ հաճույքով մեզ է մատուցում հայոց թագավորի երկու որդիների՝ Տիգրանի և Սաբարիսի անունները, անհասկանալի ձևով մոռանում է տալ հայոց արքայի անունը: Գոնե մեզ այս իրողությունը մշտապես զարմացրել է և ստիպել անընդհատ մտորել դրա շուրջը: Խորամուխ լինելով հարցին, մենք ներկայումս հակված ենք կարծելու, որ հայոց արքայի անունը մի դառը թյուրիմացության պատճառով աղավաղվել է, վերածվելով հասարակ անվան: Հույները հայերին կոչում են «*αρμε΄νιος* », ուստի, եթե մի պահ ընդունենք, որ հայոց արքայի անունը եղել է *Արամանի*, որին դեռ կանդրադառնանք, վերջինս հույնի ականջին հնչելու էր «*΄Αραμανι΄ος* » ու, տարակույս չկա, կարող էր շփոթվել «հայ» ինքնանվան հետ: Բավական է, որ «*΄Αραμανι΄ος* »-ը ընկալվեր «*΄Αραμενι΄ος* » կամ «*΄Αρμανι΄ος* » և Քսենոփոնը կդադարեր դրա մեջ հատուկ անուն տեսնելուց և այդ անունը կրող թագավորին էլ պարզապես կհամարեր «Հայոց թագավոր»: Նման ենթադրությունը, որքան էլ այն հավանական լինի, անշուշտ հարցի մի կողմն է, որովհետև անհրաժեշտ է ապացուցել, որ գոյություն է ունեցել նաև այդ անունը կրող թագավոր: Դրա համար ստիպված ենք դիմել սեպագիր աղբյուրների և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի օգնությանը:

Պատմահոր անզուգական երկը հավաստում է, որ Հայկյաններից «Այս Արամ, սակաւուք ամօք յառաջ քան զտիրելն Նինոսի Ասորեստանեայց և Նինուէի, նեղեալ յազգացն որ շուրջ զիւրեաւ՝ ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց, և որք ի տէգ նիզակի կամակարողք, նորատիք և հարուստք յոյժ և յաջողաձեռնութիւն իսկ, և երեսաւորք ի սիրտ և ի պատրաստութիւն պատերազմի, իբր թէ *բիւրս հինգ:* Պատահէ Մեդացւոցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւքար ոմն ասացեալ Մադէս, այր հպարտ և պատերազմասէր, որպէս ցուցանէ նոյն ինքն պատմագիրն, յեզերս սահմանացն Հայոց: *Որոց մի անգամ քուշանաբար հինիւ սմբակակոխ արարեալ զսահմանս Հայոց՝ ծառայեցոյց ամս երկուս.* Որում յանկարծօրէն ի վերայ հասեալ Արամ յառաջ քան զծագել արեգական՝ սատակեաց զբազմութիւն ամբոխիցն, և զնոյն ինքն զՆիւքարն զկոչեցեալն Մադէս ձերբակալ արարեալ ածէ յԱրմաւիր, և անդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսպին ցից վարեալ երկաթի ընդ ճակատն, յորմն վարսել հրամայէ, ի տեսիլ անցաւորաց և ամենայն եկելոց անդր և զաշխարհն նորա մինչև ի լեառնն անուանեալ Զարասպ՝ ի ծառայութեան հարկի կալաւ մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի[51]»: Նինոսը, որ ըստ հունական աղբյուրների[52] ամուսնացած էր Շամիրամի կամ Շամուրամաթի հետ, անկախ այն իրողությունից անունով նույնանում է թե ոչ ասորեստանյան թագավոր Շամշի-Ադադ Ե-ին, մ.թ.ա. IX դարի անձ է, քանի որ Շամիրամը, որի մասին տեղեկություններ է պահպանել նաև Մովսես Խորենացին[53], իրական դեմք է և 810 թ. իր ամուսին Շամշի-Ադադ Ե-ի մահից հետո գահաժառանգ Ադադներարի Գ-ի փոքրահասակության պատճառով փաստորեն կառավարել է Ասորեստանում: Այս առումով Արամը կարծես թե ինչ-որ չափով կապվում է վանյան թագավոր Արամեի անձի հետ: Սակայն մյուս

[51] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԺԳ:
[52] Դիոդորոս Սիկիլիացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս.Ա.Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 20-25:
[53] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԺԵ:

իրողությունը, համաձայն որի Արամը Նյուքար Մադեսին հաղթել է և սպանել,մտածել է տալիս, որ Պատմահոր Արամի կերպարի մեջ թաքնված է մեկ այլ գործիչ ևս, որովհետև Նյուքար Մադեսը նույնպես իրական դեմք է, որը գործել է մ.թ.ա. VII դարում, 50-40-ական թվականներին, թերևս դրանից էլ ավելի ուշ:

Հերոդոտոսի «Պատմություն»-ը հավաստում է, որ մարական ցեղերին միավորած Դեյոկեսի որդի Փրաորտեսը իրեն է ենթարկում պարսիկներին և արշավում ասորեստանցիների դեմ, որոնք իշխում էին Նինոսին կամ Նինվեին: Սակայն սրանց դեմ կռվում նա սպանվում է, զորքի մեծ մասը ոչնչանում է նրա թագավորության 22-րդ տարում: Փրաորտեսին հաջորդում է նրա որդի Կյուաքսարեսը, որը պատմիչի տեղեկությամբ ավելի ռազմամոլ էր իր նախորդների համեմատությամբ: Պատմությունը սրան է վերագրում կանոնավոր զորքի ստեղծումը, որով մարական բանակում հանդես եկան նիզակակիրների, աղեղնավորների և հեծյալ զորամասերը[54]: Հերոդոտոսը նշում է, որ «Սա նա է, որ լյուդիացիների դեմ պատերազմեց և այդ պատերազմի ժամանակ ցերեկը վերածվեց գիշերվա: Նա Հալյուս գետից այն կողմ գտնվող ամբողջ Ասիան միացրեց իր թագավորությանը: Գումարելով իր բոլոր հպատակներին, նա արշավեց Նինվե, իր հոր վրեժը լուծելու և այդ քաղաքը կործանելու նպատակով: Երբ նա արդեն ճակատամարտում հաղթել էր ասորեստանցիներին և պաշարել Նինվեն, /երկրի վրա/ հարձակվեց սկյութների մեծ բանակ, սկյութների թագավոր Մադյուեսի Պրոտոթյուեսի որդու առաջնորդությամբ: Նրանք ներխուժել էին Ասիա՝ կիմմերներին Եվրոպայից հալածելիս և, հետապնդելով փախչող կիմմերներին, նրանք հասել են մեդական երկիր:

Մեյոտիս լճից մինչև Փասիս գետը և կոլխերի երկիրը երեսուն օրվա ճանապարհ է անխոնջ ուղևորի համար: Կոլ-

[54] Herodoti historiarum libri IX, edidit L. Dindorfius, Parisiis, 1877, I, 101-103:

խիսից Մեդիա ավելին չէ ճանապարհը, բայց նրանց միջև նակվում է մի ազգ՝ սասպեյրները. սրանց միջով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա: Այսուհանդերձ, սկյութներն այս ճանապարհով չներխուժեցին Մեդիա, այլ շեղվեցին դեպի վերին, շատ ավելի երկար ճանապարհը՝ Կովկասլեռը ունենալով իրենց աջ կողմում: Այստեղ մեդացիները ճակատեցին սկյութների դեմ և մարտում պարտվելով, կորցրին իրենց իշխանությունը և սկյութները տիրացան ամբողջ Ասիային:

Այնուհետև նրանք շարժվեցին Եգիպտոսի վրա. և երբ նրանք հասան պաղեստինյան Սիրիա, Եգիպտոսի Պսամմետիքոս թագավորը դիմավորեց նրանց և ընծաներով ու աղերսներով համոզեց առաջ չընթանալ: Սկյութները վերադառնալիս հասան Սիրիայի Ասկալոն քաղաքը և նրանց մեծ մասը դրա կողքով անցնելով, ոչ մի վնաս չպատճառեց. իսկ նրանցից ոմանք, որոնք ետ էին մնացել, կողոպտեցին Ուրանիա Ափրոդիտեի տաճարը»[55]:

Հերոդոտոսը այնուհետև հայտնում է, որ «Սկյութները քսանութ տարի տիրեցին Ասիայում և իրենց բռնությամբ ու անկարգությամբ ամեն ինչ կործանման հասցրին: Բացի յուրաքանչյուր ժողովրդից վերցրած որոշակի հարկից, նրանք անցնում էին երկրով մեկ և հափշտակում ամեն ինչ: Ահա նրանց մեծ մասին Կյուաքսարեսը և մեդացիները հրավիրեցին խնջույքի և, հարբեցնելով նրանց, կոտորեցին. այսպիսով, մեդացիները նորից վերականգնեցին իրենց իշխանությունը, վերանվաճեցին իրենց նախկին տիրույթները և գրավեցին նաև Նինվեն. թե ինչպես գրավեցին այն, ես կպատմեմ մեկ այլ հատվածում և հպատակեցրին ասորեստանցիներին, բացի Բաբելոնիայի մարզից:

Այնուհետև Կյուաքսարեսը, որը թագավորել էր քառասուն տարի, ներառյալ նաև սկյութների տիրապետության

[55] Անդ, I, 103-105:

ժամանակը, վախճանվում է և թագավորությունը ժառանգում է նրա որդին, Աստյուագեսը»[56]:

Մադեսի մասին տեղեկություններ է պահպանել նաև Ստրաբոնի «Աշխարհագրությունը», որտեղ ասված է. «Սակայն կարիացիների, տրերների, տեվկրերի և գաղատների տեղափոխությունները /գաղթերը –Հ.Բ./, ճիշտ նույնպես ինչպես առաջնորդների դեպի հեռավոր երկրներ կատարած արշավանքների մեծ մասը /օրինակ՝ Մադիես Սկյութացու, Տեարկոն Եթովպացու, Կոբոս Տրերացու, եգիպտական Սեսոստրիսի և Պսամետիքոսի, ինչպես նաև Կյուրոսից մինչև Քսերքսեսը պարսիկների/ միատեսակ հայտնի չեն բոլորին: Եվ կիմմերները, որոնց տրերներ են անվանում / կամ կիմմերների ինչ-որ մի ցեղը/, հաճախ ներխուժում էին Պոնտոսի աջ կողմում գտնվող երկրները և նրանց մերձակա մարզերը, հարձակվելով երբեմն Պափլագոնիայի, երբեմն անգամ Փռյուգիայի վրա, երբ Միդասը, ինչպես պատմում են, ցլի արյուն խմելով, ընդառաջ գնաց իր ճակատագրին: Լյուգդամիսը այնուհանդերձ իր զինվորների գլուխ անցած հասավ մինչև Լյուդիա և Հոնիա ու գրավեց Սարդեսը, սակայն սպանվեց Կիլիկիայում: Այսպիսի ներխուժումներ հաճախ էին կատարում կիմմերները և տրերները: Ինչպես ասում են, տրերները և Կոբոսը ի վերջո քշվեցին սկյութների արքա Մադիեսի կողմից»[57]:

Ի.Մ.Դյակոնովը, անդրադառնալով սկյութների Այսրկովկասում հաստատվելու խնդրին, ցույց է տալիս, որ Հերոդոտոսի տեղեկությունները լիարժեք չեն: Նրա հաղորդման համաձայն, մարերի բախումը սկյութների հետ տեղի է ունեցել Կյուրոսի Աժդահակին հաղթելուց 75 կամ 103 տարի առաջ, այսինքն մ.թ.ա. 625 կամ 653 թթ., այն դեպքում, երբ աշկուզա-սկյութների առաջին հիշատակությունը վերաբերում է VII դ. 70-ական թթ., երբ սկյութները Իշպակայի գլխավորությամբ Մաննայի հետ դաշնակցած հանդես են գալիս Ասորեստանի դեմ [58]: Հարգարժան գիտնականը իրավացիորեն ցույց է տալիս, որ Հերոդոտոսը սխալվում է համարելով սկյութների մուտքը Այսրկովկաս կիմմերներին ուղղակի հետապնդելու արդյունք, քանի որ վերջինները այնտեղ հայտնվեցին դեռևս VIII դարի վերջին[59], իսկ հետապնդելու գաղափարը՝ ըստ Արտամոնովի, ծնունդ է առել փոքրասիական հույների շրջանում, կապված սկյութների կողմից կիմմերներին հաղթելու և դուրս քշելու հետ[60]:

Հերոդոտոսի մեկ այլ տեղեկության համաձայն, որին պատմիչն ավելի է հակված հավատալու, «Ասիայում բնակվող վաչկատուն սկյութները, պատերազմում նեղվելով մասսագետներից, անցել են Արաքս գետը և եկել կիմմերների երկիրը, քանզի ... այժմ սկյութների զբաղեցրած երկիրը անցյալում պատկանելիս է եղել կիմմերներին»[61]: Կիմմերների պառակտված համայնքը չի կարողանում դիմադրել սկյութներին, ուստի փախչելով նրանցից հաստատվում է այն թերակղզում, «որտեղ գտնվում է հելլենների հիմնած Սինոպէ քաղաքը: Հայտնի է նաև, որ սկյութները, կիմմերներին հետապնդելիս, շեղվել են ճանապարհից և ներխուժել Մեդական երկիր: Քանզի կիմմերները մշտապես շարժվում էին ծովափով, իսկ սկյութները նրանց հետապնդում էին Կովկասն աջ կողմում ունենալով, մինչև որ մտնում են Մեդական երկիր և շեղվում իրենց ուղուց դեպի Միջերկրեայքը: Այս զրույցը նույն ձևով պատմում են և հելլենները, և բարբարոսները»[62]: Սրան միանգամայն համահունչ են և

[56] Անդ, I, 106-107:
[57] Strabonis Geographica, recogn. A. Meineke, vol. I-III, Lipsiae, 1915-1925, I, III, 21:

[58] И.М. Дьяконов, История Мидии, էջ 245-246:
[59] Անդ, էջ 244, 286:
[60] Артамонов М.И., Киммерийцы и скифы, Л., 1974, էջ 28:
[61] Herodoti historiarum ..., IV, 11:
[62] Անդ, IV, 12:

շատ հետաքրքիր Դիոդորոս Սիկիլիացու տեղեկությունները, որոնք նա քաղել է Կտեսիաս Կնիդացուց. «Այժմ կխոսենք սկյութների մասին, որոնք ապրում են /Հնդկաստանին/ սահմանակից երկրում: Սրանք սկզբնապես բնակվելիս են եղել փոքր տարածության վրա, բայց հետագայում աստիճանաբար աճելով, իրենց հզորությամբ ու քաջությամբ ընդարձակ երկրներ նվաճեցին և իրենց ազգը բարձրացրին մեծ իշխանության և փառքի: Այսպես, նրանք սկզբում ընդհանրապես փոքր թվով բնակվում էին Արաքսես գետի մոտ և արհամարհված էին իրենց աննշան լինելու պատճառով, բայց քանի որ նրանց վաղագույն թագավորներից մեկը ռազմասեր էր և աչքի ընկնող ռազմավար, նրանք կարողացան նվաճել մինչև Կովկասյան լեռնային երկիրը, ինչպես նաև դաշտերը օվկիանոսի և Մայոտիս լճի երկայնքով և մնացած երկիրը մինչև Տանայիս գետը:

Հետագայում, ինչպես պատմում են սկյութական առասպելները, նրանց մոտ հայտնվեց հողից ծնված մի կույս, որի մարմնի վերին մասերը մինչև գոտկատեղը կանացի էին, իսկ ստորին մասերը՝ օձակերպ: Սրա հետ Զևսի կենակցելուց ծնվեց մի տղա Սկյութես անունով: Ու քանի որ սա առավել հայտնի դարձավ, քան իր նախորդները,ժողովուրդները նրա անունով կոչվեցին սկյութներ: ... Ինչ որ ժամանակ անց ... հետնորդներն իրենց արտակարգ քաջության և ռազմավարության շնորհիվ ընդարձակ երկիր նվաճեցին Տանայիս գետից այն կողմ, մինչև Թրակիա և իրենց զորքով արշավելով նաև մյուս կողմը, իրենց հզորությունը տարածեցին մինչև Նեղոս գետը Եգիպտոսում: Եվ ահա, /Թրակիայի և Եգիպտոսի/ միջև ընկած շատ հզոր ժողովուրդներ ստրկացնելով, նրանք սկյութների տիրապետությունը տարածեցին արևելքում մինչև օվկիանոսը, իսկ մյուս կողմում՝ մինչև Կասպից ծովն ու Մայոտիս լիճը: Քանզի այս ազգը շատ հզորացավ և անվանի թագավորներ ունեցավ, որոնց անունից էլ /ժողովրդի/ մեկ մասը կոչվեց սակեր, մեկ մասը՝ մասսագետներ, մեկ մասը՝ արիմասպներ և այսպես շատ ուրիշ /ցեղեր/: Այս թագավորների կողմից էր, որ նվաճված ժողովուրդներից շատերը վերաբնակեցվեցին և սրանցից երկուսը դարձան խոշոր գաղութներ: Մեկը կազմված էր ասսիրիացիներից, որոնք քշվել էին Պափլագոնիայի և Պոնտոսի միջև ընկած երկիրը, իսկ մյուսը կազմված էր Մեդիայից քշվելուց հետո Տանայիսի մոտ հաստատվածներից, որոնք կոչվեցին Սավրոմատներ»[63]:

Վերոբերյալ հաղորդումներից ու տեղեկություններից անշուշտ պետք է եզրակացնել, որ սկյութները, որոնց մարերը և պարսիկները սովորաբար «սակ» էին կոչում, սերում էին Միջին Ասիայի կողմերից և Ճորա պահակով կամ Դարբանդի անցքով ներխուժել են ու հաստատվել Այսրկովկասում: Նրանց հաջողվում է իրենց տիրապետությունը հաստատել Մարական երկրում, դատելով հիշյալ տեղեկություններից գուցե՞ նաև Հայկական լեռնաշխարհում և այնուհետև, անցնելով արևմուտք՝ դեպի Միջերկրեայք, հաղթել կիմմերներին:

Սկյութներն Այսրկովկաս ներխուժեցին կիմմերներից շատ չանցած, ուստի՝ ելնելով առկա կցկտուր նյութից, կարելի է ենթադրել, որ այդ տեղի է ունեցել հավանաբար մ.թ.ա. VII դարի սկզբներին: Համենայն դեպս ոչինչ չի հավաստում նրանց Այսրկովկասում ավելի վաղ հայտնվելու օգտին: Պատմագիտության մեջ այն կարծիքն է հայտնվել, որ Կովկասյան լեռնաշղթան անցել են ոչ թե սկյութական հորդաները՝ ընտանիքներով և անասունների հոտերով, այլ զինված ջոկատները[64]: Այս անշուշտ հետաքրքիր տեսակետը այնուամենայնիվ որոշ դժվարություններ է հարուցում, որովհետև մեր համոզմամբ, հազիվ թե նման պայմաններում սկյութները կարողանային այդպիսի կարևոր դեր խա-

---

[63] Diodori Bibliotheca historica, ex recons. L. Dindorfii, vol. I-V, Lipsiae, 1866-1868, II, 43, 1-7: Դիոդորոս Սիկիլիացի, էջ 44-45:

[64] И.М. Дьяконов, История Мидии, էջ 288: С.А. Есаян, М.Н. Погребова, Скифские памятники Закавказья, Москва, 1985, էջ 17:

ղալ Այսրկովկասում գրեթե մեկ հարյուրամյակ: Սակայն դրա հետ մեկտեղ ստիպված ենք ընդունել, որ Այսրկովկաս մուտք գործած սկյութների մեջ, ամենայն հավանականությամբ, մեծ թիվ են կազմել զինված ջոկատները, որոնց մարտիկները կանանց ոչ մեծաթիվ լինելու պատճառով ստիպված են եղել ամուսնանալ տեղական աղջիկների հետ, որը և արագացրել է նրանց ուծացումը:

Ի. Դյակոնովի կարծիքով Այսրկովկաս մուտք գործած սկյութներն անվանվել են *skυδα–*, քանի որ սեպագիր աղբյուրներում հանդիպող ašgasâi, iškusâi, Iškuza, Aškuz[65] տարընթերցումներում բառասկզբի a - կամ i - ձայնավորները սեմական լեզուներին հատուկ կրկնակի բաղաձայններից առաջ պահանջվող ձայնավորն է[66]: Իր միտքը շարունակելով, հարգելի սեպագրագետը ցույց է տալիս, որ հյուսիսսեմական լեզուները միջատամնային *δ* -ն արտահայտում են z հնչյունով: Խուլ *ϑ* -ն կարող էր արտահայտվել t -ի կամ š -ի միջոցով, ուստի հունական *skυϑa* -արտասանությունը կարծես թե հակասում է դրան: Սակայն Ի.Դյակոնովը, ելնելով այն իրողությունից, որ հունարենում մ.թ.ա. VII-VI դդ. դեռևս գոյություն չունեին ոչ միայն միջատամնային *δ* -ն, այլև հավանաբար շնչեղ dh -ն, գտնում է, որ հույները th -ի միջոցով արտահայտել են ոչ միայն միջատամնային խուլ *ϑ* -ն, այլև միջատամնային հնչեղ *δ* -ն: Առավել ևս, որ հունարենում բացակայում է «z» հնչյունը[67]:

Վս. Միլլերից սկսած տարածված է այն տեսությունը, որ skuthes անունը ծագումնաբանորեն կապվում է «սակ» անվանման հետ: Միլլերը գտնում էր, որ skuth-ը «sak» անվան հոգնակի ձևն է կազմված t-ի միջոցով[68]: Ն.Մառի են-

[65] Եբրայեցերենում aškuz-ը պահպանվել է s'knz սխալ գրությամբ:

[66] И.М. Дьяконов, История Мидии, էջ 242-243:

[67] Անդ, էջ 243:

[68] Вс.Ф. Миллер, Эпиграфические следы иранства на юге России, ЖМНП, 1886, окт., էջ 281:

թադրությամբ, որին հետագայում միացել է հմուտ իրանագետ Վ.Աբաևը, «սկյութ» անունն առաջացել է սկյութական Սկոլոտ ցեղի skul կամ skol անունից, որը բնակվել է Ուկրաինայի տարածքում: Ըստ Վ.Աբաևի skuth-ը sku [l]-ta-ն է, skul կամ skol ցեղանվան հոգնակի ձևը[69]: Այս տեսակետի հակառակորդ Ի.Դյակոնովը[70] հետագայում ընդունել է այն անվերապահորեն[71]: Թե ի՞նչ է նշանակում «սկյութ», մինչև այսօր էլ բանավեճի խնդիր է, որին բնականաբար մտադիր չենք անդրադառնալ: Այժմ լոկ նշենք, որ միանգամայն ընդունելի է Ի.Դյակոնովի ենթադրությունն այն մասին, որ «սկյութ» է կոչվել իրանական ցեղերից մեկը, որը մ.թ.ա. VIIդ. բնակվել է Հյուսիսային Կովկասում և այնուհետև ներխուժել է Առաջավոր Ասիա, որի շնորհիվ հանրաճանաչ դարձած այդ ինքնանունը հույները հետագայում տարածել են հյուսիսային քոչվոր ցեղերի վրա ընդհանրապես[72]:

Սկյութական ցեղերի Այսրկովկասում գտնվելու առաջին շրջանը ծածկված է պատմական խավարով: Արդյո՞ք - հենց սկզբից նրանք բախվել են Վանի թագավորության հետ և ստեղծել սեփական թագավորությունը, հայտնի չէ: Այնուամենայնիվ, մեզ հասած թեկուզ և պակասավոր նյութը, որը ոչինչ չի հաղորդում Վանի արքաների և սկյութների միջև մղված պատերազմների մասին, մտածել է տալիս, որ գոնե սկզբնական շրջանում, այնուամենայնիվ, հարաբերությունները թշնամական չեն եղել: Սակայն նորանոր սկյութական ցեղերի ու զինված ջոկատների մուտքը Այսրկովկաս էապես փոխում է ուժերի հարաբերակցությունը և նպաստում Սկյութական թագավորության ձևավորմանը:

Դարբանդի անցքով Այսրկովկաս ներխուժած սկյութներն անտարակույս սկզբնապես հաստատվեցին Կուր-Ա-

[69] В. Н. Абаев, Осетинский язык и фольклор, I, Термин "Скиф", էջ 243 և շար.:

[70] И.М. Дьяконов, История Мидии, էջ 243:

[71] И.М. Дьяконов, К методике исследований –В кн. "Этнические проблемы истории Центральной Азии в древности", М., 1981, էջ 99:

[72] И.М. Дьяконов, История Мидии, էջ 242 և շար.:

բաքսյան ընդարձակ տափարակում: Պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանում՝ Ուտիք աշխարհի հյուսիս-արևմտյան հատվածը նրանց անունով կոչվեց *Σακασηνή՝* կամ Շակաշեն, որն առաջացել է saka - šayana /թարգմանվում է «Սակերի բնակության վայր»/ անվանումից[73]: Սակայն հետագայում, ինչպես ցույց կտրվի այնուհետև, նրանք տարածվեցին նաև Մարաստանում, Հայաստանում ու Փոքր Ասիայում և իրենց հետքերը թողեցին տեղանունների մեջ:

Պատմությունը մեզ է հասցրել սկյութական երկու առաջնորդների անունները, որոնք VII դարի սկզբներին կարևոր դեր են խաղացել Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում: Շուտով նրանցից մեկին՝ Իշպակային, բախտ էր վիճակված միջամտելու Ասորեստանի և նրա գերիշխանության կամ ազդեցության ոլորտում գտնվող թագավորությունների ու ցեղերի միջև բռնկված պայքարին: Մյուսին, որը ասուրական աղբյուրներում հայտնի է Պարտատուա, հունականում՝ *Προτοθυ՛ες*, իսկ հայկականում՝ Պարույր անունով, հայկական ավանդական պատմությունը հռչակում է հայոց առաջին թագավոր:

Անդրադառնալով հայոց Պատմահոր երկում պահպանված անվանացանկերին, Հ.Կարագյոզյանը ցույց է տվել, որ թե մեկի և թե մյուսի անունը տեղ է գտել «Պատմութիւն Հայոց»-ի մեջ: Մովսես Խորենացին, մեզ մատուցելով հայոց առաջնորդների անունները, գրում է. «Սա օգնական Պռիամու ի Տեւամայ առաքեալ ընդ եթովպացի զօրուն՝ մեռանի ի քաջացն Հելլենացւոց: Պերճ. Արբուն. Բազուկ. Հոյ. Յուսակ. Կայպակ. Սկայորդի»[74]: Հաջորդ գլխի խորագրում նշվում է, «Որ ի Սկայորդւոյն Պարոյր՝ առաջին ի Հայս թագաւորէ. օգնական լինի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ»[75]: Եվ վերջապես մեկ այլ կապակցությամբ նա հայտնում է. «Իսկ մեր առաջին ի Վարբակայ Մարէ պսակեալ Պարոյր, որդի Սկայորդւոյ. Հրաչեայ»[76]: Պատմահոր կռահումն է, թե՞ ոչ, պատմական ճշմարտություն է, թե թյուրիմացություն, Մովսես Խորենացին Պարույրին համարում է Սկայորդու որդի: Սակայն պատմագրության մեջ քաղաքացիություն է ստացել մեկ այլ տեսակետ, ըստ որի Իշպական և Պարտատուա-Պարույրը գործել են միաժամանակ, ըստ որում, եթե առաջինը գտնվել է հակաասորեստանյան խմբավորման մեջ, ապա երկրորդը դաշնակցել է Ասորեստանի հետ:

Հմուտ սեպագրագետ Հ. Կարագյոզյանը, քննության առնելով ուրարտական գաղափարագիր անձնանունները, հիմնավոր և պատճառաբանված ցույց է տալիս, որ Խորենացու անվանացանկերում հանդիպող Կայպակ անունը նույնական է Իշպակային: Ըստ երևույթին, գրագիրներից մեկը Իշպակայը տվել է հին գրությամբ, որը հետագայում ընթերցվել է Քապակա կամ Կապակա, որը Կայպակ գրությամբ տեղ է գտել Խորենացու երկում[77]: Շարունակելով իր միտքը զարգացնել, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ Իշպակա - Կայպակը նույնական է Սկայորդուն, սակայն Խորենացու երկում թյուրիմացաբար դրանք դիտվել են որպես տարբեր անձնավորություններ[78]: Այս վերին աստիճանի ուշագրավ եզրակացությունը, ինչպես շուտով կհամոզվենք, համապատասխանում է պատմական ճշմարտությանը:

681 թ. Ասորեստանի Սինախերիբ /ըստ հայկական աղբյուրների՝ Սենեքերիմ/ թագավորը սպանվեց իր որդիների կողմից, որոնք «Աստվածաշնչի» համաձայն, փախան Ա-

[73] Անդ, էջ 246-252, 254:

[74] Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Ի /ԻԱ/:

[75] Անդ, Գիրք Ա., գլ. ԻԱ /ԻԲ/::

[76] Անդ, Գիրք Ա, գլ. ԻԲ /ԻԳ/:

[77] Հ.Հ. Կարագյոզյան, Ուրարտական գաղափարագիր անձնանուններ, տե՛ս «Լրաբեր հաս. գիտ.», 1984, թիվ 1, էջ 80:

[78] Անդ:

ռարատի երկիրը[79]: Սինախերիբը սպանվեց տաճարում աղոթելու ժամանակ, հայրասպան արքայազներ Ադրամելեքը և Սարասարը փորձեցին տիրել իշխանությանը, սակայն իրենց կրտսեր եղբայր, թագաժառանգ Ասարխադդոնից պարտվեցին և, եթե հավատանք Մովսես Խորենացու հաղորդումներին, փախան Աղձնիքի կողմերը[80]: Սինախերիբը մի քանի որդի ուներ. գահաժառանգ Աշուրնադինշումը Բաբելոնի փոխարքա նշանակվեց և վեց տարի կառավարելուց հետո 694 թ. տապալվեց: Երկրորդ որդին Արադ-Նինլիլն է, երրորդը՝ Ասարխադդոնը, չորրորդը՝ Աշուր-շումուշաբշին, հինգերորդը՝ Աշուր-իլումու-բալլիսուն: Ենթադրվում է նաև վեցերորդ որդու՝ Արադ-Մելեքի գոյությունը, որը սակայն Ն.Ադոնցը վիճելի է համարում[81]:

Ի տարբերություն մյուս եղբայրների, Ասարխադդոնը ծնվել էր այլ կնոջից, որի անունն էր Նակիա-Զակուտու, որի շնորհիվ էլ, ինչպես ենթադրում են, Ասարխադդոնը հռչակվեց թագաժառանգ և նշանակվեց Բաբելոնի փոխարքա: Սակայն ավագ որդու՝ Աշուրնադինշումի տապալվելուց հետո գահի նկատմամբ իրավունք էր ձեռք բերում Արադ-Նինլիլը, որի կողմնակիցները անհաջող փորձեր են կատարում տապալել Ասարխադդոնի թեկնածությունը և ոչնչի չհասնելով, համոզում են իրենց առաջնորդին բռնությամբ տիրել իշխանությանը: Սինախերիբը սպանվեց, սակայն Ասարխադդոնը և նրա կողմնակիցները ավելի ուժեղ դուրս եկան: Թագաժառանգը որոշ պայքարից հետո մտավ մայրաքաղաք և Արադ-Նինլիլին հետապնդելով, պարտության մատնեց Կարքեմիշում: Ն.Ադոնցը գտնում է, որ հենց Արադ-Նինլիլն էլ սպանել է հորը, սակայն սպանությանը մասնակցել են նաև նրա եղբայրները: «Աստվածաշնչի» Ադրամելեքը

[79] Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Ակունքները X-VI դդ. մ. թ.ա., Երևան, 1972, էջ 128:

[80] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ.Իգ /ԻԴ/:

[81] Ն.Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 129, ծան.2:

ներկայացնում է Արադ-Նինլիլին, որի անվան առաջին մասը՝ Արադը ձևափոխվել է Ադրայի, իսկ Սարասարը կամ Սարեսարը Նեբու-Սարեսերի կրճատ ձևն է: Այս անձնավորության իսկական անունն էր Նաբուշարասուր, որը Մարքասուի կուսակալն էր և Արադ-Նինլիլի եռանդուն կողմնակիցը[82]: Ն.Ադոնցի կարծիքով, ինչպես տեսնում ենք, փախստականներից մեկն էր միայն արքայազն, հետևաբար մյուսները մարտական գործողությունների ժամանակ սպանվել էին:

Բ.Պիոտրովսկին, վերլուծելով և հիմք ընդունելով հայոց Պատմահոր հաղորդած առասպելախառն պատմությունները, ենթադրել է, որ Սինախերիբին սպանողները Արարատի երկիր կամ Ուրարտու չեն փախել, այլ ապաստան են գտել Սասունի լեռներում, այսինքն Շուբրիայում[83]: Այս տեսակետը, որ հակված է ընդունելու նաև Ի.Դյակոնովը[84], մեզ առավել քան կասկածելի է թվում: Ամենից առաջ, հարկ է նշել, որ Ասարխադդոնի Աշշուր աստծուն ուղղված նամակում ոչ մի խոսք չի ասված իր հայրասպան եղբայրների Շուբրիա փախչելու մասին: Նամակում նշվում է, որ Շուբրիա են փախել իր իշխանությունը չճանաչող ավազակներ, գողեր, մեղսագործներ, հրամանատարներ, կուսակալներ, վերակացուներ, կառավարիչներ, սակայն ամենադույզն ակնարկ չի արված նրա եղբայրների Շուբրիայում գտնվելու վերաբերյալ[85]: Փաստաթղթից երևում է, որ Ասարխադդոնը մի քանի անգամ նամակով դիմել է Շուբրիայի թագավորին, սակայն դրանցում ևս ոչինչ չի վկայում, որ նրա եղբայրները ապաստան են գտել Աղձնիքի կողմերում[86]: Սակայն ամենակարևորն այն է, որ Ասարխադդոնը փոխանակ

[82] Անդ, էջ 129-130:

[83] Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 127:

[84] И.М.Дьяконов, Предыстория армянского народа, История Армянского нагорья с 1500 по 500 г. до. н.э., Хурриты, Лувийцы, Протоармяне, Ереван, 1968, էջ 172, ծան. 264:

[85] АВИИУ, N 67, а:

[86] Անդ, N67 б, г, д:

անմիջապես հարձակվելու Շուբրիայի վրա, եթե այնտեղ էին գտնվում նրա եղբայրները և միշտ կարող էին ապակայունացնել վիճակը տերության մեջ, արշավանքը ձեռնարկում է միայն իր թագավորության ութերորդ տարում[87]:

Մովսես Խորենացին, անդրադառնալով հիշյալ իրադարձություններին, հայտնում է հետևյալը. «Եւ ի մոռացումն եկն արդեօք յաղագս Սենեքերիմայ. քանզի ութսուն, աւելի կամ պակաս, ամօք յառաջ քան զթագաւորութիւնն Նաբուգոդոնոսորայ էր Սենեքերիմս կացեալ Ասորեստանի. որ զերուսաղէմ պաշարեաց առ Եզեկիայիւ Հրէից առաջնորդաւ զոր սպանեալ որդւոց նորա Ադրամելեքայ և Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ:

Յորոց զմինն յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այս ինքն է զՍարասարն և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն ասացեալ լեառն: Իսկ պերճքն և գլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբդեշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ: Իսկ Արդամոզանն յարևելից հարաւոյ նորին կողմանն բնակեալ. ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս: Արդ՝ յիշելոյն մեր զՍենեքերիմ այս էր պատճառն»[88]: Եթե մի պահ մոռանանք Ադրամելեքի և Սանասարի /Սարասար[89]/ Սիմ կոչված լեռան շրջանում հաստատվելու մասին, ապա ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ նրանց *մեր երկրում* հաստատվելը կապվում է Սկայորդու անվան հետ:

Սկայորդին հիշատակվում է Վանի թագավոր Ռուսա Բ-ի թողած վավերագրերից մեկում, որտեղ ասված է. «Հենց-

[87] Անդ, N 69:

[88] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԻԳ /ԻԴ/:

[89] Մովսես Խորենացի. Գիրք Բ, գլ. Ը.«Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ հաստատէ բդեաշխ մեծ և կուսակալ յարևմտից հարաւոյ, յեզերս Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, գաւառս պարգևելով զԱրծն և որ շուրջ զնովաւ, և զլեառնն Տաւրոս, որ և Սիմ և զԿղեսուրն ամենայն»:

այդ-նույն տարում, /որ/ Ռուսայի - առջև Արգիշտ որդու Շագայորդին հզոր՝ արքան Իշկուգու-ուլխէ /ցեղի/ գնաց դեպի – Մանա՝ Աքայա /-Աքավա/ տեղն իր /և/ երբ ...»:

(a - ku - ke MU ^{m}Ru - sa - a URU ^{m}Ar - gišt[e - h] – n[e′]

^{m}Ša′ - ga DUMU tar - a LUGAL Iš - qu - gu - ul - hi - e

u′ - la - b[e′] ^{KUR}Ma – na – i – di ^{m}A – ka – a′ – a

e - si - i a - še...)[90]:

Ռուսա Բ-ն /685-645/ գահ է բարձրացել մինչև Սինահերիբի սպանությունը, ուստի հիշյալ վավերագիրը կարող էր լույս աշխարհ գալ թե մինչև 681 թ. մ.թ.ա. և թե դրանից հետո: Համենայն դեպս Իշպակայի կամ Սկայորդու հետ Ռուսա Բ-ի հանդիպումը կարող էր տեղի ունենալ մինչև 673 թ., երբ սկյութ առաջնորդն սպանվեց Ասորեստանի դեմ մղված կռիվներում: Սակայն մի հանգամանք մեզ այնուամենայնիվ ստիպում է մտածել, որ նրանց հանդիպումը թերևս տեղի է ունեցել 681 թվից առաջ: Խնդիրն այն է, որ ամեն ինչից դատելով աշուրա-վանյան հարաբերությունները գոնե 681-673 թթ. եթե ոչ բարեկամական, ապա թշնամական բնույթ չեն կրել: Այդ է հավաստում թեկուզ այն փաստը, որ Ասարխադդոնը Շուբրիան 673 թ. գրավելուց հետո Ռուսա-Բ-ին վերադարձրեց Վանի թագավորությունից փախած ստրուկներին և այլ անձանց[91]: Վերը բերված վավերագրից հստակորեն բխում է, որ Մանան Վանի պետության գերիշխանության ներքո գտնվող երկիր է, իսկ Շագայորդին կամ Սկայորդին ընդունված է Ռուսա Բ-ի ծառայության մեջ: Հետևաբար այս պայմաններում խոսք անգամ չի կարող գնալ այն մասին, որ ասորեստանյան փախստականները կարող էին ապաստան գտնել Սկայորդու մոտ: Եվ վերջապես, եթե ընդունենք, որ այնուամենայ-

[90] И.М.Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, текст N 121 ТК, 1898/99/: Հայերեն թարգմանությունը Հ.Կարագյոզյանի:

[91] АВИИУ, N 67, Л:

նիվ Ադրամելեքը և Սանասար – Սարասարը փախել են Ա-
ռարատի երկիրը կամ Վանի թագավորություն, ապա տա-
ռակուսանք է պատճառում Ասարխադդոնի տեղեկությունն
այն մասին, որ իրեն հայտնի չէ եղբայրների փախուստի
վայրը[92]: Այս ամենը մեզ իրավունք է տալիս մտածելու, որ
հայրասպան արքայազները Վանի թագավորություն չեն
փախել[93] և ապաստան են գտել սկյութական առաջնորդի
մոտ:

Ասորեստանյան արքայազները ուրեմն կարող էին ի-
նրոք ապաստան գտնել Շագայորդի Իշպակայի մոտ, երբ
նրա հարաբերությունները Ռուսա Բ-ի հետ փոխված կլի-
նեին: Հնարավոր է, որ սկյութական առաջնորդը, ավելի ու
ավելի շփվելով Առաջավոր Ասիայի քաղաքական կացութ-
յան հետ, ավելի լավ է համարել համագործակցել Մանայի
թագավորի և մարական ցեղապետերի հետ, որի հետևան-
քով նրա հարաբերությունները Ռուսա Բ-ի նկատմամբ
թշնամական բնույթ են ձեռք բերել: Չի բացառվում նաև, որ
Վան-սկյութական հարաբերությունների սրման համար
պատճառ է դարձել արքայազներին Սկայորդու կողմից ա-
պաստան տալը: Ասարխադդոնի «Պրիզմա Ա » արձանագ-
րության մեջ պահպանվել է մի հետաքրքիր տեղեկություն
այն մասին, որ ասորեստանյան զորքերի դեմ կռիվներում
սպանվել է Իշպակա Սկյութը.«Ես /Ասարխադդոն թագավո-
ը – Հ.Բ./ Մաննացիների երկրի մարդկանց, անհնազանդ
կուտիների ցրողը, որը զենքով ջախջախեց Իշպակա Սկյու-
թի, դաշնակցի զորքերը /որոնք/ նրանց չփրկեցին»[94]: Ու-
րարտացիները արձանագրության մեջ չեն հիշատակվում,

[92] D.D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babelonia, Chicago, II, 1927, § 501-505: АВИИУ, N 62, ծան. 7:

[93] Ի.Դյակոնովը «Աստվածաշնչի» տեղեկությունը եղբայրների Արարատի երկիրը կամ Ուրարտու փախչելու մասին վստահելի չի համարում և ենթադրում է, որ հեռավոր Պաղեստինի հեղինակը Շուբրիան ներքաշել է Ուրարտու հասկացության մեջ, չնայած Շուբրիան այդ շրջանում չէր մտնում Ուրարտուի մեջ: АВИИУ, N62, ծան. 6:

[94] АВИИУ, N 65:

ուստի ոչ մի կերպ չի կարելի ենթադրել, թե վան-սկյութա-
կան հարաբերությունները շարունակում էին նույնը մնալ:
Ընդհակառակը սկյութական առաջնորդն իր ծառայություն-
ներն է առաջարկում Մաննայի թագավորին, մարական ցե-
ղապետերին, որոնք արձանագրության մեջ հանդես են գա-
լիս «կուտիներ» բարձր ոճի արտահայտությամբ, որով ա-
սորեստանցիները կոչում էին հյուսիս-արևելյան ժողո-
վուրդներին, տվյալ դեպքում՝ մարական ցեղերին:

Սկյութա-մաննական մերձեցումը, ամենայն հավանա-
նությամբ, ոգեշնչեց մարական առաջնորդներին, որի նյու-
թականացումը եղավ 673 թ. Կաշտարիտիի գլխավորութ-
յամբ բռնկված ապստամբությունը: Մարական ցեղերին
գրեթե հաջողվեց թոթափել ասորեստանյան լուծը, սակայն
այդ կռիվների ժամանակ, ինչպես տեսանք Ասարխադդոնի
վերը բերված արձանագրությունից, Իշպակայի զորքը
ջախջախվեց, իսկ ինքն էլ հավանաբար սպանվեց: Իշպա-
կայը իրեն թագավոր հռչակել էր թե՞ ոչ, մեզ հայտնի չէ: Հա-
մենայն դեպս, մեզ հասած արձանագրություններում նա
հորջորջվում է ոչ թե որպես թագավոր, այլ ցեղային առաջ-
նորդ: Իշպակայի սպանությունից հետո քաղաքական աս-
պարեզում հայտնվում է սկյութական մի նոր առաջնորդ, ո-
րին ասորեստանյան աղբյուրները կոչում են Պարտատուա:

Պատմագիտական գրականության մեջ տարբեր կար-
ծիքներ են արտահայտվել Իշպակայի և Պարտատուայի
միջև եղած կապի վերաբերյալ: Ի.Դյակոնովը հնարավոր էր
համարում սկյութական թագավորության գոյությունը
դեռևս Իշպակայի օրոք և դիտում էր Պարտատուային որ-
պես Իշպակայի հաջորդ, որի և Ասորեստանի միջև ձևավոր-
ված դաշինքը ընկալելով որպես ասորեստանյան դիվանա-
գիտության հաջողություն[95]: Ի տարբերություն հարգարժան
ակադեմիկոսի Ի.Ալիևը գտնում է, որ Ասիայում գործող
սկյութների շրջանում գոյություն են ունեցել տարբեր

[95] И.М. Дьяконов, История Мидии, էջ 267, 272 և շար.:

խմբեր, որոնց մի մասը դաշնակցել է մաննացիներին ու մարերին, իսկ մյուս մասը՝ վերջիններիս նկատմամբ եղել է թշնամական: Հեղինակը դժվարանում է որոշել Պարտատուայի սկզբնական դիրքորոշումը, ենթադրելով, որ նա Սկյութական թագավորության արքան է, որը տարբերվում է մարերի դաշնակից Իշպակայի սկյութներից: Հավանաբար Պարտատուան պատերազմի սկզբում չեզոք դիրք է գրավել, սակայն հետագայում անցել է Ասորեստանի կողմը՝ դավաճանելով Իշպակայի դաշնակիցներին, որի հետևանքով պատերազմի ելքը բոլորովին այլ է եղել[96]: Այս երկրորդ տեսակետի համաձայն ստացվում է, որ Իշպակայը և Պարտատուան գործել են միաժամանակ, հաստատված լինելով Մաննայի տարբեր շրջաններում: Ռուսա Բ-ի վերը բերված արձանագրությունից պարզ դարձավ, որ Իշպակայ Շագայորդու կամ Սկայորդու աթոռանիստը Աքայա կամ Աքավա վայրն էր: Ռ. Գիրշմանը և նրան հետևող Բ.Պիոտրովսկին հակված են կարծելու, որ Պարտատուայի աթոռանիստը գտնվել է Սակկըզի մոտ տեղակայված Զիվիե կոչվող վայրում, որը ուսումնասիրողների միահամուռ ենթադրությամբ նույնացվում է սեպագիր արձանագրությունների Զիբիա, Իզբիա կամ Ուզբիա ամրոցին[97]: Իրականում Պարտատուային Զիվիեում տեսնելը ոչնչով չհիմնավորված սովորական ենթադրություն է, կապված այդ վայրում սկյութական գանձի հայտնաբերման հետ: Շատ հնարավոր է, ինչպես ենթադրում է Ռ. Գիրշմանը, Սակկըզի մեջ պահպանվել է սկյութների անունը՝ Sakaz - Skaza - Σκυθαι[98], սակայն Զիվիեի շրջանը նույն հաջողությամբ կարող է վերաբերվել ոչ միայն Պարտատուային, այլև Իշպակային:

Սեպագիր նյութը հնարավորություն չի տալիս պարզել, թե այնուամենայնիվ Իշպակայը և Պարտատուան ազգակիցներ էին, թե՞ ոչ: Որքան էլ տարակուսելի լինի, այդ հարցի պատասխանը պահպանել է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը, որի տվյալները մեզ իրավունք են տալիս ենթադրելու, որ Պարտատուա-Պարույրը եղել է Սկայորդու կամ Իշպակայ Շագայորդու որդին. «Իսկ մեր առաջին ի Վարբակայ Մարէ պսակեալ Պարոյր որդի Սկայորդւոյ»[99]: Հայոց Պատմահոր երկի ԻԱ գլխի խորագրում ասված է. «Որ ի Սկայորդւոյն Պարոյր՝ առաջին ի Հայս թագաւորէ»[100]: Տարընթերցումներից ուշադրության արժանի են «ի սկայ որդւոցն», «ի սկայ որդւոց» և «ի սկայ որդոցն» ձևերը, որոնք հավաստում են նախնական ճիշտ «ի Սկայորդւոցն» արտահայտությունը: Հետևաբար Պարույր Սկայորդի անվան օգտագործումը այն առումով, որ Պարույրը նույն Սկայորդին է, բացահայտ սխալ է: Իրականության մեջ Պարույրը Իշպակայ Սկայորդու որդիներից մեկն է եղել:

Ինչպես տեսանք, հայկական ավանդական պատմության համաձայն, Պարույրը եղել է հայոց առաջին թագավորը, որն արքա է պսակվել Վարբակես Մարի կողմից: Այս հանգամանքը, մեր կարծիքով, հեռավոր արձագանք է այն իրողության, որ սկյութական առաջնորդին առաջինը թագավոր են ճանաչել մարերը հանձին Վարբակեսի, որի անվան տակ փորձում են տեսնել մարական թագավոր Կաշտարիտիին: Մարական թագավորությունը ստեղծվեց 673 թ. ապստամբության շնորհիվ, որին մեծապես նպաստեցին սկյութական ուժերը, որոնք ասորեստանյան աղբյուրներում երբեմն հիշատակվում են «կիմմերներ» անունով: Իշպակայից հետո, որն սպանվեց 673 թ. մարտական գործողությունների ժամանակ, նրան հաջորդեց Պարտատուա-Պարույրը, որը շարունակում է համագործակցել մարերի հետ: Ասարխադդոնի արձանագրության մեջ նա թագավոր է անվանված, սակայն, եթե հիմք ունենանք այն իրո-

[96] И.Алиев, История Мидии, I, Баку, 1960, էջ 222, 226 և շար.:
[97] Б.Б. Пиотровский, Ванское царство (Урарту), էջ 225: Н.В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, էջ 79-80:
[98] R.Girshman, La trésor de Sakkez, տես "Artibus Asiae", XIII, 3, 1950, 201:

[99] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԻԲ /ԻԳ/:
[100] Անդ, Գիրք Ա, գլ. ԻԱ /ԻԲ/:

ղությունը, որ ասորեստանյան արձանագրությունները շատ հաճախ թագավոր են կոչում ոչնչով աչքի չընկնող ցեղապետերին, կասկած չի կարող լինել, որ Պարտատուա-Պարույրի արքայական կոչումը պայմանավորված է ավելի շուտ նրա ուժեղ իշխանությամբ: Հենց այդ հանգամանքով պետք է բացատրել, որ «Աստվածաշնչում» հիշատակված է ոչ թե Ասքանազյան կամ Սկյութների թագավորությունը, այլ գունդը[101]: Վերջապես, եթե սոսկ տրամաբանորեն մոտենանք խնդրին, ապա կտեսնենք, որ սկյութների օգնությամբ թագավորություն հիմնած Կաշտարիտին հազիվ թե իրեն իրավունք վերապահեր թագադրելու Պարտատուա-Պարույրին: Վերն ասվածը մեզ ստիպում է ենթադրել, որ Պարտատուա-Պարույրի հայոց թագավոր ճանաչելը և թագադրելը չէր կարող կատարվել Կաշտարիտիի կողմից: Դրա օգտին է վկայում նաև Պատմահոր տեղեկությունը, ըստ որի Պարույրը թագավոր է պսակվել Սարդանապալլոսի, այսինքն Աշուրբանապալի օրոք:

Արագ հզորացող Մարական թագավորությունն, ամենայն հավանականությամբ, սկսում է խիստ անհանգստացնել Պարտատուային, որի հետևանքով սկյութա-մարական հարաբերությունները սրվում են: Թե որո՞նք էին հիմնական շարժառիթները, կցկտուր նյութի պատճառով պարզել հնարավոր չէ: Հավանաբար սկյութները հանձին նրանց առաջնորդի դժգոհ էին իրենց ծառայության վարձատրությունից կամ էլ ասորեստանյան հմուտ դիվանագիտությունը կարողացել էր սեպ խրել նախկին դաշնակիցների միջև: Մի բան պարզ է, որ Պարտատուայի և Ասորեստանի արքայի հարաբերություններն այնքան են բարելավվում, որ սկյութ առաջնորդը դեսպան է ուղարկում Ասարխադդոնի մոտ և

[101] «Աստուածաշունչ մատեան հին եւ նոր կտակարանաց», ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ եբրայական եւ յունական բնագրաց, Կոստանդնուպոլիս, 1895, «Մարգարէութիւն Երեմեայ», 51, 27. «պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն եւ Ասքանազեան գնդին»:

խնդրում նրա դստեր ձեռքը: Շամաշ աստծու բախտագուշակին ուղղված հարցումների մեջ Ասարխադդոնը հայտնում է հետևյալը. «Պարտատուան՝ սկյութների թագավորը [բառացի՝ Իշկուզա երկրի – Հ.Բ.], որն այժմ դեսպան է ուղարկել Աշշուրախիդդինային՝ Ասորեստանի թագավորին [... մեջ], եթե Աշշուրախիդդինան՝ Ասորեստանի թագավորը կնության տա Պարտատուային՝ սկյութների թագավորին արքայադստերը «դաստիարակության տնից»[102] [... կմտնի արդյո՞ք] Պարտատուան՝ սկյութների թագավորը [դաշինքի մեջ] նրա հետ, ճշմարիտ, խաղաղության խոսք [բարեկամության խոսք /?/] կասի արդյո՞ք Աշշուրախիդդինային՝ Ասորեստանի թագավորին, [կտա] հավատարմության երդում Աշշուրախիդդինային՝ Ասորեստանի թագավորին, կկատարի իրականում – քո մեծ աստվածությունը գիտի»[103]:

Այս տեղեկությունը, որն անվերապահորեն մատուցվում է որպես Ասորեստանի և սկյութական թագավոր Պարտատուայի դաշնակցության դրսևորում, բնավ էլ աներկբայորեն դրա օգտին չի խոսում: Ի հակադրություն այլ ուսումնասիրողների, մեր հավանական մեկնաբանություններից մեկն այն է, որ ասորեստանյան դիվանագիտությունը կարողացել է իր կողմը տրամադրել Պարտատուային, որին հետևել է վերջինիս կողմից դեսպանի առաքումը Ասորեստան՝ արքայադստեր ձեռքը խնդրելու հանձնարարությամբ: Սակայն առավել հավանականն այն է, որ նախաձեռնությունը գալիս էր Պարտատուայից և Ասարխադդոնը այդպես էլ վստահություն չուներ, որ եթե ինքը խնամիական կապեր հաստատեր, Պարտատուան իրեն վստահելի դաշնակից կդառնար: Ավելին, մենք հակված ենք կարծելու, որ հավանականության ավելի մեծ իրավունք ունի երկրորդ բացատրությունը: Ուստի հազիվ թե կարելի է որպես պատ-

[102] Այսինքն՝ ավագ արքայադուստրը?: АВИИУ, N 68, г-19, ծան. 25:
[103] АВИИУ, N 68, г-19:

մական ճշմարտություն ընդունել Ի.Դյակոնովի այն ենթադրությունը, թե Պարտատուայի խնդրանքը հավանաբար հարգվեց, ասորեստանյան արքայադուստրը կնության տրվեց սկյութական թագավորին, որով և վերջինս դարձավ Ասորեստանի հավատարիմ դաշնակիցը[104]: Իսկ եթե Պարտատուայի խնդրանքը մերժվել է, չէ որ այդ հերքող կամ հաստատող ոչ մի փաստ չկա: Ամենայն հավանականությամբ, այդպես էլ եղել է, որովհետև ժողովրդական վեպի ուշադրությունից հազիվ թե վրիպեր այնպիսի կարևոր արժանահիշատակ մանրամասնություն, ինչպիսին արքայադստերը Պարտատուա-Պարույրին կնության տալն էր, որի մասին Հայոց Պատմահայրը ոչինչ չի ասում:

Պատմագիտական գրականության մեջ այն կարծիքն է հայտնվել, որ Կաշտարիտին՝ Մարական թագավորության հիմնադիրը նույնանում է Հերոդոտոսի հիշատակած Փրաորտին, ըստ որում այն դեպքում, երբ սկյութական տիրապետության 28 տարիները չենք մտցնում Կիաքսարի կառավարման շրջանի մեջ[105]: Ենթադրվում է, որ Հերոդոտոսի Փրաորտի անունը եղել է իրականում Կաշտարիտի, իսկ Փրաորտ է կոչվել Դարեհ Ա-ի օրոք մարական ապստամբ առաջնորդը, որն ի պատիվ պետության հիմնադիր Կաշտարիտիի ընդունել է Խշատրիտա կամ Կաշտարիտի անունը: Հետագայում, ինչ-ինչ պատճառներով, թյուրիմացաբար, Հերոդոտոսի մոտ խառնվել են այս երկու անունները և մարական թագավորների ցանկի մեջ տեղ է գտել Փրաորտի անունը[106]:

Իր ստեղծման օրից սկսած Մարական թագավորությունը հանդես է բերում ռազմատենչ և զավթողական նպատակներ, գրավելով հարևան երկրները: Եթե հավատանք Հերոդոտոսին, ապա Փրաորտ-Կաշտարիտին սկզբում

[104] И.М. Дьяконов, История Мидии, էջ 272-273, 280:
[105] И. Алиев, История Мидии, I, էջ 229, ծան. 1:
[106] Անդ:

հարձակվեց պարսիկների վրա և իրեն ենթարկեց[107]: Դրանից հետո՝ ըստ Հերոդոտոսի, մարաց թագավորը իրար ետևից իրեն է ենթարկում Ասիայի ազգերին և անգամ փորձում է տիրել Ասորեստանին, որը չնայած դաշնակիցների հեռանալու հետևանքով մենակ մնալուն, շարունակում էր հզոր ուժ ներկայացնել: Սակայն արշավանքն ավարտվում է խայտառակ ջախջախմամբ, և Փրաորտը՝ իր իշխանության 22-րդ տարում, իր զորքի մեծ մասի հետ մեկտեղ ոչնչանում է[108]: Պատմահոր հավաստմամբ, Փրաորտեսի որդին Կիաքսարը ավելի ռազմամոլ էր, որը ռազմական վերափոխություններից հետո արշավում է Նինվեի վրա իր հոր վրեժը լուծելու և քաղաքը կործանելու նպատակով, սակայն մինչ մարական բանակը պաշարել էր Նինվեն, սկյութների թագավոր Մադյուեսը, որ Պրոտոթյուեսի որդին էր, հարձակվում է մարերի վրա և նրանց պարտության մատնելով իր տիրապետությունն է հաստատում Մարաստանի վրա[109]: Ինչպես ճիշտ նշել է Ի.Ալիևը, այս կացությունը կարող է վերաբերվել VII դարի 50-ական թվականներին, երբ Ասուրբանապալ թագավորի օրոք Ասորեստանը վերածվել էր Առաջավոր Ասիայի հզոր տերության, նվաճելով Եգիպտոսը, նվաստացնելով Վանի թագավորությունն ու Լյուդիայի պետությունը[110]:

Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը Պարույրին համարում է Սարդանապալլոսի ժամանակակիցը, սակայն միաժամանակ նաև Նինվեի 612 թ. մարական նվաճման մասնակիցը: Այս առումով Պատմահոր հիշատակած Վարբակես մարը, որն անշուշտ վերցված է Կտեսիաս Կնիդացու աշխատությունից կամ էլ Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան»-ից, նույնանում է ոչ թե Կաշտարիտի-

[107] Herodoti Historiarum .., I, 103:
[108] Անդ, I, 102:
[109] Անդ, I, 103-104:
[110] И. Алиев, История Мидии, I, էջ 230:

Փրաորտի, այլ Կիաքսարի հետ: Սակայն այս դեպքում էլ բախվում ենք այլ դժվարությունների հետ: Եթե Մադիոսը իրոք Պարտատուա-Պարույրի որդին էր, ապա վերջինս ոչ մի կերպ չէր կարող լինել Նինվեի գրավման մասնակիցը: Ելնելով սկզբնաղբյուրների համադրական քննությունից, Ս.Երեմյանը եկել է այն եզրակացության, որ Պարույր Սկայորդին չի նույնանում ասորեստանյան աղբյուրների Պարտատուային և լավագույն դեպքում հիշյալ Պարտատուայի որդու՝ Մադիեսի կրտսեր ժամանակակիցն է: Շարունակելով իր տեսակետը զարգացնել, նա գտնում է, որ Հերոդոտը վերոհիշյալ Պրոտոթյուեսին շփոթել է ըստ երևույթին մեկ այլ Պրոտոթյուես-Պարտատուայի հետ, որը հին հայկական ավանդություններում հայտնի է Պարույր անունով: Ուստի և Հերոդոտը 612 թվականի իրադարձությունների մասնակից է դարձրել ոչ թե նրան, այլ նրա որդուն՝ սկյութական Մադիոս թագավորին, որը ժամանակով ավելի մոտ էր դրանց: Ի վերջո նա հանգում է այն եզրակացության, որ Կիաքսարին օգնության եկած «սկյութական» զորքը գլխավորել է ոչ թե Մադիոսը, Պրոտոթյուեսի որդին, այլ հին հայկական աղբյուրների Պրոտոթյուես-Պարույրը[111]: Համփոփումն այս ամենի, հեղինակը գտնում է, որ Նինվեի ավերումից և ասորեստանյան պետության կործանումից հետո Կիաքսար-Վարբակեսը Պարույրին ճանաչում է Արմե-Շուպրիա երկրի թագավոր[112]:

Հարգարժան գիտնականի նշված կարծիքը, իր ողջ հավանականությամբ հանդերձ, ընդունելի չէ: Չնայած Խորենացին Պարույրին համարում է Նինվեի գրավման մասնակից, այնուամենայնիվ նշում է, որ նա Սարդանապալլոսի կամ Աշշուրբանապալի ժամանակակիցն էր, որով Պարույրը որոշակիորեն նույնանում է Պարտատուայի հետ: Հետևաբար ավելի շուտ կասկածելի է Պարույրի մասնակցությունը Նինվեի գրավմանը, քան թե նրա Պարտատուայից առանձին անձնավորություն լինելը: Պարտատուա-Պարույր նույնացման խնդիրը առաջին անգամ բարձրացվել է Գր.Ղափանցյանի կողմից, որի կարծիքով հայկական «Պարոյր» /Paroyr/ անունը ծագում է սկյութական Պարտատուայից՝ ասորեստանյան հաղորդմամբ, որի հունական ձևը Πρωτοθυ'ης է [113]: Ի.Դյակոնովը մերժում է այդ նույնացումը և գտնում է, որ «Պարոյր» անունը ենթադրում է պարթևական Parôδ անվանաձևը, որը դժվար է հանգեցնել հին իրանական Paratatava-ին: Հետևաբար, եզրակացրել է նա, կամ այս առասպելը չի առնչվում Պարտատուային, կամ էլ նրա մասին հիշողությունները համադրվել են ավելի ուշ պարթևական ծագման անվան հետ[114]: Հ. Կարագյոզյանը հիմնավոր ապացույցներով հաստատել է Պարտատուայի և Պարույրի միևնույն անձը լինելը[115], սակայն մենք՝ այս խնդիրները թողնելով իրանագետ-լեզվաբաններին, միայն կարող ենք հաստատորեն պնդել, որ բոլոր պատմական իրողություններից ելնելով Պարտատուան և Խորենացու հիշատակած Պարույրը նույնանում են, իսկ սկզբնաղբյուրները ամենադույզն չափով իրավունք չեն տալիս մտածելու, որ կա մեկ այլ Պարտատուա-Պարույր, հետևաբար պետք է բացատրել, թե ի՞նչ պատճառով է, որ Պատմահոր մոտ այդպիսի շփոթ է առաջացել:

Մեր համոզմամբ, շփոթի աղբյուրը Կիաքսարի իշխանության «սկյութական 28-ամյա տիրապետությամբ» երկփեղկվելն է: Հերոդոտոսի վկայությամբ, Կիաքսարը փորձել է գրավել Նինվեն, սակայն Ասորեստանի մայրաքաղաքը պաշարելիս ենթարկվել է Մադիոսի՝ Պարտատուայի /Պրո-

---

[111] Ս.Տ. Երեմյան, Կիմմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, ՊԲՀ, 1968, N 2, էջ 89-115:

[112] «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ..,I, Երևան, 1971, էջ 432-433:

[113] Гр. Капанцян, Хайаса-колыбель армян, Ереван, 1947, էջ 150:

[114] И.М. Дьяконов, Предыстория армянского народа, էջ 174:

[115] Հ.Հ. Կարագյոզյան, Ուրարտական գաղափարագիր անձնանուններ, «Լրաբեր հաս.գիտ», 1984, թիվ 1 ,էջ 80:

տոթյուեսի/ որդու հարձակմանը, որի հետևանքով հաստատվել է սկյութների 28-ամյա տիրապետությունը Մարաստանում, իսկ այնուհետև խորամանկորեն սկյութների առաջնորդներին խնջույքի հրավիրելով, նրանց կոտորել է, վերականգնել է Մարական թագավորության անկախությունը և այնուհետև Քաղդեական Բաբելոնիայի հետ դաշնակցած նվաճել ու ավերել է Նինվե քաղաքը: Հատկանշական է, որ Հերոդոտոսի երկը սկյութների 28-ամյա տիրապետության շրջանը մտցնում է Կիաքսարի իշխանության տարիների մեջ: Եթե մի պահ ենթադրենք, որ Կիաքսարը մինչև Մադիոսից պարտություն կրելը գոնե երկու տարի թագավորել է, ապա ստացվում է, որ նրա իշխանության 40-ամյա շրջանը պետք է ընդգրկեր 655-615 թվականները: Ստացվում է, որ նա այդ դեպքում ոչ մի ձևով չէր կարողանա մասնակցել Նինվեի նվաճմանը, առավել ևս չէր կարողանա տալ 585 թ. մայիսի 28-ի նշանավոր ճակատամարտը Լյուդիացիներին Հալիս գետի մոտ, որն անակնկալ ձևով ա վարտվեց արևի խավարմամբ: Հետևաբար միանգամայն տրամաբանական է այն ուսումնասիրողների տեսակետը, որ սկյութական տիրապետության շրջանը չպետք է մտցնել նրա իշխանության տարիների մեջ: Այսուհանդերձ չմտցնելու դեպքում էլ ստիպված ենք ընդունելու, որ նա ինքնուրույն կամ սկյութական գերիշխանության պայմաններում կառավարել է ամենաքիչը 70 տարի: Ստացվում է, որ նա Նինվեի առաջին պաշարման ժամանակ պարզապես երեխա է եղել, այն դեպքում, երբ Հերոդոտոսի երկը նրան հասուն տղամարդ է ներկայացնում: Ելնելով ձեռքի տակ եղած կցկտուր նյութից, մասնավորապես այն իրողությունից, որ Նինվեն պաշարելիս Կիաքսարը ենթարկվել է Մադիոսի հարձակմանը և ընկել սկյութական տիրապետության կամ գերիշխանության ներքո, ինչպես նաև Հերոդոտոսի պնդումից, որ սկյութական տիրապետության շրջանը մտել է Կիաքսարի իշխանության տարիների մեջ, մենք գտնում

ենք, որ նշված հակասական իրողությունները արդյունք են այն բանի, որ Մարաստանի պատմության մեջ եղել է Կիաքսար անունով ոչ թե մեկ, այլ երկու թագավոր: Անունների նույնությունը պատճառ է դարձել, որ հույն հեղինակները Նինվեն առաջին անգամ պաշարած Կիաքսարին և սկյութական տիրապետությունը տապալած Կիաքսարին համարեն նույն անձնավորությունը, որի հետևանքով առաջացել է ժամանակագրական և իրադարձությունների այս շփոթը: Նինվեն առաջին անգամ պաշարած Կիաքսարը, որին պայմանականորեն կոչենք Կիաքսար Ա, իրոք շարունակել է կառավարել Մարաստանում, ենթարկվելով սկյութներին, հետևաբար միանգամայն իրավացի է Հերոդոտոսը, երբ սկյութական տիրապետության 28 տարիները մտցնում է նրա կառավարման մեջ: Իսկ սկյութական տիրապետությունը տապալած Կիաքսարը, մեր դասակարգմամբ Կիաքսար Բ-ն, կառավարել է 40 տարի, որոնց մեջ հույն Պատմահայրը՝ Կիաքսարներին շփոթելով, մուծել է սկյութական 28-ամյա շրջանը:

Ասվածի լույսով պարզ է դառնում, որ այս իրողությունն է պատճառը, որ հունական աղբյուրների և նրանց հետևող Մովսես Խորենացու Վարբակես Մարը իր մեջ միավորի թե Կիաքսար Ա-ի և թե Կիաքսար Բ-ի գործունեությունը: Ավելին, երբ կրկին անդրադառնում ենք Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ում Աժդահակի գահակալությունից հետո հիշատակված և երբեք գոյություն չունեցած Կիաքսարին, պարզորոշ նկատում ենք, որ նա իր տարիքով իրավամբ համապատասխանում է Կիաքսար Բ-ին, լինելով ավելի երիտասարդ թերևս Կյուրոս Ա-ից: Հայերի հակամարական ապստամբությունը ճնշող Կյուրոս Ա-ին շփոթելով Կյուրոս Բ Մեծի հետ և իմանալով անշուշտ երկու Կիաքսարների գոյության մասին, Քսենոփոնը հարկադրաբար Կիաքսար Բ-ին տեղափոխել է Կյուրոս Մեծի ժամանակները, ստեղծելով գոյություն չունեցած թագավորի կերպար փաստորեն

Մարական թագավորության անկումից հետո: Հարցիս նման լուսաբանությունը պատասխան է տալիս նաև այն խնդրին, թե Կաշտարիտի-Փրաորտը արդյո՞ք մարերին էր ենթարկել պարսիկներին: Կյուրոս Ա-ի մասնակցությունը մարական արշավանքներին աներկբայորեն դրական պատասխան է տալիս այդ հարցին:

Պարտատուա-Պարույրին անտարակույս թագավոր է ճանաչել ոչ թե Կիաքսար Բ-ն, այսինքն Նինվեի նվաճողը, այլ Կիաքսար Ա-ն, որ պարտություն կրեց Մադիոսից Նինվեի պաշարման ժամանակ: Ամենայն հավանականությամբ, Նինվեի գրավմանը մասնակցել են հայկական զորամասեր և Մովսես Խորենացին, որ անտարակույս նույնպես անտեղյակ էր երկու Կիաքսարների գոյությանը և քաջատեղյակ այն իրողությանը, թե Պարույրը եղել է ասորեստանյան Սարդանապալլոս-Աշշուրբանապալ թագավորի ժամանակակիցը, Կիաքսար Ա-ի ժամանակակից և գործակից Պարույրին դարձրել է Կիաքսար Բ-ի ժամանակաշրջանի իրադարձությունների մասնակիցը, որը պարզապես հնարավոր չէր: Ավելին, այդ շփոթի պատճառով Մովսես Խորենացին և նրա աղբյուրը թյուրիմացաբար Ասորեստանյան պետության կործանվելը և Մարաստանի կողմից նվաճվելը վերագրում են Աշշուրբանապալի ժամանակաշրջանին, երբ Հին Արևելքի այդ կայսրությունը իր հզորության վերջին տարիներն է ապրել: Այս բացատրությունը, որ բխում է միայն ու միայն առկա աղբյուրագիտական նյութից, մեր համոզմամբ, միակ ընդունելի մեկնաբանությունն է, որ կարելի է տալ Մովսես Խորենացու հակասություններ պարունակող նշված հաղորդմանը:

Պարտատուա-Պարույրը իշխել է 673 թվականից հավանաբար մինչև 50-ական թվականների վերջերը: Սկզբնաղբյուրները պարզորոշ հավաստում են, որ նա սկզբում իր զորամասերով գտնվում էր Մաննա երկրում: Հետագա տարիներին, ինչպես դժվար չէ կռահել Մովսես

Խորենացու առասպելախառն պատմություններից, նրան հաջողվում է գրավել Ասորեստանի թագավորության հյուսիսային և Վանի թագավորության հարավային երկրամասերը, որոնք գտնվում էին Հարավային Հայաստանում: Ամենայն հավանականությամբ նա տիրում է մասնավորապես Արմե-Շուպրիային, որը 673 թվին ենթարկվել էր Ասարխադդոնի ավերիչ արշավանքին, թերևս 668 թվականին, երբ գահ բարձրացավ Աշշուրբանապալ /668-633/27/ թագավորը, որի Ասորեստանյան պետությանը հարկեր և տուրքեր տվող փոխարքայությունների և ենթակա երկրների ցուցակում չեն հիշատակվում ոչ միայն Արմե-Շուպրիան, այլև Ուլլուբան, Նաիրի-Խուբուշկիան և Մուսասիրը[116]: Ուսումնասիրողները կարծում են, որ դրանց անջատումը Ասորեստանից կատարվել է 653 թվականին, երբ վերջինիս դեմ ապաստամբել էր Բաբելոնը[117]: Սակայն մի շարք իրողություններ անուղղակի ձևով ստիպում են մտածել, որ հիշյալ երկրները ոչ այնքան անջատվել էին Ասորեստանից, որքան գրավվել էին սկյութական առաջնորդի կողմից: Այդ մասին է վկայում առանձնապես հայոց Պատմահոր անզուգական երկը: Այն իրողությունը, որ վերջինիս համաձայն Սկայորդին Սինախերիբին կամ Սենեքերիմին սպանող թագավորազներին բնակեցրեց Ասորեստանի սահմանների մոտ՝ Սիմ լեռան շրջանում, այսինքն Աղձնիքում, պարզորոշ ցույց է տալիս, որ Սանասար-Սարասարը և Ադրամելեքը իրոք փախուստից հաշված տարիներ հետո բնակեցվել են Աղձնիքի տարածքում, սակայն ոչ թե Սկայորդու, այլ նրա որդու՝ Պարույրի ձեռքով: Այդ առումով բնավ էլ պատահական չպետք է համարել ներքոհիշյալ այն տեղեկությունները, թե հայկական Սանասունք կամ Սասուն գավառի անու-

[116] АВИИУ, N 69, 71:

[117] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 420:

նը սերում է Սանասարի անունից[118] և որ Սանասարի սերնդից ծագել է Աղձնյաց բդեշխական տունը, իսկ Ադրամելեք-Արդամոզանից՝ Արծրունիները և Գնունիները[119]:

Կաշտարիտի-Փրաորտից հետո, որը զոհվեց Ասորեստանի դեմ մղված պայքարում, իշխանության գլուխ է գալիս Կիաքսար Ա-ը: Եթե Փրաորտը իշխել է իրոք 22 տարի, ապա նրա իշխանությունը հաշվելով 673 թ. ապստամբությունից, նրա մահը պետք է դնել 651 թ.: Սակայն այդ մոտեցման դեպքում առաջանում են մի շարք բարդություններ: Տեղ չի մնում սկյութների 28-ամյա տիրապետության շրջանի համար բավարար չափով և հազիվ թե մարերը հանդգնեին պաշարել Նինվեն Բաբելոնի 653-652 թթ. ապստամբության պարտությունից հետո, երբ Աշշուրբանապալի հաղթական բանակները գրավել էին այդ ըմբոստ քաղաքը: Ուստի մեզ առավել հավանական է թվում, որ Կաշտարիտի-Փրաորտի գահակալությունը պետք է հաշվել ոչ թե 673 թվականից, այլ մոտավորապես 677 թվից, երբ նա մի ոչ մեծ երկրամասի արքայիկ էր:

655 թվին պատերազմ սկսվեց Ասորեստանի և Էլամի միջև[120]: Ամենայն հավանականությամբ, գոյություն ուներ Մարաստանի և Էլամի միջև գաղտնի համաձայնություն ուղղված Ասորեստանի դեմ: Ուստի, օգտվելով Ասորեստանի և Էլամի միջև բռնկված պատերազմից, Կաշտարիտի-Փրաորտը փորձեց հարձակվել Ասորեստանի վրա: Պատմությունը դժբախտաբար մանրամասնություններ չի պահպանել, ուստի միայն կարելի է ենթադրել, որ Էլամի պարտությունից և նրա Շոշ մայրաքաղաքը գրավելուց ու անձնատուր եղած զորքի ներկայությամբ Թեումման թագավորին գլխատելուց հետո ասորեստանյան բանակը ջախջախել է նաև մարական բանակները, որի ժամանակ սպանվել է մարական թագավորը: Փրաորտին փոխարինած Կիաքսար Ա-ը շարունակում է պատերազմը ամբողջ թափով, փորձելով վրեժ լուծել հոր համար: Հավանաբար այդ ժամանակ էլ նա Պարտատուա-Պարույրին պսակում է թագավոր, նպատակ ունենալով նրա ուժերը ներգրավել հակաասորեստանյան պայքարի մեջ: Հերոդոտոսի համաձայն, նա պաշարում է Նինվեն, իսկ Խորենացու հաղորդմամբ նրան մեծ օգնություն է ցույց տալիս Պարույրը /իմա՛ Պարտատուան/: Մարական թագավորի կողմից Նինվեի պաշարումը, որը չի վկայված այլ աղբյուրներում, ուսումնասիրողներին տարակուսանք է պատճառել և ենթադրել տվել, որ այն շփոթված է 612 թ. դեպքերի հետ: Սակայն հիշյալ փաստը միանգամայն այլ մեկնաբանություն կստանա, եթե այն դիտարկենք Բաբելոնի 653-652 թթ. ապստամբության տեսանկյունից: Ավելի քան հավանական է, որ ապստամբ Բաբելոնը կապեր է հաստատել Մարաստանի հետ և վերջինս որպես Բաբելոնի դաշնակից հարձակվել է Ասորեստանի վրա ու պաշարել նրա Նինվե մայրաքաղաքը:

Մոտավորապես այդ ժամանակներում փոթորկված էր նաև Փոքրասիական թերակղզին: Մ.թ.ա. VII դարի սկզբներին Լյուդիական թագավորությունը ենթարկվեց կիմմերական և թրակական ցեղերի հարձակմանը, որը թերևս պատճառ դարձավ արքայական հարստության փոփոխության համար: Նոր արքայատոհմի առաջին թագավորը, որի անունն էր Գյուգես կամ Գուգգու /692-654/ ստիպված էր ծանր և դաժան պայքար մղել այս ռազմատենչ ցեղերի դեմ, որոնցից կիմմերները մինչև այդ կործանել էին Փռյուգիական թագավորությունը, որի գերիշխանության տակ էր գտնվում Լյուդիան: Այդ պայքարում Գյուգեսը ստիպված էր ապավինել ասորեստանյան օգնությանը: Կիմմերները ջախջախվեցին և դուրս քշվեցին 665 թ. Լյուդիայից, որից

118 «Սասնա ծռեր» դյուցազներգության մեջ պահպանվել է Սիննախերիբ-Սենեքերիմի որդիների՝ Սանասարի և Ադրամելեքի հիշատակությունը Սանասար և Բաղդասար անուններով:

119 Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԻԳ: Տե՛ս նաև Б.Б. Пиотровский, Ванское царство, էջ 112:

120 "Всемирная история", том I, под редакцией Ю.П. Францева ..., Москва, 1955, էջ 554:

հետո Գյուգեսը՝ իրեն բավականաչափ ուժեղ զգալով, փորձեց թոթափել ասորեստանյան ազդեցությունը և հարաբերություններ հաստատեց Եգիպտոսի թագավոր Պսամետիքոս Ա-ի հետ, որը պատրաստվում էր տապալել ասորեստանյան լուծը: Սակայն լյուդիական թագավորը ճիշտ չէր հաշվարկել իր նախկին հովանավորի հնարավորությունները, որը ճկուն դիվանագիտությամբ կարողացավ կրկին Լյուդիայի դեմ դուրս բերել կիմմերներին[121]: Հնարավոր է, որ կիմմերները գործում էին իրենց սեփական նախաձեռնությամբ և ոչ թե ասորեստանցիների դրդումով, սակայն առավել հավանականն այն է, որ Ասորեստանի Աշշուրբանապալ թագավորը կարողացել էր Լյուդիայի դեմ դուրս բերել կիմմերներին, որպեսզի Լյուդիական թագավորությունը, որ արդեն օգնական ուժեր էր ուղարկել Եգիպտոս, չկարողանա մեծ օժանդակություն ցույց տալ Պսամետիքոսին: Այսպես թե այնպես, Լյուդիան ստիպված եղավ ծանր ու ուժամաշ անող պատերազմ մղել կիմմերների դեմ և նրանց հարձակումները ետ մղելիս 654 թվին կռվի դաշտում զոհվեց Գյուգեսը: Կիմմերներին հաջողվեց գրավել թագավորության մեծ մասը և անգամ մայրաքաղաք Սարդեսը, որի միայն միջնաբերդը մնաց Գյուգեսին հաջորդած Արդիսի ձեռքում:

Չնայած պատմությունը մեզ ուղղակի փաստեր չի պահպանել, մենք հակված ենք կարծելու, որ կիմմերների հաջողությունները բնավ չէին մտնում նոր տերության Մարական թագավորության քաղաքական ծրագրերի մեջ, ուստի նրա դաշնակից սկյութական զորքերի մի մասը Պրոտոթյուես-Պարույրի որդու՝ Մադիեսի գլխավորությամբ ուղարկվում է կիմմերների դեմ: Ինչպես հաղորդվում է արդեն մեջբերված Ստրաբոնի տեղեկության մեջ, կիմմերների առաջնորդ Լյուգդամիսը, որ մինչ այդ տիրացել էր Սարդեսին և Լյուդիայի մեծ մասին, ստիպված էր պայքարել սկյութների դեմ: Կիլիկիայում տեղի ունեցած բախման ժամանակ նա սպանվեց, իսկ կիմմերները պարտություն կրեցին: Դա հնարավորություն տվեց Արդիսին, թեկուզ և ծանր ու երկարատև կռիվներից հետո, կիմմերներին պարտության մատնել և ստիպել նահանջելու Արևելք, որտեղ նրանք վերջնականապես հաստատվեցին Կապադովկիայի տարածքում, որը նրանց անունով սկսեց կոչվել Գամիրք:

Ասորեստանի վիճակը մեծապես ծանրացավ: Եգիպտոսը անկախացավ, Բաբելոնը ապստամբել էր, իսկ Նինվեն պաշարվել էր մարերի կողմից: Ըստ երևույթին 653 թվականին մահացավ Պարտատուա-Պարույրն, իսկ Աշշուրբանապալին հաջողվեց իր կողմը գրավել Մադիեսին, որն անակնկալ հարձակվեց Նինվեն պաշարած մարական զորքերի վրա: Թե ինչ խոստումներ էին տվել ասորեստանցիները Մադիեսին, մեզ հայտնի չէ, առավել ևս, որ գոռոզ Աշշուրբանապալը, որն իրոք հետո մեծ ռազմական հաջողություններ ձեռք բերեց Բաբելոնի և Էլամի դեմ մղված կռիվներում, ոչ մի ձևով չի հիշատակում իր համար խիստ ամոթաբեր Նինվեի 653 թվականի պաշարումը: Ինչ վերաբերում է Մադիեսին, ապա նա տիրացավ Մարական թագավորությանը և Առաջավոր Ասիայի մեծ մասում հաստատվեց սկյութների տիրապետությունը, որը տևեց 28 տարի:

Վերոշարադրյալից դժվար չէ ենթադրել, որ սկյութական առաջնորդ Պարտատուա-Պարույրը թագավոր էր ճանաչվել հարավային Հայաստանի վրա Վարբակես-Կիաքսար Ա թագավորի կողմից: Այն հանգամանքը, որ Աղձնիքը և նրա շրջակայքը սեպագիր աղբյուրներում հայտնի է Արմե երկիր անունով, թերևս պատճառ է դարձել, որ նա կոչվի Արմեի թագավոր: Հետագայում, երբ հին պատմության շատ իրողություններ մոռացված էին, ժողովրդական պատմական հիշողությունը լոկ տեղեկություն էր պահպանել նրա Արմե երկրի թագավոր լինելու մասին, որը և հիմք է դարձել հայոց Պատմահոր համար Պարույրին համարելու Հայոց

[121] Անդ. էջ 510:

երկրի առաջին թագավոր: Դա բնավ էլ պատահական չէր, որովհետև սկյութները այնպես ներլուծվեցին հայկական միջավայրում, որ հետագայում հայերն իրենց վերագրում էին ոչ միայն հայկյան, այլև ասքանազյան /իմա՛ սկյութական/ ծագում:

Պարտատուա-Պարույրի տիրույթներից հյուսիս գտնվող Վանի թագավորությունը նույնպես ապրում էր անհանգիստ քաղաքական կյանքով: Եթե կիմմերները էական դեր չկատարեցին Ասորեստանի և Վանի թագավորության հակամարտության մեղմացման գործում, ապա մարասկյութական դաշնակցությունը ստիպեց Վանի թագավորներին ավելի ու ավելի մերձենալ Ասորեստանին: Եթե Աշշուրբանապալն իր առաջին արձանագրություններից մեկում ի թիվս Ասորեստանի դեմ դավ նյութող երկրների հիշատակում է Վանի թագավորությունը[122], ապա 655 թ. Ռուսա Բ-ն բարեկամական այցով դեսպաններ է ուղարկում Ասորեստան, որոնք սիրալիրաբար ընդունվում են և ի ցույց դրվում էլամի նվիրակներին, որոնք եկել էին հանդուգն նամակով[123]: Եթե ի նկատի առնենք, որ Ռուսա Բ-ի դեսպանների այցը համընկավ էլամի դեմ Ասորեստանի ձեռնարկած արշավանքի հաջող ավարտին, ապա ամենայն հավանականությամբ Վանյան դեսպանությունը առաքված էր Ասորեստանի տիրակալին շնորհավորելու ռազմական հաջողության առիթով, ինչպես այդ ընդունված է դաշնակից կամ էլ բարեկամական հարաբերություններ պահպանող երկրների պարագայում: Երբ Հայկական լեռնաշխարհի հարավը ընկավ սկզբում Պարտատուա-Պարույրի, իսկ այնուհետև Մադիոսի ձեռքը և Վանի թագավորությունն իր դաշնակից կիմմերների պարտությունից հետո հայտնվեց մեկուսացված վիճակի մեջ, նկատվում է, որ այն ավելի ու ավելի կախյալ վիճակի մեջ է ընկնում Ասորեստանից, հայտնվելով

[122] АВИИУ, N 77 և ծան. 9:
[123] Անդ, N 76 /1, 2/: Տե՛ս նաև И. М. Дьяконов, История Мидии, էջ 286:

Առաջավոր Ասիայի երկրորդական և նույնիսկ երրորդական պետությունների կարգում: Սարդուր Գ-ն /645-638/ ոչ միայն պահպանում է Ռուսա Բ-ի ժամանակ հաստատված բարեկամական հարաբերությունները Ասորեստանի հետ, այլև հանձին Աշշուրբանապալի փորձում է ծեռք բերել բարերարի[124]: Բնավ էլ պատահական չէ, որ Աշշուրբանապալի հաղորդմամբ, եթե Վանի նախորդ թագավորներն իր նախնիներին մեծարել են «եղբայր» անունով, ապա Սարդուր Բ-ն Աշշուրբանապալին մշտապես դիմում է որպես իր «տիրոջը» և «հարգալից ու հնազանդորեն մատուցում էր ծանր նվերները»[125]: Թե ինչ կացության մեջ էր Վանի թագավորությունը Սարդուր Գ-ի հաջորդ Սարդուր Դ-ի օրոք, մենք ըստ էության ոչինչ չգիտենք: Նա հայտնի է Կարմիր-բլուրի պեղումներից հայտնաբերված անագապղնձի վահանի և կավե աղյուսակի գլանաձև կնիքի պատճենի բևեռագիր փոքր արձանագրություններից[126]: Սակայն տարակույս չի կարող լինել, որ թագավորությունը գտնվում էր անկման եզրին: Ուսումնասիրողները կարծում են, որ Վանի թագավորությունը գոյատևեց մինչև VI դարի սկզբները, կամ ավելի որոշակի, մինչև մոտավորապես 590 թվականը: Սակայն բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ այն կործանվեց Սարդուր Դ-ի օրոք: Այս հարցը պարզաբանելու համար, կարծում ենք, բացառիկ արժեք են ներկայացնում Պատմահոր անմահ երկի տվյալները:

Վանի թագավորների ժամանակագրությունը հատկապես թագավորության վերջին շրջանում աչքի չի ընկնում իր հստակությամբ: Ռուսա Բ-ի որդին՝ Սարդուր Գ-ն կարող էր գահակալել ըստ էության դեռ մինչև 645 թվականը և մահացած լինել 638-ից հետո: Այնպես որ նրան վերագրվող գահակալության 645-638 թվականները՝ լինելով ընդհա-

[124] АВИИУ, N 79:
[125] АВИИУ, N 72 /X, 40-50/:
[126] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 458: И. М. Дьяконов, Урартские письма и документы, N 5:

նուր առմամբ ճիշտ, պարունակում են իրենց մեջ որոշակի պայմանականություն: Հստակ է միայն, որ նա կենդանի էր 639 թվականին: Աշշուրբանապալը մահացավ 633 թվին, չնայած կարծիք կա, որ նրա գահակալությունը տևել է մինչև 627 թիվը: Մեր ձեռքի տակ եղած տվյալները, համենայն դեպս, խոսում են հօգուտ 633 թվականի: Պատմահոր մի հաղորդմամբ, Հարմայի որդի Արամը պատերազմում է Նյուքար Մադեսի դեմ, որն առաջնորդում էր մեդացվոց երիտասարդներին, «որոց մի անգամ քուշանաբար հինիւ սմբակակոխ արարեալ զսահմանս Հայոց ծառայեցոյց ամս երկուս»[127]: Ասվածի լույսով կասկած չի կարող լինել, որ Նյուքար Մադեսը ոչ այլ ոք է, բայց եթե Պարտատուա-Պարույրի որդին: Հասկանալի է նաև, թե ինչո՞ւ է նա առաջնորդում «մեդացւոց երիտասարդաց», որովհետև Կիաքսար Ա-ը պարտվել է և ընդունել նրա գերիշխանությունը: Արամի պատերազմը Մադեսի դեմ տեղի է ունեցել ըստ Պատմահոր տեղեկության Հայոց աշխարհը Մադեսի կողմից գրավվելուց երկու տարի անց: Ուստի ամենայն հավանականությամբ այդ իրադարձությունը, որն ինչպես կտեսնենք, իրականում արտացոլում է Վանի թագավորության նվաճումը, տեղի է ունեցել Աշշուրբանապալ թագավորի մահից անմիջապես հետո կամ շատ չանցած, որովհետև նրա կենդանության օրոք հազիվ թե Մադիեսը, որ գործարքի մեջ էր մտել նրա հետ, հարձակվեր հզոր Ասորեստանի աջակցությունը վայելող Վանի թագավորության վրա: Առավել հավանականն այն է, որ այդ կատարվեց հենց 633 թվին, իսկ Արամը պատերազմեց Մադիես-Մադեսի դեմ 631-ին: Հերոդոտոսի տեղեկությամբ, որը մենք արդեն մեջ ենք բերել սկյութների հարցի առնչությամբ, սկյութները մարերին հաղթելուց հետո, երբ իրենց տիրապետությունը հաստատեցին Ասիայում, այնուհետև շարժվեցին Ասորիքի վրայով դեպի Եգիպտոս, որի Պսամետիքոս թագավորը կարողացավ միայն ընծաներով ու աղերսներով նրանց ետ վերադարձնել[128]: Չնայած հույն պատմիչը կամ նրա աղբյուրը սկյութների արշավանքը դնում է մարերին հաղթելուց անմիջապես հետո, հազիվ թե այդ բանը տեղի ունեցած լիներ 653-652 թվականներին: Հավանական տարեթիվը Աշշուրբանապալի մահվան տարին է: Սկյութները նախ գրավում են Վանի թագավորությունը և այնուհետև արշավում դեպի Եգիպտոս:

Արամի պատերազմը Մադեսի դեմ, որն ուսումնասիրողների կողմից արժեքավորվում է ոչ այլ կերպ, բայց եթե ավանդական ու առասպելական պատմություն, իրական քաղաքական իրադարձություն է, որն, ինչպես կտեսնենք, հաստատվում է մնացած այլ իրողություններով: Գերի ընկած հպարտ ու պատերազմասեր Մադեսը տարվեց Արմավիր, վարսվեց պարսպի աշտարակին և ճակատին երկաթե ցից մխվեց ի տես անցորդների: Մադեսի զորքի պարտությունը և հրամանատարի սպանությունը ծանր հետևանքներ ունեցան սկյութական տիրապետության համար, որը չնայած շարունակվեց էլի մի քանի տարի, սակայն չուներ նախկին ուժը: Այդ ընթացքում ուշքի եկան նաև մարերը, որոնց նոր թագավորը՝ Կիաքսար Բ-ն խարդավանքով խնջույքի հրավիրեց սկյութ առաջնորդներին և նրանց՝ կոտորել տվեց: Այդ բանը կատարվեց անկասկած 625 թվին և մարերը վերականգնեցին իրենց անկախությունը: Ուսումնասիրողների կարծիքով այս դեպքերից հետո սկյութների մեծ մասը վերադարձավ հյուսիսային Կովկաս, վերստին միանալու իր մերձսևծովյան ազգակիցներին[129]: Այսուհանդերձ, դատելով սկզբնաղբյուրների տվյալներից, նրանց նշանակալից մասը մնաց և՛ Հայաստանում և՛ Այսր-

[127] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԺԳ:

[128] Herodoti historiarum ..., I, 101-103:

[129] "Всемирная история", том I, էջ 532. "Основная часть скифов, в это время, повидимому, постепенно уходила обратно на Северный Кавказ и проникала в Северное Причерноморье, населенное в то время родственными им частью кочевими, частью земледельческими племенами различных наименований":

կովկասյան երկրների տարածքում, ժամանակի ընթացքում լուծվելով հայ և հարևան ժողովուրդների միջավայրում: Քննությունը ցույց է տալիս, որ Հայաստանում հիշվող սակերը, սկյութեն-խալդայները և թե սասպեյրներն ու խալյուբները մնացորդներն էին սկյութական գաղթականության:

Խորենացու երկի համաձայն, որը հետևում է Մար Աբա Կատինայի մատյանին, «Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արևելեայս՝ խաղայ նոյն զօրութեամբ զկողմամբք Ասորեստանի. գտանէ և անդ զոմն ապականիչ երկրին իւրոյ, չորիւք բիւրովք վառելովք հետևակօք և հինգ հազար հեծելազօրու, Բարշամ անուն, յազգէ սկայիցն. որոյ սաստկագոյնս նեղեալ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր: Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբազումն ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի զինակրաց նորա պատահեալ մեռանի: Եւ զայս Բարշամ վասն իւրոց արութեան բազում գործոց աստուածացուցեալ պաշտեցին Ասորիք ժամանակս յոլովս: Իսկ զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ բազում ժամանակս»[130]: Չնայած հաղորդման առասպելախառն բնույթին, այն պարզապես հավաստում է Արամի կողմից Հյուսիսային Միջագետքը գրավելու մասին: Ամենայն հավանականությամբ այս իրադարձությունները ծավալվում են հիմնականում 625 թվից հետո և Արամը հանդես է գալիս որպես մարերի բարեկամ, թերևս նաև դաշնակից: Դատելով առկա կցկտուր նյութից, Արամը այս դեպքերի ժամանակ իրեն անվտանգ էր զգում արևելյան սահմանագլխին, որը կարելի է բացատրել հայերի և մարերի բարեկամական, իսկ ծայրահեղ դեպքում ոչ թշնամական հարաբերություններով:

[130] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԺԴ:

Հյուսիսային Միջագետքը գրավելուց հետո Արամն իր ծավալման ուղղությունը տեղափոխում է արևմուտք, որի վերաբերյալ, Խորենացին հայտնում է հետևյալը. «Այլ որ ինչ յարևմուտս կոյս ընդ Տիտանեանսն է սորա գործ քաջութեան՝ ասել կայ մեզ առաջի: Աստ յարևմուտս շարժեալ ի վերայ առաջնոյն չորիւք բիւրովք հետևակազօրու և երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկացւոց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա: Եւ քանզի զարևելեանն և զհարաւայինն նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոքիկ, Սիսակեանցն զարևելս, և որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին՝ ոչ ինչ այնուհետև կասկած շփոթից ուստեք ունէր: Վասն որոյ յերկարեալ ժամանակս լինել յարևմուտս՝ պատահէ նմա Պայապիսն Քաաղեայն Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտուն և զՈվկիանու: Որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով ի կղզի ինչ ասիական ծովուն: Եւ իւր թողեալ զոմն Մշակ անուն յազգէ հրմէ և բիւր մի ի զօրացն ի վերայ աշխարհին՝ և ինքն դառնայ ի Հայս»[131]: Այս հիշատակությունը, որի արժեքը դժվար է գերագնահատել, հայոց հին պատմության գոհարներից է, որի համար պետք է երիցս շնորհակալ լինենք Պատմահորը: Սակայն, մեր կարծիքով, այն մինչև այսօր ճիշտ չի հասկացվել: Գերմանացի նշանավոր հայագետ Հ.Մարքվարտը գտնում էր, որ հունական Զևսի և Տյուփոնի առասպելի հայկական տարբերակը պահպանվել է Մովսես Խորենացու երկում, որը պատկերում է արմենների ցեղապետ Արամի և Պայապիս Քաաղեայի կռիվը և որ պատահական չէ, որ նրանց կռիվը տեղի է ունեցել հենց այն նույն վայրում Մաժակ-Կեսարիայի շրջակայքում, հրաշունչ Արգեոս լեռան ստորոտում, որի տակ թաղվել է հրեշ Տյուփոնի դիակը: Ըստ այդմ էլ Տրոյայի պատերազմի ժամանակ հիշատակված արիմներին համարում է արմենների վերաբերյալ հնա-

[131] Անդ:

գույն վավերացումը[132]: Հ.Մանանդյանը ևս նկատել է, որ Խորենացու հիշյալ հաղորդման մեջ կարող են պահպանված լինել աղոտ հիշողություններ հայերի ամենահին անցյալի մասին[133]: Հարցիս լավագույն գիտակներից մեկը՝ Ս.Երեմյանը պաշտպանում է արված ենթադրությունները և իր հերթին եզրակացնում, որ Արամի վերաբերյալ այն տեղեկության մեջ, ըստ որի «Բայց հրաման տայ /Արամը –Հ.Բ./ բնակչաց աշխարհին՝ ուսանել գիսսս և լեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զԿողիմայն զայն Պռոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա: Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանսն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլև Չորրորդ: Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք: Իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանսն՝ մեզ ոչ է հաճոյ այլոց որչեսափ կամք իցեն», Արամի կողմնապետ Մշակի անվան մեջ պահպանվել է Փռյուգ-մյուսիացիների *Մուշկ* ցեղանունը՝ հին հայկական ձևով[134]: Շարունակելով իր միտքը զարգացնել, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ *Πρώτην Ἀρμένιαν*-ը կամ *Պռոտին Արմենիան,* որ Խորենացին ստուգաբանում է իբրև «Առաջին Հայք», իրականում նշանակել է «Նախնական Հայաստան»: Նույն սխալը նրա կարծիքով տեղ է գտել նաև «Աշխարհացույց»-ում [135]:

Հավելումն այս ամենի, Խորենացին կամ, ավելի ճիշտ, նրա աղբյուրը հավաստում է, որ «Արամայ բազում գործք քաջութեան պատմին մարտից նահատակութեան, և ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց, յորոյ անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմենիկք» [136] :

Մեր քննության արդյունքները, կարևոր շփման կետեր ունենալով նախորդ ուսումնասիրողների տեսակետների հետ, միաժամանակ որոշակիորեն տարբերվում են նրանցից: Ի տարբերություն Զևսի և Տյուփոնի կռվի առասպելի, որն իրոք առասպել է բառիս իսկական իմաստով, Արամի և Պայապիս Քաաղեայի կամ Քաղեայի պատերազմը իր մեջ առասպելական ոչինչ չի պարունակում: Պայապիս Քաաղեան, որի ինքնությունը մենք կփորձենք պարզել, գրավել է Փոքրասիական թերակղզու արևմուտքը պատերազմով, տիրելով զենքի ուժով Պոնտոսի, այսինքն Սև ծովի և Ովկիանոսի, այսինքն Միջերկրական ծովի միջև ընկած շրջանը: Նրա ռազմական հաջողությունները հանգեցնում են Արամի հետ պատերազմի, որն ավարտվում է վերջինիս հաղթանակով: Արամն էլ, գրաված հողերում թողնելով իր կողմնապետ Մշակին, վերադառնում է Հայաստան: Ամեն ինչը շատ նյութական պատմություն է, զուրկ որևէ ձևի առասպելաբանությունից, ուստի պետք է պարզաբանել, թե իրականում ի՞նչ որոշակի պատմական իրադարձություններ է արտացոլում այս հետաքրքիր պատմությունը:

Հրաչյա Աճառյանը, անդրադառնալով Պայապիս Քաաղեայի խնդրին, գրում է, որ *Պայ* նշանակում է առասպելական մի էակ, որ մարդուց է առաջանում և երեների հետ է առածում, որից ծագում է և *պայիկ*–ը նույն նշանակությամբ:

---

132 J. Markwart, Die Entstehung und Wiederherrstellung der armenischen Nation, Berlin, 1919, էջ 67: Տես նաև նույնի Le berçeau des arméniennes –"Revue des Études arméniennes", 1928, VIII, F. 2, էջ 221-223:

133 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Ա, էջ 23:

134 «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. Ա, էջ 234:

135 Անդ, էջ 234:

136 Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ.ԺԲ:

Հեղինակի կարծիքով նույն ծագումն ունի նաև «Պայապիս Քաղեայ յատուկ անունը՝ Խոր. Ա.ԺԴ /կազմված *պայ+ապիս* /կովը/ և *քաղ* բառերից»[137]: Իսկ Հ.Մարքվարտն անունը բխեցնում էր եգիպտական *paa'ti*ς անունից, որն իմաստուն Ամենովփիսի հայրն էր[138]: Հնարավոր է, որ Պայապիսը ընդհանրապես այդպիսի իմաստ ունի, սակայն մենք բնավ էլ համոզված չենք, որ կարող էր օգտագործվել Փոքր Ասիայի պայմաններում, որտեղ Ապիսի կամ սրբազան եգիպտական ցուլի պաշտամունքը չկար: Այսինքն չենք բացառում ցուլի պաշտամունքը, սակայն անհավանական ենք համարում դրա Ապիսի անվան հետ կապված լինելը: Ուստի կարծում ենք, որ Պայապիս Քաաղեայ անունը աղավաղումն է ինչ-որ մի նշանավոր անձի, որ մոտավորապես այդ ժամանակներում իշխել է Փոքր Ասիայի արևմտյան մասում: Հերոդոտոսի տվյալներից ելնելով, որոնք հավանաբար որոշ ճշգրտումների կարիք ունեն, կարծում ենք, որ այդ անձնավորությունը ոչ այլ ոք է, բայց եթե Լյուդիայի թագավոր Սադեատը: Համենայն դեպս այդ եզրակացությունը բխում է լյուդիական թագավորների ժամանակագրությունից: Հույն Պատմահոր տվյալների համաձայն, Լյուդիայում իշխել են Գյուգեսը /38 տարի/, Արդիսը /49 տարի/, Սադեատը /12 տարի/, Ալեատը /57 տարի/ և Կրյուսոսը /14 տարի/ [139]: Եթե բերված տվյալները ընդունում ենք առանց փոփոխության, ապա Գյուգեսի իշխանությունը ընկնում է 716-678 թվականներին, որը հնարավոր չէ այն պարզ պատճառով, որովհետև Գյուգեսը զոհվեց միայն 654 թվին: Իսկ եթե նրա իշխանությունը դնում ենք 692-654 թթ., ինչպես ընդունված է պատմագրության մեջ, ապա Լյուդիական թագավորության անկումը ընկնում է 522

[137] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Գ հատ., Երևան, 1979, էջ 15-16:
[138] J. Markwart, REA, 8/1928/, 221:
[139] Herodoti historiarum …, I, 14, 16, 25.

թվին, որը բացառվում է այլ սկզբնաղբյուրների տեղեկություններով: Եթե հետընթաց հաշվարկ ենք կատարում, դրա համար հիմք ընդունելով Լյուդիական թագավորության կործանման 546 թվականը, ապա հերոդոտյան ժամանակագրությունը իրական տևողության նկատմամբ տալիս է 24 տարվա ավելցուկ, որն ուսումնասիրողները փորձում են վերացնել տարբեր ճանապարհներով: Այսպես, Բիկերմանի ժամանակագրական ցանկերից ընդհանրապես դուրս է թողնված Սադեատը[140]: Այս մոտեցումը, որը դժբախտաբար համապատասխան բացատրություն չի ստացել հեղինակի կողմից և մենք չգիտենք նրա շարժառիթները, մեր կարծիքով, ընդունելի է: Ավելին, եթե մեր ստորև տրված հարցադրումները ճիշտ են, ապա հերոդոտյան ժամանակագրության վերականգնման բանալին պահպանել է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը:

Հր. Աճառյանն իր «Արմատական բառարանում» *պայազատ* բառի վերաբերյալ գրել է. «Պայազատ, ի-ա հլ. «ժառանգորդ, ցեղի մնացորդը, յաջորդ, գահաժառանգ» Եւս. Քր.Ոսկ. մ.ա. 9, 17. «ազնուատոհմ» Նար.Կեչառ. աղէքս. որից *պայազատել* «իշխանութիւնը յաջորդութեամբ ստանալ, յաջորդել» Եւս. Քր.Խոր. «տիրել, իշխել» Յհ. կթ. *պայազատութիւն* Եւս. Քր. անպայազատ «բնաջինջ եղած, սերունդը անճիտած» Խոր. յարմարեալ ձև է *պայ-ազն* Մագ. թղ. 63 «սինլլքոր» /ըստ ՆՀԲ/, «իշխան» /ըստ ԱԲ/ = Պհլ. ˣpayāzāt ձևից, որ է հպրս. ˣpati-azata «յաջորդ յազատութեան, որ է ազնուականութեան», կազմուած pati մասնիկով՝ āzāta - «ազատ» բառից»[141]: Այս տեղեկությունների լույսով կարծում ենք, որ *Պայապիսի* մեջ *պայ*-ը ոչ թե դիցաբանական ինչ-որ կենդանի է, այլ նշանակել է *ժառանգ, հետևորդ, թագաժառանգ,* իսկ Ապիս-ը

[140] Э. Бикерман, Хронология древнего мира, էջ 167:
[141] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Դ հատոր, էջ 16:

Լյուդիայի թագավոր Արդիսի անվան աղավաղումն է, ազդված թերևս հեղինակին հայտնի մեկ այլ Պայապիս անունից: Այս դեպքում Պայապիս>Պայարդիսը պետք է նշանակեր պարզապես «Արդիսի հաջորդ» կամ «Արդիսի թագաժառանգ»: Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա *Քաաղեայն* կամ *Քաղեայն* պետք է նույնանա Սադեատին կամ Սադյուատեսին: Հավանաբար հունարեն Σ-ն շփոթված է K-ի հետ, սակայն ավելի հավանական է, որ K-ն հնչյունափոխվել է Σ-ի, ինչը հատուկ է հնդեվրոպական լեզուներին[142]: Ինչ վերաբերում է «դ»-ին, ապա հնարավոր են երկու տարբերակ: Կամ այն հունարենում էլ եղել է Δ և գրիչների կողմից շփոթվել է Δ- ի հետ կամ էլ աղավաղումը տեղի է ունեցել հայերենում «Դ»-ի և «Ղ»-ի գրչագրական սխալի հետևանքով: Այս երկու ենթադրությունները կարելի է ճշտել ընթերցումների համադրական քննության ճանապարհով, եթե իհարկե գործ չունենք մի հնչյունի հետ, որը հույների կողմից ընկալվել է որպես Δ, իսկ հայերի կողմից՝ Λ[143]: «Տ»-ի վերածվելը հայերենում «Յ»-ի այնքան բնական է և օրինաչափ, որ *Քաղեայն*-ը կարելի է նույնացնել Սադեատին:

Ասվածի լույսով, երբ կրկին անդրադառնում ենք Արամի կռվին, ապա պարզ է դառնում, որ նա պատերազմել է Լյուդիական թագավորության դեմ, որի զորքերին գլխավորել է ոչ թե թագավոր Սադյուատեսը, այլ Արդիսի ժառանգ Սադյուատեսը: Այս հանգամանքը մեզ իրավունք է տալիս ենթադրելու, որ Սադյուատեսը հավանաբար երբեք չի էլ թագավորել, այլ 12 տարի եղել է հոր գահակիցը, որի հետևանքով հետագայում, երբ շատ բան մոռացված էր, այդ 12 տարիները գումարվել են նրա հոր Արդիսի գահակալության իրական 37 տարիների վրա, սակայն միաժամանակ մատուցվել են նաև որպես նրա ինքնուրույն գահակալության տարիներ, ինչի հետևանքով լյուդիական թագավորների տոհմագրության մեջ մուծվել են հավելյալ 24 տարիները: Անշուշտ կարելի է ենթադրել, որ նա իրոք 12 տարի գահակալել է: Այդ դեպքում նրա հոր իշխանության շրջանը պետք է կրճատել 24 տարով, որը կատարելու համար լուրջ կռվան չկա: Մյուս կողմից ստացվում է, որ թագաժառանգ Սադյուատեսի կռիվը Արամի հետ եղել է առնվազն VII դարի 30-ական թվականներին, որը հավանական չէ Մադիոսի իշխանության պայմաններում: Ավելին, մենք հակված ենք Արամի արշավանքը զետեղելու 625 թվականից հետո, երբ մարերին հաջողվել էր թոթափել սկյութական լուծը, սակայն՝ պայքար մղելով Ասորեստանի դեմ,նրանք ի վիճակի չէին մեծ ուշադրություն դարձնելու արևմուտքի երկրներին:

Եթե մեր հայացքը հառում ենք հիշյալ մշուշապատ ժամանակաշրջանին, որը պատկերող կցկտուր տեղեկությունները, ինչպես տեսանք, շպարվել են առասպելականացված պատմություններով, ապա կարող ենք անգամ կռահել, որ Արամը, որի անձին շուտով կանդրադառնանք, սկզբում մարերի իրավահավասար դաշնակիցն էր: Նա Ասորեստանի վրա հարձակվել է, ամենայն հավանականությամբ, 625 թվից հետո և իրոք տիրացել է Հյուսիսային Միջագետքին, որը վաղ միջնադարյան հայ պատմագրությունը մշտապես համարում էր հայկական երկրամաս: Որքան էլ զարմանալի և առավել ևս անհավատալի թվա, այս հեռավոր ժամանակների քաղաքական կացությունը ուղղակի արտացոլված է Փավստոս Բուզանդի երկում: Պատմիչի խոսքերով «Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ և խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան: Եւ առաքէր հրեշտակս

142 Դրա լավագույն օրինակն է հայերենի «սիրտ» բառը, որը լատիներենում հնչում է «card»=Կարդ:

143 Թերևս դրա արտահայտությունն է Tugdami անունը սեպագիր արձանագրություններում և *Λυγδαμί՛ς* -ը հունական աղբյուրներում:

առ թագաւորն Յունաց, եթէ Կեսարիաւ հետ և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր. և զՈւռհա քաղաք շինեալ է նախնեաց մերոց. արդ եթե ոչ կամիս խանգար ինչ առնել՝ տուր ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ»[144]: Բնավ չանդրադառնալով այն խնդրին, թե Պապ թագավորը IV դարում հռոմեական կայսր Վաղեսից իրոք պահանջել է, թե ոչ Կեսարիան, Ուռհան և մյուս տասը քաղաքները, որն ամենայն հավանականությամբ տեղի չի ունեցել, մեզ համար կարևորն այն է, որ հայ ժողովրդի պատմական հիշողությունը նշված քաղաքներն իրենց շրջակա տարածքներով համարել է հայկական երկիր, որի նկատմամբ՝ ժողովրդի ազգային մտածելակերպը ներկայացնող պատմիչի կարծիքով, Պապ թագավորը կարող էր հավակնություններ ի հայտ բերել: *Հայոց պատմության մեջ բացառվում է որևէ մեկ այլ ժամանակաշրջան, որ հայերին հաջողված լինի իշխել հիշյալ տարածքներին, ուստի թե Կեսարիայի շրջանը և թե Ուռհան կարող էին գրավված լինել VII դարի վերջին երեսնամյակում:* Արամի համար բնավ էլ դժվար չէր գրավել հոգևարք ապրող Ասորեստանի հյուսիս-արևմտյան շրջանները: Որ այդ բանը իրականացվել էր և Ասորեստանի դաշտը հայտնվել էր Հայաստանի իշխանության ներքո, իր հաստատումն է գտնում Բեհիսթունի եռալեզվյան արձանագրության մեջ[145]: Այսպես, խոսելով հայերի 521-520 թթ. ապստամբության մասին, Դարեհ Ա Վշտասպը նշում է, որ «Այնուհետև Արմինա ուղարկեցի Վահումիսա անունով մի պարսկի, իմ ծառային, և այսպես պատվիրեցի. «Գնա նվաճե այդ ապստամբ զորքը, որ ինձ չէ հնազանդվում»: Վահումիսան գնաց Արմինան նվաճելու: Ապստամբները հավաքվեցին և դուրս ելան Վահումիսայի դեմ պատերազմի: Ասորեստանի մեջ Իզալա անունով մի երկիր կա: Ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն ինձ օգնեց: Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ սպանեց ապստամբների բանակից: Անամակա ամսի 15-ն էր, երբ ճակատամարտը տեղի ունեցավ»[146]: Ուսումնասիրողները այս փաստը որպես կանոն մատուցում են որպես հայ ապստամբների հաջող մարտական գործողությունների արդյունք: Բնավ էլ կասկածի տակ չառնելով նրանց ռազմական հաջողությունները, մենք գտնում ենք, որ ապստամբները ոչ թե հաղթել են պարսիկներին և մտել Ասորեստան, այլ ճակատամարտ են տվել պարսիկներին Արամի կողմից գրավված Ասորեստանի դաշտում՝ Իզալա երկրում[147]:

Հիմք ունենալով վերն ասվածը, միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ մարերի դեմ ապստամբած հայերի ռազմական ուժը, որն ինչպես տեսանք բաղկացած էր 40000 հետևակից և 8000 հեծելազորից, զարմանալիորեն համընկնում է Արամի բանակների մեծությանը: Մադեսի դեմ պատերազմելիս նա ռազմադաշտ է դուրս բերում մոտ 5 բյուր, այսինքն 50000-ից մի փոքր պակաս թվով մարտիկներ: Բարշամի դեմ կռվում հայկական կողմից մասնակցում են 4 բյուր հետևակ և 5000 հեծյալ մարտիկներ, իսկ Պայապիս Քաաղեայի դեմ ունեցած պատերազմում Արամի բանակը կազմված էր 4 բյուր հետևակ և 2000 հեծյալ զինվորներից: Պատմության մեջ պատահականություններ անշուշտ լինում են, սակայն հազվագյուտ, ուստի այս մեծաթիվ համապատասխանությունները ոչ մի կերպ չեն կարող դասվել պատահական նմանությունների շարքը: Հանձին Արամի մենք, ամենայն հավանականությամբ, գործ ունենք VII դարի վերջին մարական գերիշխանության դեմ հանդես եկած հայոց թագավորի հետ, որի անունը չի պահպանվել:

---

144 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, V, գլ.ԼԲ:

145 "Хрестоматия по истории древнего Востока", М., 1963, էջ 358-364:

146 Ըստ Յուստիի ճակատամարտը տեղի ունեցավ 520 թ. հունվարի 18-ին, իսկ ըստ Քյոնիգի՝ 522 թվականի դեկտեմբերի 31-ին:

147 Ամենայն հավանականությամբ Մասիոս լեռների շրջանում, որտեղ գտնվում է Իզալա լեռը:

Մենք արդեն վերը նշել ենք, որի VII դարի 30-ական թվականներին, ավելի որոշակի, հավանաբար, 633 թվին սկյութները գրավեցին Վանի թագավորությունը և երկու տարով ենթարկեցին իրենց տիրապետությանը: Ելնելով դրանից, մենք գտնում ենք, որ Սարդուր Դ-ի իշխանությունն էլ 633-ին վերջ գտավ: Դրան հաջորդող ժամանակաշրջանում, սեպագիր արձանագրությունների համաձայն, թագավորել է Երիմենայի որդի Ռուսա Գ-ն: Ն. Հարությունյանի կարծիքով, Ռուսա Գ-ից առաջ թագավորել է նրա հայրը՝ Երիմենան, որին Ի.Մ. Դյակոնովը վերագրում է Կարմիր բլուրում 1957 թվականին հայտնաբերված աղյուսակներից մեկը: Անկախ այն հանգամանքից, թե ինչ են ասում աղյուսակները, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Երիմենան հենց այն անձնավորությունն է, որի գործունեությունը վերագրվել է Արամին: Ռուսա Գ-ն Երիմենայի որդին է, սակայն ոչ մի անգամ չի հիշատակված այն մասին, որ նա Սարդուր Դ-ի զավակն է: Սա անշուշտ պատահական չէ, որովհետև Երիմենան, ամենայն հավանականությամբ, հիմք է դրել նոր արքայատոհմի, որը հնարավոր է, որ խնամիական կապեր ունեցած լինի Վանյան հարստության հետ, սակայն միանգամայն առանձին արքայական ընտանիք էր: Այդ առումով բնավ էլ պատահական չէ, որ Երիմենայի անունը անհարիր է Վանյան թագավորների տոհմական անվանացանկին:

Երիմենան տեղական արքայիկ է, որին հաջողվում է տապալել սկյութ Մադես-Մադիոսի իշխանությունը Հայաստանում և հիմք դնել մի հարստության, որը հայկական աղբյուրներում հայտնի է Երվանդյան անունով: Երբ այժմ ասվածի տեսանկյունից ենք նայում Խորենացու այն տեղեկությանը, թե «յորոյ /Արամի –Հ.Բ./ անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք»[148], այն բնավ էլ անիմաստ չի

[148] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԺԲ:

հնչում: Երիմենայի վրա, որի ճիշտ ձևը, մեր կարծիքով, *Ա-րամանի* է կամ *Արամենի*, որ թերևս նշանակում է *զինված մարդ*, հանգամանք, որ բնորոշ է եղել հայերին դեռ իրենց պատմության վաղնջական ժամանակներում, պարսիկները ավելացրել են ցեղային պատկանելիություն ցույց տվող «*կ*» մասնիկը[149], որով և առաջացել է «*արմենիկ*»-ը, իսկ հույները հունականացրել են անունս այն օժտելով «-ος» վերջավորությամբ: Երիմենա-Արամանիի ցնցող հաղթանակները Մադեսի և այնուհետև ասորեստանցիների ու Յուդիացիների նկատմամբ պետք է, որ պատճառ դառնային հայերին կոչելու իրենց հաղթական թագավորի անունով: Սակայն այդ անունը միաժամանակ հավաստում է, որ նրա կրողները արիացիներ են, այսինքն հնդևրոպական ժողովուրդ: Ըստ այդմ էլ այն վարկածը, թե հայոց ապստամբ թագավորի անունը եղել է Երվանդ, քանի որ վերջինիս որդին Տիգրան Երվանդյանն էր, պետք է մերժել անվերապահորեն:

Ժամանակագրական առումով ինչպե՞ս պետք է թվագրել Երիմենա-Արամանի-Արամի մեծագործությունները: Չբացառելով անշուշտ սխալների հնարավորությունը, մենք հավանական ենք գտնում, որ նրա կռիվները ասորեստանցիների դեմ տեղի են ունեցել 625-620 թթ, իսկ Քաաղեայ-Սադյուատեսի դեմ՝ 620-617 թվականներին: Երիմենան, լինելով Կիաքսարի լիարժեք դաշնակիցը, անկասկած անհանգստություն է ապրել իր երկրի համար Ասորեստանի Նինվե մայրաքաղաքի դաժան կործանումից հետո և աշխատել է այլևս չաջակցել իր դաշնակցին: Սկզբում Կիաքսարը վախեցել է նրա դեմ վճռական քայլեր ձեռնարկել, սակայն ի վերջո թիկունքն ամրապնդելու նպատակով, արշավանք է կազմակերպել Հայաստան՝ պարսից թագավոր Կյուրոսի ղեկավարությամբ: «Բաբելոնյան ժամանակագ-

[149] Պարսիկ նշանակում է «պարսի» ցեղին պատկանող մարդ, որտեղ «կ»-ն ցեղային ցուցիչ է:

ության» տվյալների համաձայն, մարական արշավանքը Վանի թագավորության դեմ, սակայն իրականում էրիմենայի պետության դեմ, տեղի է ունեցել Նաբոպալասար թագավորի 17-րդ տարում, այսինքն 609 թվականին[150]: Այս անգամ էրիմենան պարտվել է և ստիպված եղել զորք տրամադրել և հարկ վճարել իր նախկին դաշնակցին: Որ այդ իրոք պետք է կատարված լիներ 609-ին, անուղղակիորեն վկայում է նաև Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ն, որովհետև հայերին իրենց ենթարկելուց հետո մարերը արշավում են Ասորեստանի դեմ, սակայն ոչ մի խոսք չի ասվում Նինվեի մասին, որն անշուշտ արդեն գրավված էր: Դեպքերի բերումով, թե պատահաբար Մարական արշավանքին ժամանակագրորեն համընկնում է բաբելոնցիների 609 թ. արշավանքը դեպի հյուսիսային Միջագետք: «Գեդդի ժամանակագրության» համաձայն, Նաբոպալասարը, օգնության շտապելով իր Խառանի կայազորին, որը պաշարվել էր Ասորեստանի թագավոր Աշշուրուբալլիտ Բ-ի և նրա դաշնակից եգիպտական զորքերի կողմից, ստիպում է ասորեստանյան թագավորին հեռանալ Իզալայի լեռնային շրջանը: Ասորեստանցիները ճակատամարտ են տալիս, սակայն բաբելացիներին հավանաբար հաջողվում է հաղթել և կրակի տալ Իզալա երկիրը: Մեծապես վնասված «ժամանակագրություն»-ն այնուհետև հայտնում է, որ բաբելական զորքը հասել է մինչև «Ուրաշտու քաղաքի գավառը», այսինքն՝ Ասորեստանի ծայր հյուսիսային գավառները և այնուհետև վերադարձել իր երկիրը[151]: Անտարակույս է, որ «Գեդդի ժամանակագրության» Ուրաշտուն այլևս Վանի թագավորությունը չէ, այլ էրիմենայի պետությունը, որի հետ այդպես էլ հայտնի չէ. Բաբելոնի թագավորը բախում ունեցավ թե՞ ոչ:

[150] АВИИУ, N 81:

[151] АВИИУ, N 81: «Ուրաշտու»-ն «Ուրարտու»-ի արտասանությունն է ակկադերեն լեզվի բաբելոնյան բարբառում /տե՛ս N. Adontz, Histoire d'Arménic, Paris, 1946, էջ 296: Տե՛ս նաև Luckenbill D.D., Ancient Records' of Assyria and Babelonia, II, 1927, 1183-1184:

եթե անգամ այս երկու ուժերը չբախվեցին, այնուամենայնիվ դժվար չէ կռահել, որ բաբելական վտանգը ստիպել է էրիմենային ավելի զիջող գտնվել մարերի հետ ունեցած փոխհարաբերություններում:

Մեր առջև ծառանում է մեկ այլ հարց ևս: Ունեցել է էրիմենա-Արամանին Տիգրան անունով որդի թե՞ ոչ: Մեր պատասխանը միանշանակ ժխտական է: Չնայած «Կյուրոպեդիա»-ում հիշյալ դեպքերի առնչությամբ նրա հիշատակությանը, Տիգրանի հայտնվելը VII դարի իրադարձությունների ոլորտում արդյունք է այն բանի, որ Քսենոփոնը թյուրիմացաբար իրար է խառնել երկու տարբեր դարաշրջանների անցքերը: «Կյուրոպեդիա»-ն մեզ օգնում է պարզելու, որ էրիմենայի՝ մարերին օգնության գնացած որդու անունը եղել է Էմբաս[152]: Ըստ որում նշված հատվածում Տիգրանի անունը չի էլ հիշատակվում, որն աներկբայորեն հավաստում է նրա VI դարի գործիչ լինելը, ինչպես վկայված է Խորենացու մոտ, ինչը կարելի է եզրակացնել «Կյուրոպեդիա»-ի մյուս տեղեկություններից: Այս զորավարը, որքանով մենք կարող ենք դատել սկզբնաղբյուրներից, նույնպես իրական անձնավորություն է, ինչպես և հայոց թագավորի որդի Սաբարիս-Շավարշը: Խորենացին հայոց տոհմապետերի շարքում Բելոքոսի ժամանակ հիշած Հայկակից հետո հիշում է Ամպակին, Առնակին և Շավարշին[153]: Դժվար չէ տեսնել, որ «Կյուրոպեդիայի» Էմբասը հիշյալ ցուցակի Ամպակն է, իսկ Խորենացու Շավարշը՝ «Կյուրոպեդիայի» Սաբարիսը: Նույնիսկ կարելի է ենթադրել, որ Առնակը ևս նրա որդին է, որի անունը պարզապես չի պահպանել հույն պատմիչը: Իսկ եթե մեր երևակայությունը մի փոքր շարժենք, ապա բնավ անհավանական չէ, որ ցուցակի Հայկակը նույնանա էրիմենա-Արամանիին: Ըստ երևույթին հին ժամանակներում «արմեն»-ի տակ հաս-

[152] Xenophontis Cyropaedia, V, II, 38:

[153] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԺԹ:

կացվել է Հայկը, հետևաբար նույն տրամաբանությամբ «Արմենիկը» կարող էր ընկալվել «Հայկակ», այսինքն փոքր Հայկ: Անշուշտ ասվածը կարիք ունի լուրջ և հիմնավոր ուսումնասիրության, սակայն մեր կարծիքով մոտեցումը ճիշտ է և այդ հանգամանքը ստիպում է մեկ անգամ ևս առավել ուշադրությամբ վերաբերվել Խորենացու բերած ցուցակներին, որոնք որոշ ուսումնասիրողներ պատրաստ են նվազագույնը անտեսել, համարելով ուշ շրջանի կեղծիք: Չնայած որ նրանք արդեն Խորենացուն հասել են իրար խառնված և շփոթներով լի վիճակում, այսուհանդերձ իրենց մեջ պահպանում են որոշակի պատմական իրողություններ, որոնք սպասում են բազմակողմանի գիտելիքների տեր, փայլուն դպրոց անցած և մեռած լեզուների քաջատեղյակ ուսումնասիրողին:

Ի մի բերելով վերն ասվածը, կարելի է վստահորեն հայտարարել, որ հայերի հակամարական առաջին ապստամբությունը տեղի է ունեցել 612-609 թվականների միջոցին: Ըստ էության դա ապստամբություն էլ չէր, այլ հրաժարում դաշնակցային պարտականություններից, սակայն մարերին հաջողվեց հայերին ենթարկել իրենց: Այսուհանդերձ Մարաստանի և Հայաստանի փոխհարաբերությունները բնավ էլ նվաճվածի և հաղթողի հարաբերություններ չէին, այլ կրտսեր դաշնակցի, որը որոշակի պարտավորություններ ունի դաշինքի ավագ անդամի նկատմամբ: Ավելին, բնավ էլ անտրամաբանական չէ կարծել, որ 585 թ. Հալիսի ճակատամարտից հետո, երբ Մարական և Լյուդիական թագավորությունների սահմանը Փոքր Ասիայում դարձավ Հալիս գետը, նոր նվաճված շրջանները, գտնվելով մեծ հեռավորության վրա Մարաստանից, հանձնվեցին հայոց թագավորի կառավարմանը:

Մեր հետագա քննությունը ստիպողաբար պահանջում է պատասխանել մի շատ կարևոր խնդրի, թե ի՞նչ է ներկայացնում իրենից Պատմահոր հիշատակած «Պռոտին Արմենիան»-ը, որը պատմիչը հասկացել է որպես «Առաջին Հայք»: Ս.Երեմյանը թերևս միակ մարդն է, որ փորձել է բացատրել «Պռոտին Արմենիան»-ի նշանակությունը: Նրա կարծիքով, չնայած Մովսես Խորենացին ստուգաբանում է այն իբրև «Առաջին Հայք», իրականում այդ անունը ոչ մի առնչություն չունի մ.թ. IV դարից հայտնի «Առաջին Հայք» /Armenia prima/ հռոմեական պրովինցիայի հետ, չնայած որ հարևան էր նրան, այլ նշանակում է «Նախնական Հայաստան»: Հեղինակի կարծիքով Խորենացու սխալը կրկնել է և VII դարի «Աշխարհացույց»-ի հեղինակը: Զարգացնելով իր միտքը, նա եզրակացնում է, որ Մովսես Խորենացու մոտ պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ նրա ժամանակ /մ.թ. V դար/ ժողովուրդը հիշողություններ էր պահպանել Փոքր Ասիայում հայերի սկզբնական հայրենիքի մասին, և նրան հայտնի էին այնպիսի ավանդություններ, որոնց համաձայն հայերի նախահայրը ոչ թե Հայկն էր, այլ Արամը, որի անունով էլ հարևան ժողովուրդները հայերին կոչում էին արմեններ[154]: Ս.Երեմյանը կիսում է Ի.Դյակոնովի այն տեսակետը, որ գաղափարագիր խեթերեն արձանագրությունների տարածման շրջանը «բավական ճշգրիտ համընկնում է Փոքր Հայքի սահմանների հետ, միայն հարավում և հարավ-արևմուտքում անցնելով փռյուգիական Տիանիտիսի, Կիլիկիայի և Ասորիքի տերիտորիան»[155]: Հիշյալ հեղինակների կարծիքով այս տարածքում հայալեզու բնակչությունը հաստատվել էր մ.թ.ա. VI դարից շատ առաջ և «Սեփական գրավոր և գրական ավանդույթ չունենալով, նրանք օգտվում էին այն բնակչության լեզվով և գրով, որը նրանք գտել էին այստեղ դեռ XII դարում մ.թ.ա., այն է՝ «հիերոգլիֆիկ խեթերի», որով էլ իբր բացատրվում է «հիերոգլիֆիկ խեթերեն» արձանագրությունները:

---

154 «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. Ա, էջ 234—235:

155 Ի.Մ. Դյակոնով, խեթերը, փռյուգիացիները և հայերը. «Տեղ. ՀԳԱՀԳ», 1956, N 11, էջ 73: «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. Ա, էջ 235:

ների տարածման տերիտորիայի մոտավոր համընկնումը հայերի տարածման ենթադրական հնագույն տերիտորիայի հետ: Սրանով էլ բացատրվում է նաև զգալի խեթական լեզվական շերտի առկայությունը հայերենում: Ի վերջո Դյակոնովը, որի տեսակետը լիովին կիսում է Ս.Երեմյանը, գալիս է այն եզրակացության, որ «առաջին հազարամյակի սկզբի հայերը հանդիպանում էին տեղական խեթական /գերազանցապես «հիերոգլիֆիկ խեթական»/ բնակչության և թրակափռյուգիական «մուշկերի» /բառիս այն առումով, որը հատուկ էր II հազարամյակին մ.թ.ա./ ցեղերի խառնուրդ[156]»:

Հարգարժան գիտնականների կարծիքի հետ դժվար է համաձայնել: Եվ եթե չլիներ հարցի կարևորությունը, թերևս չանդրադառնայինք այս խնդրին, սակայն քանի որ նշված հարցադրումները վերաբերում են մի այնպիսի հարցի, ինչպիսին է հայերի եկվորության խնդիրը, հարկ ենք համարում այն հիմնական գծերով քննության առնել: Ինչպես վերը համոզվեցինք կատարված քննությունից, Արամ-Էրիմենան բնավ էլ առասպելական դեմք չէ, առավել ևս հայկական ոչ մի ավանդություն նրան չի համարում հայերի նախահայր, ինչպես փորձում են մատուցել հեղինակները: Ամեն ինչից դատելով, Արամ-Էրիմենայի շարժումը արևելքից արևմուտք է և ոչ թե հակառակը, հետևաբար «Պռոտին Արմենիան» -ի մեջ «Նախնական Հայաստան» տեսնելը անհեթեթություն է թեկուզ այն պարզ պատճառով, որ Արամի զրույցների համաձայն այն ոչ հայկական երկիր է, որի բնակիչներին նա պարտադրում է հայերեն լեզուն սովորել: Ելնելով նման մեկնակետից, պետք է ենթադրել, որ հավանաբար Խորենացու կողմից տեղի է ունեցել մի ինչ-որ հասկացության շփոթ հունարեն «Պռոտին» բառի հետ, որն էլ իր հերթին պատճառ է դարձել, որ ամեն ինչ բացատրող և մեկնաբանող հայ պատմիչը փորձի այն կապել «Առաջին Հայք» վարչական միավորի հետ: Այս պահից մենք

[156] Ի.Մ. Դյակոնով, Խեթերը, փռյուգիացիները և հայերը, էջ 70-75:

հայտնվում ենք գուշակություններ կատարող մարդու վիճակում, որն անկասկած երբեք ապահովագրված չէ սխալից: Այսուհանդերձ, որպես աշխատանքային ելակետ, կարծում ենք, որ «Պռոտին»-ը սկզբնապես եղել է « parətan », որն այնուհետև սխալ ընկալվելով հասկացվել է « πρώτην » իմաստով: Հավանաբար հիշյալ բառը հայերենում ունեցել է մոտավորապես նույն իմաստը, ինչ մարերենում, որտեղ « parət »-ը կամ « parəta »-ն թարգմանվում է «կռվել», «պայքարել մեկը մյուսի դեմ»[157]: Գրավելով Կապադովկիայի արևելյան շրջանները, որոնք այդ վաղնջական ժամանակներում «Պատուկա» կամ թերևս «Պակտ՝ուկա» էին կոչվում, Արամ-Արամանի-Էրիմենան այն անվանել է « parətan Armenian », որը թերևս նշանակել է «Գրավյալ Հայաստան»: Հետևաբար «Արամի անունը որևէ ձևով չի կապվում Չորս Հայքերի գաղափարի հետ: Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ից դժվար չէ տեսնել, որ հայոց Պատմահայրը բնավ էլ ծանոթ չի եղել Հուստինիանոսի ժամանակներից ծնունդ առած և այնուհետև Մավրիկիոս /Մորիկ/ կայսեր կողմից որոշակի վերակառուցումների ենթարկված կայսրությանը պատկանող հայկական հողերը չորս վարչական շրջանի բաժանված լինելու մասին:

Պատմահոր երկում Չորս Հայքերի մասին ասված է. «Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանսն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք երկրորդ և երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ: Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն Առաջին և երկրորդ, այլ և երրորդ և Չորրորդ Հայք»[158]: Խորենացուն հատուկ կուռ շարադրանքի պայմաններում, այս ընդամենը երկու նախադասություն

[157] "Altiranisches Wörterbuch von Christian Bartholomae, Strassburg, Verlag von Karl J. Trübner, 1904, էջ 868-869":

[158] Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԺԴ:

պարունակող հատվածը աչքի է զարնում մի շարք հակասություններով: Ստացվում է, որ Արամը նույն կարգով Կապադովկիայի կողմից մինչև իր բուն սահմանները, որոնք անբնակ երկրներ էին, լցնում է բնակիչներով և կոչում երկրորդ, երրորդ և նաև Չորրորդ Հայք: Արդեն վկայության տրամաբանությունից բխում է, որ նրանում Չորրորդ Հայքի հիշատակություն տեղ գտնել չէր կարող, որովհետև հասկանալի պատճառներով այն պետք է վերագրվեր Արամի բուն երկրին: Երկրորդ նախադասության մեջ նույնքան անբացատրելի է «զարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ այլ և Երրորդ և Չորրորդ Հայք» արտահայտությունը: Ան հասկանալի է, թե ինչո՞ւ պատմիչը պետք է այդպես իրարից անջատեր առաջին երկու և վերջին երկու Հայքերը: Մեր պատկերացմամբ բնագրում բնավ էլ չի եղել «այլ և Երրորդ և Չորրորդ Հայք» հատվածը, որն ավելացվել է Խորենացու երկը հետագա դարերում խմբագրելիս: Խորենացու ժամանակ իրոք գոյություն ունեին Առաջին և Երկրորդ Հայքերը, որոնք և տեղ են գտել «Պատմութիւն Հայոց»-ի մեջ: Հիշատակության առաջին մասը, որտեղ հիշատակվում են Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերը, սկզբնապես եղել է «Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանսն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք», որին խմբագիրները հետագայում ավելացրել են 3 Հայքերի անվանումները: Դժվար չէ կռահել, որ խմբագրությունը կատարվել է երկու փուլով: Առաջին շրջանում ավելացվել են Երկրորդ Հայք և Երրորդ Հայք անունները, որովհետև խմբագիրները միայն դրանք էին համարում Արամի բուն սահմաններից դուրս գտնվող երկրամասեր: Սակայն ավելի ուշ, երբ Չորս Հայքերի գաղափարը ուժեղ նստած էր մարդկանց ուղեղների մեջ, խմբագիրներից մեկը, առանց էության մեջ խորամուխ լինելու, ավելացրել է «այլ և Չորրորդ» արտահայտությունը:

Երիմենա-Արամանին հիմք դնելով հանդերձ նոր հարստության, ինչպես հատուկ է այլ գահակալներին ևս, որոնք ամեն գնով ձգտում են օրինականություն հաղորդել իրենց իշխանությանը, ամենայն հավանականությամբ իրեն հայտարարել է Վանյան թագավոր: Երիմենայի հաջորդներն արդեն պաշտոնապես կրում էին Վանյան արքայատոհմի անուններ, չնայած իրականում այլ անուններ ունեին: Նրա որդին, որ մեզ հայտնի է Ռուսա Գ անունով, թողել է մի քանի սեպագիր արձանագրություններ, որոնք պատմում են Արգիշտիխինիլիում և Էրեբունիում կառուցված հացահատիկի պահեստների և Խալդի աստծուն բրոնզե վահաններ նվիրաբերելու մասին[159]: Մեր կարծիքով, Ռուսա Գ-ն, որ արդեն Վանյան թագավոր չէր, նույնանում է Պատմահոր Հրաչյային, որին Խորենացու աղբյուրը համարում է Պարտատուա-Պարույրի որդի[160]: Անդրադառնալով Հրաչյայի գործունեությանը, Պատմահայրը գրում է. «Սա Հրաչեայ կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնպագոյն իմն լինելոյ: Առ սովաւ ասեն կեցեալ զՆաբուգոդոնոսոր արքայ Բաբելացւոց, որ գերեալ զՀրեայս: Եւ սորա ասեն զմի ի գլխաւորաց Եբրայեցւոցն գերելոց խնդրեալ ի Նաբուգոդոնոսորայ՝ Շամբաթ անուն, ածեալ բնակեցոյց յերկրիս մերում մեծաւ պատուով. և ի սմանէ ասէ պատմագիրն լինել զազգն Բագրատունեաց, և հաւաստի է»[161]: Ռուսա-Հրաչյայի առնչությամբ, ըստ մեզ, մի շատ արժեքավոր տեղեկություն է պահպանել Հովհաննես Դրասխանակերտցին այն մասին, որ «Ասքանազեայ՝ որ նախ զմերազնեայս յիւր անուն Ասքանազեան անուանեաց, զՍարմատս նմա պայազատէր, իսկ Ռիփատայ զՍորամատս: Իսկ Թորգոմայ զմերազնեացս սեպհականեալ, յորում տիրեալ՝ զԱսքանազեանն նախաա-

159 Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи, էջ 288-290, 292-294 և այլն:

160 Մովսես Խորենացի, Գիրք Ա, գլ. ԻԲ /ԻԳ/:

161 Անդ:

նուանեալ յիւր անուն նուաճէր Թորգոմայ»[162]: Այս հաղորդումը, որը, լոկ պետք է զարմանալ, թե ինչ հրաշքով է պահպանվել, պարզ հավաստում է, որ սկզբում Հայաստանում իշխել է Ասքանազը, այսինքն սկյութական ծագում ունեցող ինչ-որ մեկը, որն այնուհետև պայազատում է սարմատներին, իսկ Հայաստանին տիրում է Թորգոմը: Սա հեռավոր արձագանքն է այն իրողության, որ սկյութների մեծ մասը Մադեսի և սկյութական մյուս առաջնորդների սպանությունից հետո հեռացավ Հյուսիսային Կովկասի տափարակները, որով Հայաստանում հաստատվում է Թորգոմյան ծագում ունեցող հարստություն: Անցումն այնքան արագ ու կտրուկ է կատարվել, որ հին ժողովրդական վեպը Թորգոմյան ծագում ունեցող էրիմենայի որդուն համարել է Պարտատուա-Պարույրի զավակ: Ռուսա անունը հավանաբար իրանական ծագում ունի և առաջացել է « arūs » կամ aurūs ձևից, որ թարգմանվում է «սպիտակ» կամ «լուսափայլ»[163]: Այս անունը հաստատորեն մտավ վանյան թագավորների տոհմական անունների շարքը Սարդուր Բ-ից հետո: Եթե *Հրաչեան Ռուսայի* ընկալման փորձ չէ, ապա պետք է ենթադրել, որ հայոց Հրաչյա անունը իմաստային առումով զուգորդվել է Ռուսային և Հրաչյան իրեն մատուցել է որպես վանյան Ռուսա Գ թագավոր: Հրաչյա-Ռուսա Գ-ին հաջորդել է Փառնավազը, որը Սեբեոսի «Պատմութեան» հին անվանացանկերի համաձայն «հնազանդեալ Նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն»[164]: Անկախ այն իրողությունից, ենթարկվել է Նաբուգոդոնոսորին Հրաչյայի հաջորդը թե՞ ոչ, կարևորն այն է, որ նա ժամանակագրորեն իշխել է բաբելական նշված թագավորի օրերում և ամենայն հավանականությամբ նույնական է Ռուսա Դ-ին: Ավելի ուշ

[162] «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղեմ, 1867, էջ 17-18:

[163] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. Ա, Երևան, 1955, էջ 279:

[164] Պատմութիւն Սեբէոսի, էջ 51:

արքայական գահի վրա ամրապնդված թորգոմյանները, երբ կարիք չունեին իրենց իշխանության օրինականությունը փաստելու համար ամեն գնով աղերսվել Վանի թագավորներին, Վանյան թագավորների անունով կոչվելու ավանդույթը մահացավ և դրա հետ էլ մեռավ իրենց համար անծանոթ լեզվով սեպագիր արձանագրություններ թողնելու արքունի սովորությունը:

Միքայել Չամչյանը, օգտագործելով մեզ անհայտ մի ինչ-որ ժամանակագրության տվյալները, փորձել է ի հակադրություն Խորենացու, որը խուսափել է ժամանակագրություն տալուց, մատուցել հայկյանների ժամանակագրությունը: Եթե այդ տվյալները իրենց մեջ որոշ ճշմարտություն պարունակում են, իսկ դրա հավանականությունը բնավ էլ չի կարելի ժխտել, ապա նոր հարստության ժամանագրությունը Արամ-Էրիմենայից մինչև Տիգրան Երվանդյան ունեցել է հետևյալ պատկերը. Արամ – ՃԸ /58/ տարի, Հրաչյա -ԻԲ /22/ տարի, Փառնավազ - ԺԳ /13/ տարի, Պաճույճ -ԼԵ /35/ տարի, Կոռնակ –Ը /8/ տարի. Փավոս –ԺԷ /17/ տարի, Հայկակ միւս –ԼՁ /36/ տարի, Երվանդ Սակավակյաց - Դ /4/ տարի, Տիգրան Երվանդյան –ԽԵ /45/ տարի[165]: Տարիների քանակը շատ ավելի է իրական ժամանակից, ուստի չի բացառվում, որ նշված անձանցից մի քանիսը եղել են պարզապես արքայազններ, որոնք երբևիցե չեն թագավորել: Ուստի, եթե փորձենք վերականգնել հայոց թագավորների ժամանակագրությունը և այդ սկսենք Տիգրան Երվանդյանից, որի թագավորությունն ակնհայտ է թե հայկական և թե օտար աղբյուրների համաձայն, կստանանք հետևյալ պատկերը: Տիգրան Երվանդյան /569-524/, որովհետև որոշ տվյալների համաձայն, նա մահացել է Կյուրոս Մեծի /558-529/ մահվան հինգերորդ տարում, Երվանդ Սակավակյաց /573-569/, Հայկակ Մյուս /609-573/, Փավոս

[165] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 76, 101-102, 120:

/626-609/, Կոռնակ /634-626/, Պաճույճ /669-634/, Փառնավազ /682-669/, Հրաչյա /704-682/: Արամի տարիները, որ նշված ցուցակի համաձայն 58 /ԾԸ/ են, մենք չենք տալիս այն պարզ պատճառով, որ նրա կերպարի տակ թաքնված են առնվազն 2 դեմք՝ Արամը որպես Նինոսի ժամանակակից և Էրիմենան՝ Մադես Նյուքարի հաղթողը: Եթե նրա փոխարեն տանք Պարույրի իշխանության տարիները, ինչպես ցուցակում նա նախորդում է Հրաչյային, ապա հայոց «առաջին» թագավորի իշխանության տարիները կլինեն 747-704, որովհետև նա էլ իշխել է իբրև ԽԳ /43/ տարի [166]: Այս հաշվարկներն անշուշտ կատարել է նաև Մ.Չամչյանը, որի համաձայն Պարույրը մահացել է Հռոմի հիմնադրման 50-րդ տարում: Սակայն հերիք է դիմել թեկուզ բաբելական թագավորների ժամանակագրությանը, որպեսզի պարզ դառնա, որ ստիպված ենք այդ ցուցակից դուրս հանել մի քանիսին: Էլ չենք ասում այն մասին, որ մեր կատարած քննությամբ նշված ժամանակաշրջանը սահմանափակվում է 631 և թերևս 524 թվականներով: Այն իրողությունը, որ Մյուս Հայկակը մասնակցել է Նաբուգոդոնոսորի դեպի Երուսաղեմ կատարած արշավանքին, պարզորոշ ցույց է տալիս, որ եթե նա հայոց թագավորի որդին չէ, ապա պետության նշանավոր զորավարներից է, ուստի նրա ժամանակը պետք է համընկնի Փառնավազի կամ էլ Հրաչյայի դարաշրջանին, քանի որ հենց նրանք են համարվում Նաբուգոդոնոսորի ժամանակակիցներ: Այդ նույն ձևով ցուցակից պետք է հանել Փավոսի, Կոռնակի և Պաճույճի անունները, որոնք ցուցակում գտնվում են Փառնավազի և Երվանդի միջև: Եթե մեր մոտեցումը ճիշտ է, ապա այժմ Երվանդին պետք է նախորդի Փառնավազը /586-573/, Փառնավազին՝ Հրաչյան /608-586/, Հրաչյային՝ Էրիմենա-Արամանի-Արամը /631-608/: Այժմ տոհմածառը բավականին կուռ է, որովհետև համընկնում է սկզբնաղբյուրների բոլոր

[166] Մ.Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, էջ 101:

տվյալներին: Հրաչյան և Փառնավազը իրոք ժամանակակից են Նաբուգոդոնոսորին, որն իշխել է 604-562 թվականներին, Երվանդը և Տիգրան Երվանդյանը՝ Մարական Աժդահակ թագավորին /585-550/: Դժվարություն է հարուցում այն հարցը, որ Խորենացին Հրաչյայի անվան հետ է կապում Շամբաթ Բագրատունուն Հայաստան բերելը, իսկ Սեբեոսը՝ Փառնավազի: Տեսականորեն դժվար է ասել, թե որն է ճիշտը, որովհետև այդ կարող էր կատարվել թե մեկի և թե մյուսի օրոք: Սակայն Մյուս Հայկակի մասնակցությունը Նաբուգոդոնոսոր թագավորի դեպի Երուսաղեմ կատարած արշավանքին մտածել է տալիս, որ թերևս այդ կատարվեց Հրաչյայի իշխանության տարիներին, որովհետև Երուսաղեմի արշավանքը եղավ 587 թվին և քաղաքը 586 թվին գրավվեց բաբելական զորքերի կողմից, կողոպտվեց, ավերվեց, իսկ բնակչությունը բռնագաղթեցվեց Բաբելոն[167]: Ժամանակագրորեն դեպքերը համընկնում են Հրաչյայի ժամանակներին, սակայն Մյուս Հայկակի, որն ամենայն հավանականությամբ Փառնավազի տղան էր, մասնակցությունը Երուսաղեմի արշավանքին պատճառ է դարձել, որ Բագրատունիների Հայաստան բերվելը կապվի Փառնավազի գործունեության հետ: Եթե Հրաչյայի, Փառնավազի, Երվանդ Սակավակյացի և Տիգրան Երվանդյանի գահակալության թվերը գոնե մոտավորապես ճիշտ են, իսկ վերը կատարված քննությունն ըստ էության փաստեց այդ, ապա Արամ-Էրիմենայի գահակալությունը տևել է իրոք 23 տարի՝ 631-608 թվականները: Մյուս Հայկակի մասնակցությունը Երուսաղեմի արշավանքին վկայում է այն մասին, որ ամենայն հավանականությամբ նա իրոք Փառնավազի տղան է: Թերևս նրա եղբայրներն են Պաճույճը, Կոռնակը և Փավոսը: Համենայն դեպս այդպես կարելի է եզրակացնել ցուցակի դասավորությունից: Սակայն չի բացառվում, որ նշված դեմքերը ցուցակի այս մասում պատահաբար են հայտնվել և նրանց

[167] "Всемирная история", том I, էջ 562:

պետք է փնտրել մեկ այլ դարաշրջանում, ինչպես Երիմենա-Արամանիի որդիներ Ամպակը և Շավարշը, որոնք հայտնվել են ցուցակի իրենց ոչ ժամանակակից գործիչների հարևանությամբ:

Չշարունակելով այլևս հայոց ազգապետերի ցուցակի քննությունը, որը շատ ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրություն է պահանջում և, եթե ճիշտը խոստովանենք, առանձին լիարժեք հետազոտության խնդիր է, կրկին վերադառնանք հայ-մարական հարաբերություններին: «Կյուրոպեդիա»-ի համաձայն, հայոց թագավորը պարտվել էր Աժդահակից և փորձել էր ապստամբություն բարձրացնել Կիաքսարի դեմ: Մենք բավական հիմնովին ցույց տվեցինք, որ երկու Կիաքսարների գոյությունը, ինչպես նաև Կյուրոս Ա-ի և Կյուրոս Բ Մեծի իրար հետ շփոթելը Քսենոփոնին ստիպել են դիմելու հակասությունների լուծման նշված միջոցին: Սակայն այն հանգամանքը, որ դեպքերի մեջ է առնված նաև Տիգրանը, որ անտարակույս VI դարի անձնավորություն է, մտածել է տալիս, թե VI դարում հայերն իրոք փորձել են ազատվել մարական գերիշխանությունից: Դժվար է ասել, թե ի՞նչն է ստիպել հայերին ապստամբության փորձ անելու հենց 573-569 թվականների միջոցին: Թերևս խթան է հանդիսացել Մարաստանի անկայուն քաղաքական վիճակը, որտեղ տոհմա-ցեղային ավագանին մեծապես խանգարում էր ուժեղ պետության և կենտրոնացված իշխանության առաջացմանը: Այն այնպիսի ուժ էր իրենից ներկայացնում, որ Քաղդեական Բաբելոնիայի թագավոր Նաբոնիդն իր արձանագրություններից մեկում մարական ազնվականության ներկայացուցիչներին պատվում է «թագավոր» տիտղոսով[168]: Ավելի ուշ, երբ Կյուրոսը հաղթեց Աժդահակին և վերջ տվեց մարական պետությանը, մարական թագավորին արջի ծառայություն մատուցեց երկրի ազնվականությունը, որի նշանակալից մասն անցավ Կյուրոսի կողմը: Ըստ երևույթին VI դարի 70-ական թվականների վերջին Մարաստանի ներքաղաքական սրված կացությունը հայոց արքունիքի կողմից հարմար առիթ է համարվել մարական գերիշխանությանը վերջ տալու համար: Ենթադրաբար ապստամբությունը դնում ենք 570 կամ անգամ 569 թվականին և միանգամայն հավանական է, որ Երվանդ Սակավակյացը ապստամբության անհաջող փորձից հետո շատ չանցած մահացել է: Ապստամբությունը ճնշվում է Կյուրոս Բ Մեծի կողմից, որն այդ ժամանակ դեռ Անշանի թագավոր չէր, այլ թագաժառանգ: Ամենայն հավանականությամբ Կյուրոսն էլ, Տիգրան Երվանդյանն էլ երիտասարդ տարիներին կայսրություններում ընդունված կարգի համաձայն, ուղարկված են եղել մարական արքունիք դաստիարակվելու համար, որը և դեռ երիտասարդ հասակում մերձեցնում է այս երկու նշանավոր դեմքերին: Երբ Տիգրանի հայրը՝ Երվանդը, պարտվեց Կյուրոսին և գերի ընկավ նրա ձեռքը, թագաժառանգը՝ օգտագործելով իր հին բարեկամությունը պարսից արքայազնի հետ, կարողացավ պատվավոր հաշտություն կնքել, ճանաչելով միայն մարական գերիշխանությունը և պարտավորվելով վճարել որոշ քանակությամբ /100 տաղանդ/ հարկ և տրամադրել պատերազմների ժամանակ բանակի կեսը [169]: Անշուշտ պատվաբեր պայմանագիրը արդյունք էր ոչ միայն Կյուրոսի և Տիգրանի բարեկամության, այլև այն հանգամանքի, որ երիտասարդ արքայազնը պատրաստվում էր ապստամբել մարական տիրապետության դեմ, ուստի հենց սկզբից հանձին Հայաստանի կամենում էր ունենալ բարեկամ երկիր: Առավել ևս, որ Հայաստանն այդ շրջանում շոշափելի ռազմական ուժ էր Առաջավոր Ասիայում, որի հետ հաշվի չնստել չէր կարելի: Համենայն դեպս, հետագա դեպքերը ցույց են

[168] Անդ. էջ 593:

[169] Ըստ երևույթին նշված հաշտությամբ վերահաստատվում էին Կիաքսարի օրոք կնքված հաշտության պայմանները:

տալիս, որ հայկական զորաբանակները Կյուրոսի բանակում իրենց թվաքանակով երրորդ մեծ ուժն են:

Կյուրոսը ապստամբություն բարձրացրեց 553 թվին: Մինչ այդ Աժդահակը, ըստ երևույթին փորձել է ոչնչացնել Տիգրան Երվանդյանին, վախենալով Կյուրոսի և նրա հնարավոր դաշինքից: Նա անկասկած հենց այդ նպատակով ամուսնացել է հայոց թագավորի քրոջ հետ, սակայն իր ծրագիրը կենսագործել չի կարողացել: Խորենացու տվյալները մեզ հիմք են ծառայում ենթադրելու, որ չնայած ապստամբության գլխավոր կազմակերպիչը Կյուրոս Մեծն էր, այնուամենայնիվ ըմբոստության դրոշն առաջինը բարձրացրել է հայոց թագավորը: Երբ Մարական թագավորությունը տապալվեց, հայոց թագավորը իրավունք ստացավ Հայաստան բռնագաղթեցնելու մարական Աժդահակ թագավորի ընտանիքը առաջին կնոջ Անույշի և 10000 ժողովրդի հետ: Հավանաբար Կյուրոսն այս ճանապարհով ոչ միայն վարձահատույց էր լինում իր դաշնակցին, այլև Մարաստանից դուրս էր բերում թագավորական ընտանիքի անդամներին, որոնք մշտապես կարող էին վտանգ սպառնալ պարսից տիրակալին և ապստամբություններ բարձրացնել նրա դեմ:

Հայկական զորքերը մասնակցեցին Կյուրոսի արշավանքներին և գործոն օժանդակություն ցույց տվեցին պարսից թագավորին գրավելու Լյուդիական թագավորությունն ու Քաղդեական Բաբելոնիան: Թովմա Արծրունին, որին ծանոթ են եղել ինչ-ինչ մեզ անհայտ աղբյուրներ, հայտնում է, որ Լյուդիայի դեմ պատերազմին Տիգրան Երվանդյանը ուղարկում է իր թագավորության հարավային և հյուսիսային զորաբանակները Քսերքսեսի և նրա որդի Արշեզի ղեկավարությամբ, որոնց հաջողվում է ծերբակալել Կրեսոսին և հանձնել Կյուրոսին[170]: Արծրունյաց պատմիչի համաձայն,

[170] «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ», Կոստանդնուպօլիս, յՕրթագիւղ, 1852, էջ 40-41:

հիշյալ Քսերքսեսը Ադրամելեքի և Սանասարի սերնդից էր, որը դեռևս Աժդահակի և Կյուրոսի պայքարի ժամանակ, իմանալով, որ Աժդահակը կամենում է Ասորեստանի չորրորդ մասը Կյուրոսին կաշառք տալու միջոցով նրան դուրս բերել հակամարական պայքարից, շտապ տեղեկացնում է Տիգրանին և իբր դրանով կանխում Աժդահակի քաղաքական խաղը[171]: Իրենց ծառայությունների դիմաց, մասնավորապես Կրեսոսին ծերբակալելու համար Քսերքսեսը և նրա ժառանգը պարգև ստացան «զՏմորիս ամրոցաւն և զգետափնեայսն Նինուէի»[172]: Պատմիչը հավաստում է, որ հիշյալ անձինք մասնակցում են նաև Քաղդեական Բաբելոնիայի դեմ կռվին և Բաբելոնը գրավելուց հետո Երուսաղեմ են առաջնորդում հրեա գաղթականությանը[173]:

Հայաստանը, Կյուրոսի ռազմական հաջողություններին զուգընթաց, աստիճանաբար ներառնվում էր Աքեմենյան Պարսկաստանի ազդեցության ոլորտը, որը սակայն Կյուրոսի կենդանության օրոք առանձնապես չէր զգացվում նրանց անձնական բարեկամության պատճառով, սակայն անմիջապես զգալ տվեց Կյուրոսի մահից հետո: Այդ պատճառով էլ պետք է ենթադրել, որ Կյուրոսի օրոք Պարսկաստանի և Հայաստանի փոխհարաբերություններն ավելի շուտ դաշնակցային էին, քան ենթակայական, որտեղ վերջինս հանդես էր գալիս կրտսեր դաշնակցի դերում, չնայած հայկական աբյուրները այդ դերը հատկացնում են Կյուրոսին: Ուստի պատահական չէ, որ հայոց ժողովրդական վեպը Տիգրան Երվանդյանին և Կյուրոս Մեծին պատկերում է որպես դաշնակիցներ: Ըստ երևույթին չպետք է մոռանալ երբեք, որ պատմությունը կերտում են մարդիկ, որոնց ան-

[171] Անդ, էջ 38-39:

[172] Անդ, էջ 41:

[173] Անդ, էջ 41-42: Պատմիչի Քսերքսեսը, որ նույն Արտաշես անունն է, ավելի ուշ նույնացվել է հայոց թագավոր Արտաշեսի հետ, որին էլ վերագրել է Կրեսոսի ծերբակալությունը: Նշված խնդիրը առանձին ուսումնասիրություն է պահանջում:

հատականությունը և զուտ անձնական փոխհարաբերությունները երբեմն ավելի կարևոր դեր են խաղում այս կամ այն խնդրի լուծման գործում, քան չոր պետական շահերը: Որպես դրա օրինակ կարելի է հիշել ռուսական ցար Պյոտր Գ-ի կողմից Յոթնամյա պատերազմից դուրս գալը, որը փրկեց պրուսական Ֆրիդրիխ Բ թագավորին ռազմական աղետից: Ռուսական պետության շահերը բնավ չէին պահանջում այդ, սակայն ռուսական ցարի դեպի Ֆրիդրիխ Բ-ն ունեցած հիացմունքն ու համակրանքը պատճառ դարձան պատերազմից Ռուսաստանի դուրս գալուն, իսկ նրա դաշնակիցները մենակ մնալով այլևս չկարողացան հաղթել պրուսական նշանավոր գահակալին:

Հայաստանն, ըստ երևույթին, իր կրտսեր դաշնակցի դերը պահպանեց Տիգրանի կենդանության շրջանում, սակայն նրա մահից հետո Հայոց թագավորությունը որոշակիորեն մաս կազմեց Աքեմենյան պետության: Վերածվելով Պարսից կայսրության սատրապության, Հայաստանը պահպանեց իր ներքին ինքնուրույնությունը և արքայական հարստությունը, որը վերականգնեց երկրի անկախությունը Ալեքսանդր Մակեդոնացու դեպի Արևելք կատարած արշավանքների շրջանում: